

9(47.925)  
P-22



ՔԱՋՐԵՐՈՒՆԻ

ԲԱՂԱ ԳԻՒԼԻ ԱԻԵՐՈՒՄԸ



(Արտատպած «Արարատ» ամսագրից)

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոսոյ Ս. Էջմիածնի

1910

5. OCT 2011


9247.92.77  
F-22  
44

ՔԱՂՔԵՐՈՒՆԷՒ

ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱԻԵՐՈՒՄԸ

1007  
399 32433

(Այտատուած՝ «Արարատ» աստագրից)



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տարրան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1910

29 JUL 2013

# ԲԱԳԱ ԳԻՒՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

## Ա. Զ. Գ.

1905 ու 1906 թուականների Հայ-Թրքական ընդհարումները յանկարծակի ծնունդ չէին, սյլ հասարակային կաղմալուծութեան և քաղաքական կեանքի արտայայտութիւններ: Գրանց լուսաբանելը ապագայ պատմաբանի գործն է որ ներկայ սերնդից կպահանջի կարելոյն չափ շատ պատմական նիւթերի մտասկարբարումն: Այժմ, երբ այդ չարաբաստ ընդհարումները վերջացել են և մտքերը հանդարտել՝ մեզ, ահանատեաներիս և ժամանակակիցներիս վերայ պարտք կայ անկողմնապահութեամբ ամփոփել և գասաւորել նիւթերը ապագայ պատմչի գործը զիւրացնելու համար:

Ձեռնարկելով մի շարք ընդհարումների ժողովածու՝ աշխատութեանս հեղինակը աչքի առաջ է ունեցել վերոյիշեալ նպատակը:

Ներկայումս տալով Բագայի աւերման պատմութիւնը, հեղինակը հարկ է համարում ծանուցանել, որ նա իւր նիւթերը ժողովել է 1906 ու 1907-ին անմիջապէս այն՝ ոչ սակաւաթիւ, արժանահաւատ անձինքներէց, որոնք ենթարկուել են աղէտին ու ահանատես են եղած:

Նիւթերը արձանագրուած են համեմատական վերատուգութեամբ և կարելոյն չափ անկողմնապահութեամբ:

Հեղինակ

1909 թ. Յուլիս. Բագու.



Բաղա գիւղի դիրքը. Բաղի ձորը. Խօսկան քարը. Բիւնները.  
 Գիւղական նանապահները. Նկեղեցին. Ժողովրդի կարողութիւնը.  
 Գիւղացնեստութեան նիւրե, Արհեստներ. Լուսաւորութիւն.

Գանձակ քաղաքից դէպի արեւմուտք, Գանձակի դաւառում, աշխարհագրական 16° 26' հիւսիսային լայնութեան և 41° 13' 30'' արևելեան երկայնութեան կէտում գրուած է Բագա գիւղը մի լայնանիստ, չափաւոր բարձրութեան հարթավայրի վերայ, ոչ հոչւում է «Արղարակ»: Գիւղի արեւմտեան կողմում՝ ձորի մէջ հոսում է դէպի հիւսիս, դէպի Կուր գետի աւազանը Բագա փոքրիկ գետակը, որ ապա ընդունում է Չագեամի գետ անունը:

Երկրի փշոտ մակերևոյթը աստիճանաբար սարալանջի փոխուելով՝ իջնում է գիւղից դէպի գետակը՝ նախ կազմելով մի խոր ձոր Խագնի ձոր—անունով, յետոյ՝ գետակի աջափնեայ լայնատարած դաշտի երկարութեամբ տարածւում են գիւղապատիան խաղողի և թթենիների բազմաթիւ այգիները, իսկ գետի վրայ տանումէլ շարէշար ջրաղացներ:

Գետակի ձախ ավում՝ Գիւրջա (ցից) սրածայր բարձր բլուրի ստորոտում գետեղուած է նախկին, հին դարերի Բագա գիւղը, ուր մշտապէս բնակւում են բազացի մի քանի գերգատաաններ՝ իբրև շերամապահներ և անասնապահներ և այդ պատճառով հին գիւղն աւելի նման է բինայի:

Բագա գետակի ձորը երկու կողմից էլ ժայռոտ է, դժուարամաշելի, շատ տեղ անյարմար անցուղարձի ու անառով ծածկուած: Մի տեղ գետակի հոսանքը անհամար ժամանակները ընթացքում քերել, տաշել մաշել է մի ահագին ժայռ, կազմելով այդ տեղ մի ջրվէժ: Կիտուած, խորացած ժայռի ուղղահայեաց պատերն անդրադարձնում են մարդու ձայնը և այդ պատճառով տեղական ժողովուրդը միշտել է նրա անունը Խօսկան քար: Նա այգիներից վերև է:

Անասնապահութեան համար յարմարին տեղերը Բագայում, նոյնպէս և այլ գիւղերում, կոչւում են Բինայ: Իւր շրջակայքում Բագա գիւղն ունի մի քանի այգուիսի բնաներ Խրանց դոմերով, աներով, և անասնապահութեան համար կա-

ընտր յարմարութիւններով: Այսպէս օրինակ Խօսկան քարի մօտ Սուրբ Մինասի մատուռից, ըստ բազալցոց Ման դուռ, ոչ հեռու կան Կապի գոմեր: Մի այլ կողմի վերայ գրուած է Քեաման դար բնան, որ միանում է Բադա գիւղի հետ Գոթիկոզ դօլամ (Իննը կեռման) կոչուած ճանապարհով Գիգջա ըլուրի լանջով: Ապա գալիս է Ղըղ—Ղալայ (աղջկայ բերդ) բնան: Սա մի փոքր բերդ է քարաժայռի գագաթին, աղիւսէ պատերով, աւերակ քարաշէն տներով, քայքայուած ջրամբարով, որ իւր ջուրը կաւէ խողովակներով ստանալիս է եղել Յամաք ձոր անուն տեղից Անձղահորի քօլ գեղեցկատեսիլ անտառի մօտ Քեամանդար բնայի մերձաւոր սահմանում:

Սոյն այս Քեամանդարն ընկած է Բադա գիւղի արեւմտեան կողմում և ունի իւր շուրջը լայնասիրտ վարելահողեր—վարդապետի հողեր—այժմ պետական, իսկ երբեմն աւանդաբար Խորանաշատ մենաստանին պատկանող, որ մի կողմից տարածւում է մինչև Կալքար արքունի անտառը, իսկ միւս կողմից միանում է ընդարձակ դաշտի հետ, ուր սիւռուած են հինաւուրց հանդստարաններ և մատուռներ և սրանց մէջ կանգնած է սաղարթալից, հաստարմատ դարաւոր կաղնի ծառ՝ իբրև ուխտի և տօնախմբութեան տեղի Բադայի բնակիչները համար:

Գիւղից դէպի արևելք սիւռուած են բազալցոց այգիները, պհեղներն (պահէզ—բոստան) ու բնաները. այդ տեղից հոսում է գիւղի աղբիւրներից կաղմուած մի առուակ Գիքջի ձորով մինչև Ջառչի բնան, 4-5 վերտի վերայ, որ միանում է գիւղի հետ Իրիցի ճամփով:

Գիւղի հիւսիսային կողմում բացուած լայն դաշտը հեռուից երևցնում է Ջադեամի շրջակայքը, Բագու Թիֆլիզ երկաթուղու գիծը, Կուր գետի աւաղանը: Գիւղից դէպի երկաթուղի Փալան թեօբան դաշտավայրով ձգւում է լայն ճանապարհը, որ կոչուած է Մօլլա—Մանսուր, երկու կողմից ունենալով Մուսուր թոռ բարձր սարը հին դիւղաակերով և հին հանդստարանով, Բադերի գլուխ սարը, Թաթաուս թրքաբնակ գիւղը, Գեօգդաշ քարաժայռը և Գոմերածոր բնաները:

Գիւղի շուրջը, բացի վերոյիշեալ տեղերը, տարածւում են նաև ընդարձակ լայնածաւալ վարելահողեր, խոտհարքներ, արօտատեղեր, որոնք լի ու լի հնարաւորութիւն են առաջ բազալցոց պարապել ամենահարուստ անասնապահութեամբ, առանց երբէք բարձրանալու ամառային արօտատեղեր:

Նոր կամ մեծ Բադան Ղըղարակի բարձրութեան վերայ

կաղմուել է մօտ երկու դար առաջ, ըստ որում բնակիչները բաղմանալով թուով ու բարօրութեամբ՝ չէին կարող զետեղուել ձորի հին, սահմանափակ գիւղում, ուստի բնականաբար պէտք է տեղափոխուէին այժմեան յարմար տեղը, որ տարածութեամբ, բարձրադիր հարթութեամբ, աղբիւրները առատութեամբ և այլ առաւելութիւններով աւելի համապատասխանող է:

Գիւղի մէջ գործածական աղբիւրները սրանք են.

Վերի աղբիւր կամ Շահբաղի, որ շինած է խողովակով ու տաշտով և առիւս է երեք մատաչափ հաստութեան ջուր: Սրա մի մասը բազալցի հանգուցեալ Արշակ Ծերատեանցն իւր ծախքով տարել կախել է գիւղական եկեղեցու մօտ հասարակաց գործածութեան համար. 1894 թուականի յունուարի 6-ին սոյն աղբիւրի վրայ կաղմել է Պօղոս Ծերատեանցը հետեւեալ արձանագրութիւնը:

«Այս աղբիւր յորդ և մշտաբուզիս, որ է քաղցրիկ յոյժ սաւնորակ, նուիրում եմ իմ հայ եղբարց Բադա գիւղիս քրանավաստակ որ ես Պօղոս Ծերատեանցս անուամբ Արշակ Ծերատեանցի, Նորա և իմ սնպհականից այս յիշատակը կանգնեցի. հանգուցելոյն ձեր մողթանքում ընթերցողացդ յիշել խնդրեմ, արժան լինել անանց կեանքում նոյնպէս և ձեզ ձեր անցելոց

18<sup>6</sup>94 ամի»:

Առուշանի աղբիւր, որ բաւականին բարակ է:

Մուսի աղբիւր կամ Միջի աղբիւր, փայտէնաւաղով հոսում է երեք մատաչափ հաստութեամբ: Սա իւր համեղութեամբ ամենից առաջնակարգն է համարուում:

Ծերատիւն աղբիւր շինած է նախակով, բայց ջուրը բարակահոտ է:

Բնական միւս բերքերից յայտնի են ներկի համար պետանացու կարմիր կաւ գիւղի հարաւային կողմում. սպիտակ կաւ՝ Նովերայ քօլում շէկ հողերի գլխին, գիւլ՝ (ճարպանման կաւ) որ թուրք աղբաբնակութիւնը գործ է ածում սապնի փոխարէն, քարահանք՝ շինութեան համար: Ամենազլխաւորը գիւղի հիւսիսային կողմում բաղալտի քարահանքն է, որից

ստացւում են պատուական ջրադացաքարեր: Բարահանքի տեղը հոչւում է Ղարա-թաջ (սե թագ):

Անցնենք այժմ գիղի հասարակաց հարստութեանը և անտեսական բարօրութեանը:

Մինչև 1883 թիւը գիւղական ժամասացութիւնը կատարւում էր հին փոքրիկ եկեղեցում, որի փոխարէն յիշեալ թուականին հասարակութիւնը յոյն վարպետի ձեռքով, 8000 ռուբլի ծախքով, շինեց նորը, որ շուտով քանդուեց ու հասարակութիւնն ստիպուած եղաւ փայտէ կարկատանով հինը յարմարեցնել ժամասացութեան: Սակայն սա էլ իսպառ կողոպտուեց ներկայ աւերման ժամանակ: Թաթար հրոսակները կոտորատել են խաչկալը, քանդել են բեմը, աւազանը (գանձ գտնելու համար), տարել են զանգերը, դռները, պատահանները, անօթեղէնները, վարագոյրը, քշոցները, բուրվառները, մինչև անդամ դրեանքը: Վերջիններեց, իբրև կարծես աղետալի օրերը յիշեցնելու, մնացել է միայն մի ձեռագիր աւետարան քրքրուած, Յոհաննու աւետարանը, որի յիշատակարանից երևում է, որ Արարատեան աշխարհի՝ Ազոտեու նահանգի Տանաղուան գիւղի սաղմոսերգութեանայ Վասպարը և իւր եղբայր Ելիզբարը արտագրել են տուել Յոհաննէս քահանայի ձեռով ՌձԻ (1120—1671) հայոց թուին, Պարսից Շահսէֆի թագաւորի, Յակոբ կաթողիկոսի և Բջնոյ քաջ հռետոր Մովսէս արքեպիսկոպոսի օրով: Եւ Վասպար քահանան բարի ցանկութեամբ կտակել է, որ նուիրած այս աւետարանը, իբրև յիշատակ, յաւիտեան մնայ Տանաղուան գիւղի եկեղեցում... Բայց արժանայիշատակ քահանան կարող էր արդեօք մտքովն անցկացնել՝ թէ իւր սրբանուէր աւանդը Տանաղուանից կրնին Ռազա գիւղը և 123 տարի յետոյ պատառ պատառ կլինի թուրք հրոսակների ձեռքով:

Բազայի աւերուած եկեղեցին իւր ծխատէր Վեորոպ քահանայի միջոցով կարողացաւ ձեռք բերել 1906 թուին Բագւում, նուիրաբար, մի քանի կարևոր անօթեղէններ, սպաններ, պատկերներ և զգեստներ: Այսպէս՝ Լիւզովիկոս Սարգստանը մի արծաթեայ ոսկեզօծ սկիհ, Տիկին Մայիլեանը նուիրեց սուրբ Աստուածածնի մեծագիր պատկեր, Յակոբ Մանգասարեանը— խաչվառ, Մկրտիչ Քալանթարեանն ու իւր եղբայրը—Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մեծագիր պատկեր, Փերագեանցը—մի բուրվառ, Բագուայ հայոց եկեղեցին—երեք հատ շուրջառ, երեք փորուրար և այլն:

Գիւղի շուրջը սփռուած են հին գիւղատեղեր, գերեզմաններ, հողի տակից դուրս են դալի թոնդերներ, կաւէ ամաններ, զանազան ուղղութեամբ և խորութեամբ տարած աղբիւրի

կաւէ խողովակներ, բրուանոցի և դարբնոցի հետքեր և այլն և այլն: Այս հնութեան հետքերը ցոյց են տալի, որ դարեր առաջ եղել է այստեղ բնակութիւն և, ով գիտէ, ի՞նչ արհաւիրքներ է ենթարկուել զանազան ժամանակներում:

Հին շերմաքարերի արձանագրութիւններից մինը, որ եղածները մէջ ամենահինն է երևում, գրուած է հայոց ՌԻ (1020—1571) թուին, կամ 337 տարի մեզնից առաջ: Ափոստ, որ արձանագրութիւնը եղծուած է: Սակայն քարի ճակատին երևում է հետևեալ նկարը: Մի կանգնած կին, բաց մազերը մի հիւսով կախուած մէջքի վրայ, օղակներն ականջներում, երկայն շապիկը կոճկած, սրա վրայից կարծ արխալուղը, ոտերին լալիչկներ, բազուկներին հագցրած է ապարանջան, ձախ ձեռք ծալած կրծքի վերայ, իսկ աջը մեկնած գէպի արծաթեայ սափօրը:

Սրանից յետոյ գալիս է Գիւլաբի մահարձանը, որ իբրև կանգուն խաչքար՝ բարձրութեամբ 2 1/2 արշին, լայնութեամբ մի արշին, կրում է հետևեալ արձանագրութիւնը. «Սուրբ խաչս Գիւլաբին և իւր կողակցին, կանգնեցի Սուրբ խաչս ես Բագուսարս և Միւրզէս կազմեցինք սուրբ խաչս թի: ՌԿԻ (1062—1613):

Սրանից 32 քայլ հեռու երկրորդ կանգուն խաչքարը 2 1/2 արշին բարձրութեամբ և 1 1/2 արշին լայնութեամբ, արևմտեան ճակատին կրում է «Սուրբ խաչս բարեխօս Սրապիտն քահանային և կողակցին Քամիարին. թվին հայոց ՌձԻ (1120—1671): Սոյն քարի արևելեան ճակատին «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ ես Նազրուխանս և որդիքս իմ մէլիք Գոնմաղ և պարոն Ղորկմաղ որդիք պարոն Հախնազարին որդոյ պարոն Նիսակին կանգնեաց ի սուրբ խաչս յիշատակ որդւոց իմոց Տէր Սերապիտնին»: Գիւլաբի անունից ծագում է Գիւլաբի հանգըստարան, Գիւլաբի գոմեր, Գիւլաբի բինայ և այլն:

Բագայի բարգաւաճումն արտայայտոււմ էր նաև նրա շարէշար՝ խնամքով կանգնեցրած միօջարի և երկյարկանի անբրից: Բագայի աների մեծ մասը ռուս գաղթականների աներն մնան, ծածկուած էր ճղօտով կամ խոտով, ուստի և զիւրավառ նիւթ էր հրդեհուելու և այրուելու: Վային և այլ շինութիւններ, այն է մարադներ, դռներ, շտեմարաններ, խանութներ, մասաններ և այլն, որոնք յարձակման երեկոյին զոհուեցին հրդեհին:

Ըստ պահանջման կառավարութեան, 1905 թուի մայիսին Բագայի հասարակութիւնը կազմել էր բնակիչների նորագոյն ամենաճիշտ ցուցակ, որից երևում է, որ յիշեալ թուին Բագայում եղել է 300 ծուխ, 1388 հոգի արական և 1225 իգական. իսկ նորածնունդ մինչև նոյն թուի դեկտեմբերի վերջ 100 հոգի

րնդամենը 2713 երկու սեռի բնակիչ, որոնց մէ մասը մշտական բնակութեան էր հաստատուել շրջակայ բնիւններում:

Այդ բազմաթիւ ժողովուրդը, շրջապատուած լինելով ևս առաւել բազմաթիւ թուրք շաղաքնակութեամբ, շնորհիւ իւր տոհմունիութեան, աշխատասիրութեան և հողի ու կլիմայի բարեբեր յատկութեան, կարողացել էր հասնել նախանձելի անտեսական բարձրութեան: Բաղայի նիւթական հարստութեան չափը մտաւորապէս որոշելու համար ապացոյց կարելի է բերել հետևեալ հաշիւը:

Բաղայի աւերումից յետոյ, Վովկասի բարձր իշխանութեան հրամանով, տեղական հաշտարար միջնորդ Իվան Պետրովը 1906 թուի Ապրիլի 10-ից մինչև 25, բազմաթիւ հայ և թուրք բնակիչներին ներկայութեամբ և մասնակցութեամբ կազմեց Բաղայի կրած վնասների, նոյնպէս և առանձնակի ծուխերի կրած կորստի ցուցակը, գնահատելով իւրաքանչիւր կորուստ կամ վնաս անների, շինութիւնների, մուրհակների, այգիների, անասունների և այլոց: Վնասի ընդհանուր գումարը, Պետրովի հաշուով, եղել է երկու միլլիոն երկու հազար երեք հարիւր (2,002,300) ռուբլի:

Այսպիսի գումար կարող է մեայն կէտը համարուել այն ահագին վնասների, որոնց ենթարկուեց թշուառ Բաղան իւր աւերման օրերում: Տասնեակ տարիներ իւր արիւն քրտինքով ձեռք բերած անտեսութիւնը կորաւ յաւիտեան մի գիշեր, մի քանի ժամի մէջ:

Գիւղատնտեսութեան ճիւղերից զարգացած էին 1, Գիւնեգործութիւնը. կային այնտեղ աւելի քան 200 այգի, որից ստացւում էր բաց կարմիր գինի նշանաւոր քանակութեամբ, որև սպառւում էր վեղրօն մինչև 1 ու 50 կոպ. ինչպէս գիւղում, նոյնպէս և շրջակայ հայ և ռուս գիւղերում. 2, Սղեհանութիւնը որ քաշում էին թիթից մեծ քանակութեամբ, 3, Շերամապահութիւնը, որով զբաղւում էր մօտ 100 տուն, և այնքան զարգացած էր, որ գուայնում էր իրանց պէտքերը, սակայն մշակւում էր ամենահին, տարրական ձևով, մեքենաների լիովին բացակայութեամբ, 4, Հողագործութիւնը, որ տալիս էր ցորեն, գարի, կորեկ և կտաւհատ, որից հայերը ձէթ էին հանում իրանց համար Սլաւեանկայ ռուս գիւղի մեքենաներով, 5, Մեղուաբուծութիւն, որով քչերն էին պարապում և ընդամենը մօտ 50 տուն և իւրաքանչիւրը հազիւ 10—30 փեթակ միայն էին պահում:

Ամենածաղկաճն անասնապահութիւնն էր, որովհետև իւրաքանչիւր տուն ունէր մինչև 100 գլուխ խոշոր անասունների

(կով, գոմէշ, եղ, և այլն) իսկ ոչխար 500—1500 գլուխ. գիւղք շրջապատող բազմաթիւ բնիւններն ապացոյց են անասնաբուծութեան զարգացման:

Արհեստագիտութիւնից շատ հետոյ ծաղկած է ոստայնանիւթիւնը, որով միահաւասար զբաղւած էին կանայք և աղամարդիկ և գործում էին կտաւ, ջեջիմ, թամբի ծածկոց, շապկացու, մետաքսէ ծածկոց և այլն: Այժմ գործում են միայն բրդէ շալ: Գերձակներն ունէին գիւղում մօտ 7—8 խանութ, դարբինները 6—7 խանութ, կօշիկակարները 10—12 խանութ, ձօն ու մուշտակակարներ 5—6 խանութ, ոսկերիչներ 3—4 խանութ, հիւսններ 10—12 հողի, որմնագիւղներ 7—8 հողի, քարահանքում քար կարողներ 6—7 հողի, ջրաղացաքար կարողներ 2 արա—թաջ քարահանքում մի քանի հողի, բրուաններ ու զուռնաչիւններ մի քանի հողի, սաղանդար բանաստեղծ 3 արութիւն 3 ոհաննիսեան—Չաղօղլի մականուանեալ, և այլ արհեստաւորներ և արհեստագիտներ:

Գիւղում կային նաև առևտրական խանութներ, մանրավաճառ 5 խանութ, ճոթեղէնի 8 խանութ, մտավաճառ-կապալառու մի խանութ և այլն:

Անտելիգետա դասակարգից կան երեք քահանայ, արհեստաւորաց դպրոցաւարտ և ուսուցչական դպրոցաւարտ մի քանի անձն, նոյնպէս և ոչ սակաւ գրագէտներ, ուսեալ առ ոտս քահանայից, ըստ որում գիւղն երբեք չէ ունեցել ծխական դպրոց, այլ ունէր միայն միդասեան կառավարչական դպրոց հասարակութեան հաշուով: Ստացւում էր մի օրինակ «Նոր Գար» և սրա գաղարկուց յետոյ—«Մշակ»:

Այս էր ահա Բաղայի անտեսական և կուլտուրական գրութիւնն երբ թուրք—հայկական ընդհարումը վերջ դրեց նրա բարգաւաճմանը, և Բաղան դժուար թէ 50—70 տարի այս օրից յետոյ կարողանայ հասնել այն բարգաւաճման աստիճանին, որի վերայ կանգնած էր նա իւր աւերման րոպէին:

Այս կարճաւատ տեղեկութիւններն անհրաժեշտ էին, որպէս զի ընթերցողը կարողանայ գաղափար կազմել թէ ինչ էր Բաղան այն չարաբաստիկ րոպէին՝ երբ նա ենթարկուեց անողորմ և անարգի անգառնալի օրոշման:

Բ.

1905 յուզիչ բուսականը, նախապատասխանները, Բեռուզ Աղայ Կարաբեկովի այցը Բաղային. Ալլահեար բեգ Զուլգազարովը եւ նրա հասարակաց գիրքը:

1905 թուի փետրվարեան արեւնահեղ ընդհարումն թուրքերն և հայերն միջև Բագուում հայ կեանքն մէջ յեղաշրջումն առաջացրեց, և այդ թուականը Անդրկովկասեան հայ ազգաբնակիւթեան համար մի յուզիչ և ցնցող տարն էր: Հասարակաց կեանքը դիւզերում և քաղաքներում անհարազդելի շարժման մէջ էր. մանաւանդ դիւզերում բնակչութեան երկտասարդ մասը արթնութեան մէջ էր: Ապագայի և այն մօտիկ ապագայի վերայ նայում էր խիստ խոփուազէմ, սպասում էր մըրկայոյզ փոթորիկի, որն խտութեան աստիճանը դեռ ևս մուծն էր, խաւար էր նրա համար իբրև մշուշով ծածկուած տեսարան:

Աւստի նա, այդ երկտասարդ մասը, անդադար երերման մէջ, ժողովներ էր կազմում իւրաքանչիւր գիւղում, խորհրդակցութիւններ էր կատարում, պատրաստութիւններ էր տեսնում, դիմադրելու թուրքերի յարձակմանը, որ վաղ թէ ուշ տեղի էր ունենալու, որով դոյութեան ու պատուոյ խնդիրը պէտք է առաջ գար և լուծուէր: Նա պատրաստուում էր կարծես զոհելու իւր կեանքն անգամ այդ դոյութեան և պատուոյ համար, որպէս զի ապացուցանի, թէ հայ ազգը այնպէս էլ թուլամորթ ու վախկոտ չէ, ինչպէս ուրիշները կարծում են. ցոյց տայ՝ որ եթէ մի ձեռքով գութանի մաճն է բռնում, գրեթէ ու ընդունակ է միւս ձեռքով իրան պաշտպանել:

Սահայն տեսածներն և գիտցածներն նայելով՝ ինքնապաշտպանութեան համար մտածող այդ մարդիկ մտքներով չէին անցկացնում թուրք հարեանին դարեւոր ռիսերիմ թշնամի կարծել և ձգտել նախայարձակ լինելու:

Ես ինքս անձամբ տեսել եմ երկու անգամ այդպիսի միահամուռ և համադիւզական ժողով և խորհրդակցութիւն օր ցերեկով՝ բացօդայի դաշտում: Այնպէս էր զգաստ և լարուած տեսածս դիւզական ժողովուրդը, որ եկեղեցու երկու երեք անգամ անհանոն (ոչ որպէս ժամահրաւէր) քաշած զանգի ձայնը լսելով՝ խիոյն հաւաքուում, խմբուում էր գիւղի հեռաւոր և մօտաւոր անկիւններից դէպի սրոշեալ ժողովատեղին... ուր խօսակցութիւնը պատուում էր միայն և միմիայն կազմ և պատրաստ լինելու ինքնապաշտպանութեան համար . . . :

Սահայն հասակաւորներից կային այնպիսիներն, որոնք շատ բանի անդիտակ՝ տհօժութեամբ էին նայում այդ իրարանցման վերայ, նախատում ու պախարակում էին երիտասարդների այս իրարանցումն. դրանք մինչև անգամ արգելք էին հանդիսանում նախապատրաստութեան դիմողներին, հաւատացնելով՝ որ 1825-27 թուի ռուս-պարսկական պատերազմից դէտք, քանի որ ռուսը տիրում է այս երկրին, լսուած ու տեսնուած բան չէ, որ սարբեր ցեղերի ժողովուրդները համարձակութիւն ստանան օր ցերեկով ձեռք բարձրացնելու իրար վերայ. սահայն այդ թերահաւատներն անգամ, նոյն իսկ հաւառակ իրանց կարծիքին դիտէին և տեսնում էին, որ թուրք ազգաբնակիւթիւնը փոխել է իւր յարաբերութիւնը հայերէ հետ, մի տեսակ խորթացել է, հեռացել է աշնայութիւնից, և ի բնէ զինուած լինելով՝ աւելի է զինուած:

Այս հասակաւորները դիմադրելու պատրաստութեան համար նւթական օժանդակութիւն զլանում էին, ոչ թէ ժլատութեան պատճառով, այլ որ հաւատ ունէին, թէ մի կողմից կառավարութիւնը, միւս կողմից կառուածատէր Ալլահեար բեկ Զուլգազարովը չեն թոյլ տայ, որ թուրքերը յարձակում գործեն:

Տարբարողաբար Բագայի պատրաստութիւնը կիսատ էր. չկար միութիւն, չկար մի գորեզ անձն, որ կարող լինէր գործի գլուխ կանգնելով միացնել բոլոր ուժերն ու խիստ կարգի տակ դնէր բոլոր հասարակութիւնը... Այս լարուած գրութիւնը տեսնելով երկատարդները, որոնցից ոմանք անձամբ տեսել էին Բագուի փետրվարեան և օգոստոսեան սարսափները, հետեւելով չարգախուցեցոց օրինակին՝ պատրաստ լինելը անհրաժեշտ էին համարում: Բայց Զուլգազարով Ալլահեար բեկը Բագայիներին հանգստացնում էր ասելով. «Բագան իմն է, Բագան ձեռքիցս չեմ դրել, Բագայիներն իմ հարազատներն են, օտար մարդ չի վատահանալ մօտենալ նրան և այլն»: Սոյն այս Ալլահեար բեկը 1905 թուի սեպտեմբերի 1 -ին, Ղազախի դաւառապետ Ա. Բուրլուկ մօտ, ճաշկերոյթի կենացների ժամանակ, հաւատացել էր դաւառապետին, որ իրանք բէկերը չեն թոյլ տայ, որ Բագայի շրջակայքում ընդհարում առաջանայ\*:

Տաք գլուխ երկատարդների լամբերը, «դաշնակցական» անունի տակ, որ շատ տեղ յառաջընթաց էին լինում գիւղական հասարակութիւնների մէջ, կազմակերպում էին նրանց, ծրագրեր էին տալի ու զեկավար էին հանդիսանում, ընդհա-

կառակը Բաղայն վերաբերութեամբ մեծ անհոգութիւն էին ցոյց տալի: Բաղան թողել էին տեղական բնակիչները կամքին: Նրանք միայն մի անգամ երևացին, մի ցոյց արին և ապա անդառնալի անհետացան:

Ս.յ. 1905 թուի օգոստոսի կիսին էր. մի խումբ սաք գլուխ երիտասարդներ, իրանց խմբապետով եկան Բաղա, երեք օր մնացին, լաւ լաւ պատիւներ ստացան, շրջապատեցին իրանց Բաղայն երիտասարդներով ու պատրաստուած էին անցնել Ղաղախի դաւառի Շամշադին դաւառամասի Ղուլալի գիւղը: Բայց նախքան Բաղայնց հեռանալը այդ երիտասարդները չտանելով հարեան գիւղերից եկած երեք թուրքերի ներկայութիւնը, կամ գուցէ համարելով նրանց լրտես, որ զննուած էին իրանց շարժումները, գիւղից դուրս հանեցին:

Հաւանական է, որ այս երեք թուրքերն արդէն մինք հարելը շինելով, սկսեցին պատմել թուրք հասարակութիւններին առաջ իրանց տեսածները, — եկեղ երիտասարդների և տեղական խմբերի պատրաստութիւնը: Իսկ եկեղները տեղական երիտասարդները հետ կազմելով 80 հոգուց պատրաստ մի խումբ օր ցերեկով, պատերազմական կարգով շարժուեցին դէպի Շամշադինու Ղուլալի գիւղը, և անցնելով Բագլի գ. կոչուած գիւղից, ուր ապրում են Ձիւլգատարով եղբայրներն ու նրանց ազգականները, Ս. դ. Բ. Լ. ա. զ. թուրքաբնակ գիւղի դիմացը մի բլուրի գագաթից 2—3 անգամ համադարի տուէն օդում, և յետոյ գնացին Ղուլալի, իսկ բաղայնները վերադարձան իրանց գիւղը:

Կասկած չկայ, որ այս ցոյցը դիտաւորեալ էր և արդէն տարածուեց թուրքերի մէջ, որոնք աւելի սկսեցին վերահսկել հայերի շարժմանը, դոնէ այդպէս են կարծում հայերը, ըստ որում այս դէպքից յետոյ, այլ ևս ոչ մի թուրք չէր երևում Բաղայում: Մի քանի օր անցած, երբ գիւղի եկեղեցում Յարութիւն Խալաթեանի ննջեցեալների յիշատակին պատարագ էր մատուցւում և այդ օրը ժամարար քահանայն ընտել պէտք է կարգար Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը և Կովկասի Շէյխիւլ-Իսլամի յորդորը՝ որ հայ ու թուրք հաշտ ապրեն միմեանց հետ, յանկարծ մտաւ եկեղեցի ու կանգնեց առաջին դասում, շրջապատուած իւր 10—12 թիկնապահ թուրքերով տեղական կալուածատէր Եօխարի Ա. յիւլուեցի հայախօս Բէօուզ աղայ Կարաբէգովը, 52—55 տարեկան մարդ, որին պատուելու համար իսկոյն առաջարկեցին աթոռ և նա բազմեց հայ եկեղեցում սուրբ պատարագի ժամանակ:

Ժամարար Մեսրոբ քահանայն կարգաց Վեհափառի կոն-

դակը և ապա Շէյխ-իւլ-Իսլամի յորդորը. բացատրեց նրանց միտքն ու նպատակը նախ հայերէն և ապա թուրքերէն, որ հասկանալի լինի Կարաբէգովի ուղեկիցներին: Եկեղեցուց դուրս Կարաբէգովը շնորհակալութիւն յայանեց քահանային և ապա ինքն էլ խողաղատիական յորդոր կարգաց ժողովրդին ու քահանայի և ժողովրդի հետ իւր թուրքերով հանդերձ հրաւերուեց Յարութիւն Խալաթեանի տունը հացկերոյթի, ուր նա նստեց հայերի հետ մի սեղանի և կերաւ անխախը, իսկ միւս թուրքերի համար առանձին ոչխար մօթեցին և առանձին ճաշ պատրաստեցին: Ս. յտեղից Կարաբէգովն իւր խմբով անմիջապէս գնաց Ալլահեար բէգ Ձիւլգատարովի մօտ: որ ընակուում է Քեշիշ-բեանգ թուրք գիւղում, իւր սեպհական տանը, Բաղայնց 5—6 վերստ հեռու դէպի հարաւ:

Բէօուզ աղայի այցը հայերը ընդունեցին իբրև մի միջոցի մօտոյ ծանօթանալու հայերի արամադրութեանը երիտասարդներին խմբի երևալուց յետոյ և տեսաւ միայն բարեացակամ վերաբերմունք: Վաւառական ոստիկանական պաշտօնեաները, երիտասարդների խմբի յայանի ցոյցից յետոյ շուտ շուտ խողարհուլութիւններ սկսեցին անել Բաղայում և դէնքեր էին պահանջում. բաղայնը ազատուելու համար հաւաքեցին մինչև 25 հին ձեռի հրացան և յանձնեցին պրիտաւին, որի ընակութիւնը Կետաբագում է, 30 վերստ հեռու Բաղայնց:

Բաղայնը գրեց դէնք կամ այլ պատերազմական միջոցներս բերել անկարող էին, որովհետև Բաղան շրջապատուած է բազմաթիւ թուրք գիւղերով. ամենամօտիկ հայաբնակ գիւղը Չարդախոււն է, որ ունի 20 վերստ, երկաթուղու Չագամի կայարանը 14—15 վերստ հեռու են: Իսկ շրջապատի թուրք ազգաբնակիչները լինող աշարջութեամբ վերահսկում էր՝ որ դրանց դէնք չմտնի Բաղա գիւղը:

1905 թուականի հոկտեմբերն էր: Հասարակութիւններին մէջ բերանից բերան թուրք սուտ կամ ուղորդւելու բերով լցուել էր օգը և մարդկանց դադար ու հանգիստ չէր տալի: Ս. յս և այն տեղ խմբուած մարդիկ խօսում էին միայն օրուայ անցքերի վերայ, թուրքերի պատրաստութեան վերայ, աւազակներին շարժման վերայ. այլ նիւթ չկար խօսելու: Մի տեսակ անորոշ գրութիւն էր ստեղծուել բաղայնց համար, էլ չգիտէին, թէ ինչ գալոց է պատրաստուում նրանց գլխին. Սչ մի գործ չէին կարողանում կատարել, ոչ մի տեղով չէին կարողանում հեռանալ, դիշեր ցերեկ անդադար մտածելուց թունն աչքներին կորել՝ հեռացել էր: Ամեն տեսակ լուրեր, յուսալի

Թէ յուսահատ, մինը 20 շինելով հաղորդում էին իրար և անորոշ գրութիւնն աւելի բարգւազում, զարդանում էր . . .

Անցաւ հոկտեմբերը. հասաւ նոյեմբերը. մարդիկ աւելի ջղայնացան. լուրերը բարդուեցին և բնակիչները երերում էին յուսոյ և յուսահատութեան մէջ: Ոմանք հաւատացնում էին, թէ բարեկենսամ կառավարութիւնն երբէք չի թոյլ տալ ընդհարում: Ոմանք և գուցէ մեծամասնութիւնը, լիովին ապաւինել էին Ալլահեար բէգ Զիւլքադարովին և հաւատացած էին, որ սա անթիւ կապերով կապուած Բաղայի հետ, երբէք չի թոյլ տալ, որ իւր հաւատակիցները որ և է վնաս հասցնեն հայ հաւատարիմ գիւղին. Մի այլ խումբ՝ յայտը չկորելով սրանից կամ նրանից, աւելի յոյս էր դնում իւր վերայ, իւր ոյժի ու կազմակերպութեան վերայ . . .

Զիւլքադարովները մեծ և բազմանդամ առհմ են. դրանց պարագլուխն է Ալլահեար բէգը: Սա իւր գերզատանով բնակւում է Բաղայից 5 վերստ հեռու, դէպի հարաւ, Խըննալու գիւղի Քեշիշ-բեանդ մասում, իսկ միւս Զիւլքադարովները, նոյնպէս Բաղայից ոչ հեռու 4—5 վերստաչափ կազմել են մի առանձին գիւղ միմիայն բէգերից բաղկացած և այդ պատճառով կոչւում է Բագլիգ: Նրանք հարուստ կալուածատէրեր են, ունին հողեր, անտառներ Զագեամ գետի հովտում և այլն:

Ալլահեար բէգը 60—62 տարեկան է, բարձրահասակ, լեզը, առողջակազմ, հաստ և երկայն քթով, դեղնականաչ փայլուն աչքերով, սակաւախօս, ձախ ոտից փոքր ինչ կազ: Հագնում է սովորաբար չեքքեղի երկայն կապայ. (չեքքեղի) վրայից սոկիպատ քամար և արծաթապատեան խէնչալ, սիրում է որսորդութեան գնալ բարակ շներով (թաղի) և բազէով. ձանապարհ գնալիս շրջապատում է իրան միշտ թիկնապահներով: Քրագէտ է ուռներէն և պարսկերէն: հասկանում է հայ լեզուն: Նրա ազգեցութիւնը առաւել ևս մեծանում է նրա պաշտօնական գիրքով և այն յարաբերութեամբ, որ ունի բարձրաստիճան պաշտօնեաների հետ:

Լայնատարած սրօտատեղեր ունենալով՝ պահում՝ դարգացնում և կատարելագործում է ձիանց լաւ տեսակներ, և սրանցով շատ անգամ փայլում է հասարակաց կրկէսներում և նրա լաւ տեսակի ձիաները շատ անգամ տանում են առաջնակարգ թանկագին մրցանակներ:

Գանձակի նահանգում առաջաւոր բէգերի շարքումն է և, իբրև ազգեցիկ մարդ, մեծ համարումն ունի բէգերի և հասարակ գասակարգի մօտ: Հասարակաց գործերին և շարժմանը կարող է ցանկացած ընթացքը տալ:

Ալլահեար բէգի տեղական ազգեցութիւնն այնքան մեծ է ժողովրդի վերայ, որ թուրք և հայ հաւատարապէս հնազանդւում են նրան: Եւ նրա կալուածում ապրող թուրք գիւղացիները կամովին կատարում էին այնպիսի պարտականութիւններ, որից ազատ պէտք է լինէին 1861 թուի փետրվարի 19-ին ազատական բարձրագոյն հրովարտակով:

Բաղացիները թէև օգտւում են պետական հողերով և ոչ մի կապ չունին կալուածատէրերի հետ, բայց չէին կարող դուրս գալ Ալլահեար բէգի համատարած ազգեցութեան աակից: Վարի, հնձի, խոտհարքի ժամանակ հով (կոչ) էին անում բէգի կողմից և տունը մի մարդ մի օր դնում՝ աշխատում էր Ալլահեար բէգի հողերում: Հարուստներն ու արտօնեալները (քահանայք ևւն.) վարձում էին իրանց փոխարէն մարդիկ և ուղարկում էին բէգի հովին մասնակցելու: Բէգի կողմից նշանակած վերահսկիչները միշտ ծանուցում էին տալի բէգին, եկողի ու չեկողի մասին. չեկող չէր լինում, որովհետև բոլորն էլ համոզուած էին, թէ երբ և իցէ կարիք կունենար բէգի մօտ, ըստ որում բէգը ամենի կարիքը դոհացնում էր. մէկը դրամի պէտք ունի, մի ուրիշը վէճ, կամ ստանալիք ու չէ կարողանում ստանալ, կամ փորձանքի է հանդիպել, ուրեմն պաշտպանութիւն է որսնում իշխանութեան առաջ բէգի միջնորդութեամբ. մէկի ապրանքն է գողացուած, բէկը հնարաւորութիւն ունի դողօքը գանել տալ և յանձնել տիրոջը ևւն: Մահմետականների համար մզլիթները և նշանաւոր օջաղները անձեռնմխելի ապաստարաններ են. Զիւլքադար բէգերի տունը որպէս օջաղ ապաստարան էր հալածուածների համար, լինէին դրանք յանցագործներ, աղջիկաւանգողներ կամ բազկից հալածուածներ: Այս իրողութիւնը հին է, պատմական է ու յատուկ շատ բէգերին և խաներին Անդրկովկասում, որով և պաշտպանւում է բէգերի հասարակաց ազգեցութիւնը:

Երբ կառուցւում էր Թիֆլիզ-Բագու երկաթուղին, երկու կայարանի-Զագեամ և Դալլար տարածութեան փայտէ ձողերը (չպայները) կապալով վերցրել էր Ալլահեար բէգը իւր անառնից մատակարարելու: Բաղացիք և միւս գիւղերի թուրք բնակիչները յօժարակամ իրանց ապրանքով երկու օրով անառնից փայտ էին հասցնում երկաթուղի:

Այսպէս էր Ալլահեար բէգի անսահման ազգեցութիւնը երկու ազգաբնակչութեան վերայ էլ ու այս կարգերը հայերի վերաբերութեամբ թագաւորում էին նախքան Բաղայի աւերումը:

Եթէ Բաղայի հայ ժողովուրդը միշտ արամաղիր էր գործ

1007  
52433

զնելու բէղի օգտին իւր պատրաստականութիւնը, հնազան-  
զութիւնը և աշխատանքը, ապա ուրեմն նա հիմ չունէր երկ-  
քայելու, որ իւր պաշտպանը, հովանաւորը, տէրը, իշխանն Ալ-  
լահեար բէգն է, որ անկեղծ են նրա խօսքերը թէ «Բաղան  
իմն է, Բաղան ձեռքից չեմ թողնել, բազայից հարազատներս  
են և լին»։ ուրեմն նա, դոնէ իւր օգտի համար, չի թոյլ տալ, որ  
Բաղայի կողմուտն ու աւերումը տեղի ունենան:

Ամէն անգամ, երբ Ալլահեար բէգը գալիս էր Բաղա կամ  
անցնում էր նրա միջով, միշտ իջեանում էր իւր ամենամօտիկ  
ծանօթ-բարեկամ Յոհաննէս Եուշանեանցի տանը և դըտ-  
նում էր արժանավայել հիւրասիրութիւն տան տիրոջ և հա-  
տարակութեան կողմից:

Գ.

Կոտորած Չազեամ կայարանում. Դեսպանութիւն Ալլահիար բեգի  
մօտ. Յարձակումն Չառչի գոմերի վերայ. Հայերի փախուսք բի-  
նաներից դեպի գիւղ: Ալլահիար բեգի գալուսք Բաղացոց մօտ:

Անցնենք կրկին պատմութեան թելին:

Լուսացաւ ուրբաթ չարաբաստիկ առաւօտը, նոյեմբերի  
18-ը, այսինքն, ուղիղ Փանձակի կոտորածի և կողբալուտի օրը և  
կէս օրից յետոյ, երեկոյեան դէմ բօթաբեր դոյժն ընկաւ Բա-  
ղայի մէջ: Մի քանի Բաղացիներ, որոնք մշակութեամբ կամ  
առեւտրական գործերով զբաղուած էին երկաթուղու Չազեամ  
կայարանում, շնչասպառ հաղիւ կարողացել էին փախստեամբ  
գիւղը ձգել իրանց: Սրանք լուր բերին, որ այդ օրը թուրքերը  
մի քանի պարագլուխներ շողեցութեամբ, մինչև անգամ ա-  
ռաջնորդութեամբ, յարձակուել են Չազեամ կայարանում և  
երկաթագծի վերայ գանձող հայերի վերայ. ցրել, կողոպտել են  
նրանց և ոմանց էլ մահացրել: Այս բօթաբերները հաղորդում էին,  
որ այդ օրը թուրք ջանքեղար կուսակցութեան տեղական կօ-  
միտէի, Եօխարի Ալիբիու գիւղացի, պարագլուխները Փանձակից  
ոտացել են հեռագրեր, որոնցով Փանձակից ծանուցանում  
էին սրանց, որ Փանձակում հայ և ռուս միացած կոտորել են  
բոլոր թուրքերին, ուստի հարկաւոր է սկսել Չազեամի կո-  
տորածը:

Չազեամի կոտորածը նկարագրում է Քիֆլիղում կարճատե  
հրատարակող «Արշալոյս» լրագիրն (№ 62, նոյեմբերի 23-եց  
1905 թ.): Յիշեալ լրագրի թղթակցի ասելով այս կողմերի կողմ-

պուտ սպանութիւնները կազմակերպողները էին թուրք բէգե-  
րից, առաջաւորներից և կառավարութեան թուրք ծառա-  
յողներից մի քանիսը, որոնց անունները թուրք է:

Չազեամ կայարանի գրասենեկագետը (կանտոր շէկ) հե-  
ռագրել է իւր՝ երկաթուղիների նախնացի վարչութեանը,  
որ նոյեմբերի 19-ին վաղ առաւօտ սկսուել է հայկական կօ-  
տորած: Առաւօտեան ժամի 11-ին, կայարանի մօտ, ճանա-  
պարհի նորոգութեան հանրակացարանում (կազարմա) կտոր-  
կտոր է արուած աւագ բանուր Մարտիրոսեանի կիւր ու վերա-  
ւորուել են նրա մանուկները: Նախնացի կայարանում  
թուրքերը հայեր էին սրոնում, բայց ծառայողները ջանքերի  
շնորհիւ նրանց չյաջողուեց գտնել: Հին Չազեամում թուրքերը  
կոտորել են բոլոր հայերին և գիշերը հրդեհել են նրանց տները:  
Փորձել են հրդեհել և հաշտարար դատարանին կից բանտը, բայց  
ժամանակին նկատելով նրա առաջն առել են և հրացանաձգու-  
թեան ժամանակ, ատում են, սպանուել են, 4 թուրք: Չա-  
զեամ կայարանը պաշտպանելու համար, նոյեմբերի 19-ին կա-  
յին միայն 32 զինուոր\*:

Երկաթուղու գծի վրայ պատահած դէպքերի նկարագրու-  
թիւնը թողնելով Ղազարի գաւառի ընդհարմանց իմ կազմած  
պատմութեանը, ես նորից վերագրանում եմ Բաղա:

Այսպէս, նոյեմբերի 18-ի երեկոյին գիւղ հասան Չազեամից  
աղաատուածները խիստ իրարանցում յառաջ բերին գիւղի մէջ,  
ուր, ինչպէս վերը յիշած է, ոչ քուն ունէին ոչ հանգիստ:

Պայմանական սուլոցով գիւղամէջ ժողովեցին բազմու-  
թիւնը և խորհրդի կանգնեցին մի ելք գտնելու: Բնական է, որ  
բազմաթիւ գլուխներ մի տեղ հաւաքուած՝ ամեն տեսակ մտ-  
քեր և կարծիքներ են արտայայտում: Չորս կողմից թրքաբնակ  
գիւղերով շրջապատուած միայնակ կանգնած Բաղան չէր կա-  
րող սառնութեամբ նայել իւր ամենամօտիկ սպառնալից ապա-  
դայի վերայ: Իւր վրկութեան յոյսը դնել իւր թոյլ, անգլուխ,  
չկազմակերպուած սյժի վերայ, շատ էլ վստահ չէր: Ապաւի-  
նել 20 վերստ հեռու Չարդախլուի վերայ. այդ էլ բացայայտ  
անիրագործելի էր, ըստ սրում նա, Չարդախլուն, Բաղային  
հաւասար մի գիւղ, հաղիւ կարող է իւր գլուխը պաշտպանել.  
կառավարութեան օգնութեան դիմել անկարելի էր, պէտք էր  
հասնել Փանձակ, իսկ մինչև Փանձակ բոլոր տեղերում վըխ-  
տում էին թուրք հրոսակները: Ո՞ւր գիմեն, մեծ պաղատեն,  
մեծ ձեռք մեկնեն, չգիտէին:

\*) Արշալոյս № 62. 1905 թ.

Գլուխը կորցրած բաղմուտիւնը, շիւղը բռնող խեղդուողի նման, նորից կանգ առաւ դրացի Ալլահիար բէգ Զիւլֆադաւրովի գթասրտութեան և վեհանձնութեան վրայ: Միահամուռ որոշեցին դիմել նրա օգնութեանը:

Ուստի՝ իսկոյն ընտրեցին մի քանի առաջաւոր մարդիկ, այն է, Յոհաննէս Շուշանեանցին, Ղահրաման Դաթոյեանցին, Գալուստ Եաւրիեանցին, Աւետ Բարսեղեանցին, Սարգիս Արզումանեանցին, Պօղոս Ծերատեանցին և ուրիշներին մինչև 12 հոգի և նրանց պարագլուխ Գրիգոր քահանայ Տէր Աբրահամեանցին և, իբրև գեոպանութիւն Բաղայի հասարակութեան կողմից, պատուիրեցին որ շաբաթ օրը, նոյեմբերի 19, առաւօտեան արշալոյսին, համարեա միտով, թուրք զիւղերում աննկատելի, ուղեորուեն գէպի Խըննալու Ալլահիար բէգի մօտ:

Բէգը սիրով ընդունեց պատգամաւորութիւնը, արժանաւորապէս պատուասիրեց. սկզբում խիտ զարմանք արտայայտեց պատմուած եղելութիւնների մասին, իբրև անսպասելի և անհաւատալի մի իրողութիւն և ապա նորից յուսադրեց, որ Բաղային ոչ մի սպառնալիք, ոչ մի վնաս չի լինի. որ Բաղան իրանն է և բաղայիք նրա հարազատները, և խոստացաւ անձամբ այցելել գիւղը նոյն պատգամաւորութեան հետ, որի համար և պահեց իւր մօտ պատգամաւորներին:

Շաբաթ առաւօտ, նոյեմբերի 19-ին, արեւբացին, այն ժամին, երբ հայ գեոպանութիւնը Խըննալիում աղերսում էր Ալլահեար բէգին, զիւղի արևելեան կողմից, ուր 4-5 վերսահեռու Ձառչի կոչուած բնաներն են և ուր մինչև 30 տուն բաղայիներ իրանց բազմաթիւ ապրանքներով մշտապէս ապրում են, լսուեց հրացանի ձայն, որ ապա կրկնուեց կանոնաւոր կերպով մինչև 70 անգամ:

Լարուած, ելէկաբացած բնակիչները իրար խոնուած, իսկոյն դուրս թափուեցին տներից և զանազան բարձրութիւններից զննելով՝ աշխատում էին բացատրութիւն գտնել, բայց ի դուր, ըստ որում ոչինչ չէր երևում. Ձառչի գոմբը գտնուած են բաժակաձև փոսի մէջ Ձառչի և Քարաղբիւր անուն աղբիւրների ահուճներում, շրջապատուած փոքրիկ բլուրներով: Ուստի որոշեցին լրաբեր սուրհանդակներ ուղարկել անցքի վայրը և իրանք հոգացին ամրապնդել պահապանների ռազմիկ զիւրբերը:

Շուտով վերադարձան սուրհանդակները—Առաքել Վարդազարեան նիկողոսեանցն ու Աւետ Խաչատրեանը և բացատրեցին, որ թուրք հրոսակներն մի մասն արդէն յարձակուել է Ձառչի գոմբի վրայ, միւսները նոյնպէս ժողովուած

են յարձակուելու. բնաւորների դրութիւնը սոսկալի է. Ղահրաման Խաչատուրեանը կանխօրէն բարձրացել է Ձառչի եւլ կոչուած բլուրի վրայ և այնտեղից գնտակներ է արձակում յարձակող թուրքերի վերայ, որ սրանց հոսանքը մի կերպ կանգնեցնի և ջառչիաբնակ հայերին միջոց տայ գէպի դիւղը փակելու: Հրացաններ են արձակում և թուրքերը, բայց տեղի հեռաւորութեան և փոս լինելու պատճառով ձայնը լսելի չէ լինում:

Գիւղը պաշտպանող 10—12 զինուորներ իսկոյն գնացին օգնութեան և Սանգեարի աղբիւրից վերադարձան ձեռնուներայն, ըստ որում Ձառչի շինութիւնները արդէն բոցավառ կրակի մէջ էին. սարսափահար բնակիչները ձիով, ոտով, երեսնանցով կանանցով, ամեն բան թողած թշնամուն, փախչում էին գէպի զիւղ գոնէ իրանց կեանքն ազատելու:

Այս սոսկալի եղելութեան մասին իսկոյն հաղորդեցին շրջակայ բնաներին, այն է Թալայ, Գոմբրաձոր, Քեամանդար, Սարբուլաղ և Գիւլարի գոմբը, որ իրանց ճարտեսներն: Արդարև մեծ արագութեամբ բոլոր բնաներից հաւաքուեցին զիւղ, բերելով իրանց հետ ապրանքները, անասունները, կահ կարասիքը և այլն: Եւ այդ բոյէին զիւղ ներկայացնում էր մի աննկարագրելի, սարսափահար տեսարան: Տղամարդիկ, կանայք, երեխայք, ապրանք, ոչխարներ, ձիանք, շներ և այլն, իրար էին խառնուած. լաց, կոծ, աղաղակ, ձայներ, իրարանցումը աննկարագրելի էր. ոչ ոք չգիտէր թէ լինչ անի, ուր գնայ, ինչ ասի, ում ասի. խօսք չէին գտնում խօսելու, ապուշ էին կտրել ամենքը:

Ինքնապաշտպանութեան գործն իսպառ մտացուեց: Ամենքն աշխատում էին մի կերպ տեղաւորացնել բնաւորներին և զիւղի մէջ եղած ու բնաներից բերուած բազմաթիւ ապրանքները, ոչխարները և այլն:

Այս կէսօրին էր: Սրտաճմրկի տեսարանին առաւել տրտութիւն էր տալի բնութիւնը: Թանձր, խոնաւ, աշնան մառախուղը իրար յետեւից դալիս ծածկում էր արևը, զիւղը, մարդկանց և նորից հեռանում, որպէս զի տեղ տայ յետևից եկող միւս աւելի թանձր ամպերին:

Վերջինս յաճախակի ծածկում էր բաղայոց իրկութեան վերջին յուսոյ, Խամիարի եւլի, ճանապարհը, որը պարզ երևում է զիւղից և որով պէտք է դար Ալլահեար բէգը: Խոկ սա չկայ ու չկայ չկան և պատգամաւորները. արևն էլ թեքուել է գէպի իւր մուտքը: Յուսակտուր Բաղայիներն աչքները բռնուած Խամիարի եւլի վրայ՝ միմեանց

հարցեր էին տալի թէ՛ բէզն ուշացաւ, բէզը չեկաւ, պատգամաւորներն էլ չեկան: Վերջիններն չվերագառնալը մեծ մտա-տանջութիւն էր. չգիտէին ի՞նչպէս բացատրեն յապաղումը: Մեկնութիւնները բազմաթիւ էին, ոմանք կարծում էին, թէ ներկայացուցիչները գերուած են, ոմանք թէ՛ սպանուած են, ոմանք թէ՛ բէզն ամէն բան կյաջողցնի, կվերջացնի. և այս տարածում ու մաշող դրութիւնը շարունակուեց մինչև 4 ժամը կէսօրից յետոյ:

Իսկ թուրք հրոսակները աղատօրէն և անարգել զբաղուած էին Ձառչի աւարով և յառաջ չէին գալի, որով պատճառ էին տալի բաղացոց խաբուածի յոյներով ենթադրել, թէ նրանք վախենում են այլ ևս յառաջ գալու, դո՛հ կմնան միայն Ձառչիով և այլն:

Պատառոտած ամպերի միջով վերջապէս երևացին Խամփարի ետալի վերայ մի խումբ ձիաւորներ, որոնք առանց շտապելու դանդաղաբայլ յառաջ էին գալիս: Այ՛ն, եղբայրացիներն բազացիք, եկողը Ալլահեար բէզն է սպիտակ շորերով, տակի ձին էլ նրանն է երևում: Ահա խումբն իջաւ Վերի աղբերակի գլխի փոսը և աներևութացաւ, 5—6 բոպէից երևաց Վերի աղբերակի գլխին և վերջապէս մօտեցաւ գիւղի եզրին:

Ալլահեար բէզը սպիտակ չեղբեղկով, ոսկեպատեան խէնջալը կախած, ոսկեդոյն թուրքմանի բարձր ձին հեծած, արժանալայել դանդաղութեամբ գալիս էր խմբի առաջից: Նրան հետևում էին երեք թուրք թիկնապահներ ոտից մինչև գլուխ զինուած, որանց յետևից գալիս էին Բաղայի պատգամաւորները, իրանց քայլերը յարմարացնելով բէզի քայլերին:

Գիւղական ճանապարհի երկու եզրում պատի պէս երկարութեամբ շարուել էին արք և կանաչք և երեխայք և հայեացքները բեւեռել էին Ալլահեար բէզի վերայ, որ ծանրաբայլ յառաջ էր գնում և լսում էր բաղացոց աղաղակը «բաղ, բաշընդայ դէօննում. եօխարդայ Ալլահ, աշաղադա սան. բուզուլումնան բղայ կուրթար (բէզ, գլխովդ պտոյտ դանք. վերև Աստուած, ներքև դու. այս չարիքից մեզ ազատիք)»: Բէզը թեթև ժպտալով՝ սիրտ էր տալի ժողովրդին չվախենալ, և հաւատացնում էր, որ ոչինչ չի լինի: Պատգամաւորներն առաջին անգամ տեսնելով բխանների խառն ի խուռն փախուստը, տեղ տեղ կանգ էին առնում, ապշում էին և լալիս ու նորից հասնում էին բէզի յետևից: Ժողովուրդը խուռն բազմութեամբ հետևում էր նրանց:

Հասան գիւղամէջ. արքունական դպրոցի առաջ բէզը

կամեցաւ իջնանել իւր սովորական տեղում՝ Յոհաննէս Շուշանեանցի տանը. բայց ժողովուրդն աղերսեց նրան կանգ առնել, շարունակել գէպի Ձառչի և խուժանի առաջն առնել:

Բէզը կատարեց հասարակութեան խնդիրը, մտադրուեց գնալ, բայց ցանկացաւ տեսնել դերքերը և իմանալ նրա դիմադրելու պատրաստութեան չափը: Անկեղծօրէն ցոյց տուին նրան բոլոր դերքերը 1) Հանգստարանի մօտ, 2) Տամբուլում զօբէի, 3) Բրուտի հող, 4) Իրիցանց զօբէի, 5) Եկեղեցու մօտ և 6) Գիւղի գլուխ: Բոլոր տեղերում երկայն փոսեր էին փորուած պատասպարուելու և պահապաններ էին կարգուած: Բէզը մի առ մի զննեց դերքերը, իմացաւ աղմական մթերքներն քանակը, կռուող ոյժերի թիւը և պատուիրեց մարդ չսպանել, ըստ որում կողոպուտը ջհաննամբ, կարելի է վերագարծնել, բայց սպանութիւնը կլարի երկուստեք յարաբերութիւնը և աւելի կթշնամացնի երկու կողմն էլ: Ապա գնաց Ձառչի, տանելով հետը մի քանի բաղացիներ:

Ալլահեար բէզը Ձառչիում Փռուրչնի ետալ բարձրութեան վրայից զիմեց խուժանին, յանդիմանական խօսքեր արտասանեց, խրատեց որ վերագառնան իրանց սները: Իսկ խուժանը փոխանակ լսելու՝ ասաց նրան, որ դնա եօխարի Այիփուլ խորհրդի:

Հաւանական է, որ այդ կենդրոնական խորհուրդները դուրսիւն ունէին թուրքերում, և առանց այդ կանոնաւոր կազմակերպութեան՝ թուրքերը չէին կարող միանուա գ, այն էլ նոյեմբերի 18-ին, յարձակուել հայերի վերայ ամենուրեք, այն է Պալլարում, Ձաղեամում, Բաղայում, Ձարդախլուում, Գետարագում և այլ գիւղերում:

Գ.

Ալլահեար բէզը հարսանիքում. Բաղայի փրկանքի: Մետրոք Բահա-նայի գաղտնի դեսպանութիւնը գեներալ Գահանգապետի մօտ:

Ձառչից Ալլահեար բէզը վերագարձաւ Բաղա: Գիւղական գրագիր Մելիք Մերատեանց երիտասարդ պատկազրութիւնը պէտք է կատարուէր այդ երեկոյ և հարսանեաց ամենատեսակ պատրաստութիւնը, առանց աղետալից դէպքերին կանխադէտ լինելու, տեսել էին արդէն: Միւս կողմից ինքը Մերատեանցը նոյն և հասարակութիւնը տաղնա-

պալեց օրերում անկարող էին հանդէս կատարել, իսկ յետա-  
ձգել անկարելի էր, ուստի որոշուած էր կատարել անշուք  
կերպով:

Մեկը Մերատեանցը մասնակցում էր Ալլահեար բէգի  
շքախմբին և խնդրեց բէգին ներկայ լինել հարսանեաց հան-  
գիսին և պատուելով իրան՝ իջևանել իւր տունը: Բէգը՝ որ օտար  
չէր հայի սեղանին, ընդունեց հրաւերը:

Առանձին ոչխար մորթուեց թուրքի ձեռքով և առանձին  
կերակուր պատրաստուեց բէգի թիկնապահները համար, նոյնը  
և բէգի համար: Բէգի սենեակում ներկայ էին մի քանի բա-  
ղացիներ, որոնցից ոմանք կանգնած էին պատի տակ շարքով:  
Բէգին բացատրեցին, որ նուազ, զուռնայ անյարմար է հրաւե-  
րել ներկայ ժամանակ: Պսակից յետոյ ախուր, արտում ան-  
խօս կանգնած էր ժողովուրդը բէգի սենեակում:

Հանդիսաւոր լռութեան մէջ բէգը յանկարծ դիմեց ժո-  
ղովրդին. «Խնչ էք կարծում, ի՞նչ է այս շարժման պատճառը:  
Պատասխանեցին՝ որ չգիտեն և չէին սպասում: «Խուլիդանները  
դործ է այդ, շարունակեց բէգը. եկեք այդ փորձանքի առաջն  
տունենք, մի բան գցենք խուժանի բերանը, գնան՝ կորչեն. իմ  
կարծիքով՝ միակ միջոցն այդ է: Բէգը լռում և սպասում է  
պատասխանի. լռու են մնում և գիւղացիք:

Ներկայ եղող Պօղոս Եաւրիկանցն առաջարկեց մի հաղար  
ուրբի, միայն թէ ազատուեն: Կարճ մտածմունքից յետոյ՝  
բէգն ուրախ դէմքով յայտնեց. «Դէ որ այդպէս է, տուէք 15  
թագար էլ դարի:

Այս խօսքերի վերայ ուրախացած, որ բէգն արդէն գիւղն  
ազատել է, գիւղացիներից ոմանք ինքնաբերաբար խոստացան  
նուէրներ՝ ով ինչ կարող էր:

Ընթրիքի վերայ հայերն Ալլահեար բէգի կենաց բաժակ  
առաջարկելով՝ յիշեցնում էին, որ նախկին բաղացիք և Զիւլ-  
գազարովիների նախնիքը նոյնպէս եղել են փոխադարձ բարե-  
կամներ և այժմ էլ իրանք բէգից խնդրում են օգնութիւն:  
Ալլահեար բէգն առնելով մի կտոր հաց, ցանեց վրան աղ և  
սոսաց. «Երբուտ եմ այս աղ ու հացով, որ Բաղան ոչ ոքի  
ձեռքը չեմ տոյ. բաղացիք իմ ազգատոհմից են, իմ աւլադս  
(զաւակ) են. և ի նշան հաստատութեան այս երգման, ըստ  
սովորութեան մահմետականների՝ ձգեց աղ ու հացը գետին.  
սեղանի վերայ թողնելը անհաստատութեան նշան է: Ընթրիքից  
յետոյ իւր հանգստութեան համար բէգը գնաց Պօղոս Եաւրի-  
կանցի տունը:

Հետեւեալ օրը Ալլահեար բէգը իւր յոգնած ձին թողեց Յով-  
հաննէս Եուշանեանցի մօտ, պատուելով ուղարկել իւր տուն,  
ինքը հեծաւ Պօղոս Եերատեարցի նժոյգը՝ դուրս գնաց գիւղից և  
գետ չէր հասել այգիների սահմանը, յանկարծ ազմուկ վայնա-  
տուն բարձրացաւ գիւղի վերի մասում, և շուտով պարզուեց,  
որ Ալլահեար բէգի Խըննալու և Նրմաշու գիւղերի թուրքերը  
Գաբաղի իւր գիւղից, որ Ալլահեար բէգի բնականութեան մօտ  
է, քշել տարել են նոյն բէգի մտերիմ բարեկամ Յովհաննէս  
Եուշանեանի 1200 գլուխ ոչխարները թուրք հովիւների հետ միա-  
սին: Արա հետ կողոպտել են և Եուշանեանի բնայի տան իրե-  
զէնները: Թէև գիւղից օգնութիւն ուղարկեցին, բայց արդէն  
ուշ էր:

Այս դէպքն արթնացրեց ժողովրդին. նա տեսաւ, որ Ալլա-  
հեար բէգը, որքան և անկեղծ լինէին նրա խոստումները, անկա-  
բող էր թուրք խուժանի կատաղութիւնը զսպել: Թողին փրկան-  
քով ազատուելու միտքը, մտածեցին դիմել կառավարութեանը  
զօրք խնդրելու նպատակով:

Գիւղական դատարանի շինութեան մէջ շուտափոյթ կազ-  
մեցին խառն ժողով, որոշեցին խնդրադիր ներկայացնել գենե-  
րալ-նահանգապետին և խնդրը Գանձակ տասնելու և անձամբ  
ներկայացնելու համար, որ հեշտ չէր, այլ հաւատար մահաբեր  
փորձի, ընտրեցին Մետրոք քահանայ Ստեփանեանցին, որ այդ  
միջոցին Չարգախլու գիւղումն էր, և արքունական դպրոցի ու-  
սուցիչ Գաբիկ Տէր Աստուածատրեանցին, որը ստիպյն շուտով  
հրաժարուեց:

Երկուշաբթի, նոյեմբերի 21 յարձակում չեղաւ թուրքերի  
կողմից, որ վերագրեցին Ալլահեար բէգի խոստումները ճշ-  
մարտութեանը, սակայն ոմանք պնդում էին, որ պէտք է դե-  
մել գեներալ-նահանգապետին:

Աւստի Մետրոք քահանայն աշխարհականի հագուստով, եր-  
կու գինեալ ընկերների հետ ուղի ընկաւ ստով: Գաղանի ու-  
ղերները կեանքի ապահովութեան համար թողին ճանապարհը և  
ընկան սար ու ձոր, թփերի ու լիշերի մէջ. խաւար, ամպամած  
գիշերով հասան Խաւխաւ աղը և նկատեցին, որ մօտ 50  
ձիաւոր թուրքեր արագութեամբ քշում են բազմաթիւ ոչխար,  
աւելի քան 1500 գլուխ. յետոյ իմացուեց, որ նրանք կողոպտել  
են դանձակեցի Սողոման Տաւարածեանին Ալաւիանկա ուսս  
գիւղի մօտ ու յայտնի ուխտատեղի Բուլանընի աւերակ  
վանքի մօտով տարել են Շամքոր՝ Հասան բէգ Սուլթանովի  
տունը:

Սոյն այս Հասան բէգն, ինչպէս կտեսնենք Ղազախի ընդ-

հարուժների պատմութեան մէջ, սպանուել է Շամշադինու-  
կարմիր աղբիւր կամ Քեօսալար գիւղի վերայ յարձակման ժա-  
մանակ և նրա ընկերները զիակել վեզը թող ձգած ձիով քարշ  
են տուել մինչև Օքիւղլի գիւղը:

Հասնելով գիշերը Ֆրէդէկէկա ռուս զիւղը, ծպտեալ Տէր  
Մեսրոբն իւր ընկերներով ընկաւ ռուս գիշերապահներէ ձեռ-  
քը, որոնք տարան նրանց Գեօաքաղի նոր նշանակուած ռուս  
պրիստաւ Շէպիլլօլի մօտ, որ այդ գիշեր, նոյեմբ. 20-ին  
իջևանել էր տեղական ռուս քահանայի տանը: Ռուս քահա-  
նան ճանաչեց Մեսրոբ քահանային, հարցրեց Բաղայի վիճակի  
մասին և պրիստաւը շատ արտասաց, որ իւր ընդամէնը չորս  
ստրաժնիկի օգնութեամբ չէ կարող բազացոց համար փրկու-  
թիւն ձեռք բերել: Սրա մասին յիշում է ինքը Շէպիլլօն իւր  
ճանուցման մէջ գեներալ-նահանգապետին տուած \*):

Նոյեմբերի 22-ին, երեքշաբթի առաւօտեան պրիստաւն  
առնելով Մեսրոբ քահանային և նրա ուղեկիցներին՝ դնաց Չար-  
գախլու, որպէս զի կարողանայ այնտեղից հեռադրել Գանձակի  
զօրք ուղարկելու մասին: Սակայն Չարգախլուով այդ միջոցին  
մեծ իրարանցում էր տիրում: Զօրք չէր եկել, թուրք հրոսակ-  
ները կարել էին Գալլարի և Չարգախլուի միջև եղած Գեօա-  
քաղի հեռագրաթելն և իրանը շրջապատել էին Չարգախլու  
գիւղը, որ հերոսաբար գիմադրում էր խուժանին: Պրիստաւն  
և Մեսրոբ քահանան նորից վերագարձան Ֆրէդէկէկայ, ուր  
բլտրի բարձրութիւնի նկատել են, որ այրում էին Բաղայի  
մերձակայ Քեօսալար գաւ, Օջաղուլի, Գոմերածոր և  
Գիւլլարի բնաններն, այլ և այդինների տներն ու ցանկա-  
պատերը:

Մի կողմից Չարգախլուի վերայ, միւս կողմից Բաղայի  
վերայ կատարուող յարձակումներն այդ օրն այնքան վախե-  
ցրին Ֆրէդէկէկայի ռուս բնակիչներին, որ նրանք ստիպեցին  
պրիստաւին տանել նրանց Սլաւիանկա: Պրիստաւն էլ, ամբողջ  
գիւղը, բացի աղամարգիւնցից, միանգամից տնդափոխեց Սլա-  
ւիանկայ: Այս հանգամանքից ստիպուած Մեսրոբ քահանան  
իւր ընկերներով նոյն օրը գնաց գիշերելու Չարգախլու:

Չարգախլուից Գանձակ գնալն երկիւղալի դարձաւ, փոստն  
էլ լսանգարուած էր. այն ինչ Բաղայի խնդիրը մնում էր անշարժ,  
ուստի այդ խնդիրը, Չարգախլուի տանուտէրի ղեկուցումը  
դաւառապետին գիւղի պաշարուած վիճակի մասին և Մեսրոբ  
քահանայի մի նամակը Բաղայի վիճակի մասին յաջորդ Կորիւն

\* «Մշակ» № 13 Յունուարի 22-ից 1906 թ.

վարդապետի վերայ՝ յանձնուեցին մի ռուս ստրաժնիկի որ տանե-  
հասցնի Գանձակ քաւն և հինգ ռուբլի վարձատրութեամբ:  
Նոյեմբերի 23-ին, չորեքշաբթի Բաղայից Չարգախլու հասան  
Պետրոս Խաչատրեանը և Ղուկաս Պողոտեանը, որ նախ Չարգախ-  
լուից օգնութիւն խնդրեն և երկրորդ՝ խնդրատարներէ վիճակից  
տեղեկանան: Հասկանալի է, որ Չարգախլուն, ինքը շրջապա-  
ուած լինելով թուրք խուժանով, չէր կարող օգնութեան  
ձեռք մեկնել Բաղային: Աւրեմն դեսպանները ձեռնուենայն վե-  
րադարձան:

Ե.

Պրիստաւ Շէպիլլօի ղեկուցումը Գանձակի Գեներալ-Նահան-  
գապետին: Նոյն Շէպիլլօի ցամախը Тифлисский Листокъ լրագրին.  
Նորագոյն պատմաբանի հետոսներ.

Նոյեմբերի 20—23-ին գոյութեան ճգնաժամի մէջ եղող  
Բաղան ի զուր փորձ էր անում օգնութիւն հայցել միւս հայ  
գիւղերից—Չարգախլուից, Գեօաքէզից:

Որպէս զի լուսաբաններ թշուառ հայերի դրութիւնը Չար-  
գախլու և Կաղախլի, նոյնպէս և մի քանի ռուս գիւղերում  
վերոյիշեալ ճգնաժամի ընդէն, ևս կրեզեմ այստեղ իսկու-  
թեամբ երկու նշանաւոր գրութիւն, որոնք ունին պատմական  
փաստաթղթի նշանակութիւն և որոց հեղինակը ոչ թուրք է և  
ոչ հայ, այլ ռուս: Փաստաթղթերից մէկը մի գեկուցում է, որ  
տուել է 1905 թուի դեկտեմբերի 7-ին Գանձակի Գեներալ-Նա-  
հանգապետին Գեօաքաղի պրիստաւ Շէպիլլօ, որ ապուած է  
1906 թուի յունվարի 22-ին Մշակի № 15-ում. միւսը նոյն  
Շէպիլլօի նամակն է Тифл. Листокъ-ի մէջ ապուած 1906 թուի  
մայիսի 28-ին № 110, որի թարգմանութիւնը գնում ենք Մշակի  
1906 թուի մայիսի 30-ին № 115-ից արտատպելով. Ահա այն.

Գանձակի Գեներալ-Նահանգապետին տուած գեկուցում\*.

Յայտարարութիւն.

Պատիւ ունիմ հարողելու Ձերդ Գերագանցութեան, որ  
նոյեմբեր ամսիս 16-ին ևս ճանապարհուեցի զէպի Գեօաքէզ

\* Մշակ. 1906 թ. № 13 Յունուարի 22.

ընդունելու ուղչաստիք: Տեղ հասնելով նոյեմբերի 17-ին, Գե-  
տաբէզի ուղչաստի կառավարիչ Ալիեօլը յայտնեց ինձ, որ Լա-  
րաբենդի բնակիչները Գետաբէզում հրդեհեցին անտառապահ  
Աբբաս Գաջիեօլին պատկանող 60 սայլ խոտը: Ամսի 18-ին գնա-  
լով Լարաբենդ, ես կալանաւորեցի հրդեհողներին՝ Մովսում  
Քերբէլայ Ալլահօլերի ողլուն և Կասում Սադըղ օղլուն և նոյն  
օրն էլ բերի Գետաբէզ ու բանտարկեցի: Իսկ 18-ին երեկո-  
յեան Չարդախլուից հաղորդեցին հեռախօսով, որ գիւղը շըր-  
ջապատուած է թուրքերով և կոտորած է սպասուում: Եւ որով-  
հետեւ ես զբաղուած էի հրդեհի դործը քննելով, ուստի խնդ-  
րեցի Ալիեօլին գնալ Չարդախլու օղնութեան: Ալիեօլը խոտա-  
ցաւ գնալ: Երեկոյեան ժամի 9-ին երկրորդ անգամ տեղեկու-  
թիւն ստացայ, որ հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն հաս-  
ցնել չարդախլուեցիներին: Իջնելով ներքեւ ու մտնելով բու-  
ֆէար, ես տեսայ այնտեղ Ալիեօլին. իմ հարցին թէ ինչու չէ  
գնացել, նա պատասխանեց, որ գնալ չարժէ. որովհետեւ աւե-  
լորդ նեղութիւն է: Այն ժամանակ ես, հետո վերցնելով հինգ  
պահակներ, անմիջապէս գնացի Չարդախլու նոյեմբերի 19-ին  
գիշերը, ուր ինձ հաղորդեցին, որ Չարջի գիւղը աւերուած է  
և որ թուրքերը գնում են դէպի Բաղաբենդ: Միևնոյն օրը ես  
8 պահակներով գնացի Ֆրէզեօլի գիւղը, որտեղ ամբողջ ուսու  
ազգաբնակիչութիւնը սարսափահար եղած խմբուել էր եկեղեցու  
մէջ: Ֆրէզեօլից ես ճանապարհուեցի դէպի Բաղաբենդ, որը  
բոլոր կողմից շրջապատուած էր թուրք հրոսակներով և մատ-  
նուած նրանց կողպուածին ու ջարդին: Վիշերելով Ֆրէզեօլի  
գիւղում, յաջորդ օրը ես կանանց ուղարկեցի Սլալեանկա  
գիւղը, իսկ աղամարդկանց հրամայեցի պահպանել գիւղը, ուր  
ես ինքս էլ մնացի: Երբ ամսի 21-ին նկատեցի, որ թուրքերը  
մօտենում են Ֆրէզեօլի գիւղին, ես պահակներս հետ միա-  
սին գնացի Սլալեանկա գիւղը. պէտք է աւելացնեմ, որ 20-ին,  
գիշերը, Բաղաբենդ գիւղի քահանայ տէր Մետրօլը Ստեփա-  
նեանցը յայտնեց, որ նոյեմբերի 19-ին Իւսարի-Ախլի, Տաշախի  
և Դուգարի գիւղերի թուրքերը յարձակուեցին Բաղաբենդի  
վրա, աւերեցին և քչեցին-տարան ամբողջ նախիրը: Նոյն օրը  
21-ի երեկոյեան եկաւ Սլալեանկա Ֆրէզեօլից քահանան և  
յայտնեց, որ թուրքերը խոտացան ուսուներին ձեռք չտալ և  
ճանապարհուում են դէպի Գետաբէզ: Կէս ժամից յետոյ վաղ է  
վաղ եկան 25 հոգի հայեր և խնդրեցին պաշտպանել իրանց,  
որովհետեւ Սլալեանկան արդէն պաշարուած է: Հայերին ես  
թաքցրի նկուղում: Իսկոյն և եթ երեւացին ձիաւորներ, բաղ-  
կացած 800 թուրքերից: Ինձ մօտ վազեցին դուխաբօրները, նոյն-

պէս և խնդրեցին կրակ չը բանալ նրանց դէմ, որովհետեւ հա-  
կառակ դէպքում դիւղը քարուքանդ կանեն: Միևնոյն ժամա-  
նակ դուխաբօրների տանուտէրը խնդրեց տնից դուրս չը գալ:  
Մինչ այդ թուրքերը թալանելով երկու խանութ, Օսիպօլի և  
Մնացականօլի կողպուած ամբողջ ապրանքը դարսեցին նրանց  
ֆուրդօնները մէջ ու տարան: Թուրքերը զնալիս նախադու-  
շացրին դուխաբօրներին, որ 22-ին նրանք պէտք է աւերեն հա-  
յերի խանութները Գետաբէզում: 22-ին ես գնացի Գետա-  
բէզ, որտեղ հայերի բոլոր խանութները փակուած էին, իսկ  
ժողովուրդը հաւաքուած հայոց կեղեցու մօտ սարսափով սպա-  
սում էր թուրքերի յարձակման, իսկ վերջիններս մեծ խմբե-  
լով-մօտ 500 հոգի կանգնած էին շուկայում: Երեկոյեան ժամի  
5 1/2-ին ես Միսկինլի համայնքի տանուտէրի հետ միասին  
գտնուում էի հիւրանոցում, այդ մեջոցին հրացանի ձայն լսուեց  
գերեզմանատան կողմից: Իսկ տանուտէրը թեկոս բռնեց և  
նախադուշացնելով, որ հայերը կրակում են, տարաւ դէպի  
հայերի գերեզմանատան կողմը: Հէնց այդ ժամանակ նորից  
լսուեցին հրացանի ձայնը և մենք թաղնուեցինք աւուր մէջ:  
Այդ ժամանակ մեզ մօտ վազեց պրիստաւը և տարաւ ինձ դէպի  
այն տեղը, որտեղ կտտարվում էր սարսափելի հրացանածգու-  
թիւն: Պարտք եմ համարում աւելացնելու, որ բոլորովին ան-  
կորելի էր որոշել հայկական գերեզմանատանից մեզ վրա կրա-  
կողները հայերն էին, թէ զիրքերում թաքնուած թուրքերը:  
Մինչև այդ Ալիեօլը Գօլլիկով և Աստան Աղասիբէզով պահակնե-  
րին ուղարկեց շուկա կը դրադրի բնտանիքը բերելու: Պահակ-  
ները վերադառնալով բնտանիքի հետ յայտնեցին, որ սկսուեց  
հայերի խանութների թալանը՝ սկսած Ակոբեանից: Ակոսած 22-ից  
մինչև 24-ը տևեց ջարդ ու թալանը: 24-ին ես Ալիեօլի ու պա-  
հակների հետ միասին ճանապարհուեցի դէպի հանքերը գինա-  
միտը պահպանելու: Պրիստաւ Ալիեօլը նկատելով, որ հայերը  
կազախլուից փախչում են դէպի Չարդախլու, թողեց ինձ և,  
իջնելով ներքեւ թուրքերի մօտ, վազեցրեց նրանց դէպի Չար-  
դախլու, հրամայելով նրանց ոչ մի հայի ողջ չը թողնել, հէնց  
այդ մեջոցին ճանապարհին սպանեցին երկու հայերի: Այդ մի և  
նոյն օրը, 24-ին աւերուեց և հրդեհուեց Կազախլի գիւղը: 24-ին  
իջնելով Գետաբէզ, ես այնտեղ դտայ իմ թարգման Ասա-  
տուրին և Ջինդերի գործակալ Բէրդիեանցին իմ բնակարանում:  
25-ին ինձ մօտ եկան 15 հոգի զինուած թուրք և պահանջեցին  
իրանց յանձնել այն երկու հայերին: Ես աշխատում էի համո-  
զել նրանց, որ նրանք վրացիներ են, բայց նրանք ոյժով դուրս  
խլեցին նրանց իմ ձեռքից և նստեցրին միւս գերիների հետ.



ես Ալալեանկից Չարդախլու ուղարկեցի մօտ 30 հոգի հայ, իսկ ինքս գնացի Գետաբէկ և խնդրեցի Ալիեվին, որ ինձ յանձնել գաւառաւամասը, որի վերաբերեալ պրիստաւ Ալիեվը յայանեց, որ առ այժմս չէ կարող յանձնել գաւառաւամասը, որովհետև զբաղուած է ուրիշ գործերով: Ես հայերին տեղեկացրի թուրքերի կողմից դուսաբօրներն ասած լուրը. նոյն օրը, հայերը, սովքեր կարողացան, հաւաքեցին իրանց ընտանիքը և դոյքը և տեղափոխեցին մօտակայ Ղազախլու գիւղը: Պրիստաւ Ալիեվը և Նամխորսկին համոզում էին մնալ իրանց տներում, աւելացնելով, որ նոր պրիստաւը «յիմար է», նա ձեզ խաբում է, նրան չը լսէք և այլն, բայց հայերը չը լսեցին պրիստաւ Ալիեվին: Երեկոյեան ժամը 7-ին Գետաբէկը շրջապատուեց թուրքերով, և Մնացականեանի խանութից սկսեցին կտորատել և թալանել բոլոր խանութները: Աւերումը շարունակուեց մինչև նոյեմբերի 24-ը: Երբ ես նկատեցի, որ պրիստաւ Ալիեվը բոլոր ժամանակ ագիտացիա էր անում թուրքերի մէջ, ես գնացի նրա մօտ և ասացի, որ դա լաւ բան չէ, շատ հայեր են սպանուել մի որևէ ձևով պէտք է դադարեցնել կտորածը: Ալիեվը պատասխանեց, որ հարկաւոր է ոչնչացնել բոլոր հայերին, իբրև վնասակար մարդկանց, որ նրանք շատ խորամանկ են և շատ յաճախ սպանում են նահանգապետներին, պրիստաւներին և պահապաններին: «Ես ինքս ամբողջ 3 տարի փախստական էի, աւելացրեց Ալիեվը, Պարսկաստանումս էլ էի, բայց ես եկայ խոստովանեցի յանցանքս գլխաւորին և ինձ բոլորը ներեցին. իսկ հայերը նոյն իսկ չեն ընդունում իշխանութիւնը»: Նոյեմբերի 25-ին, երեկոյեան դէմ ինձ մօտ եկան 2 պահապաններ— Աստան Աղաս-բէկով և Բելիկովը և զեկուցեցին, որ հիւանդանոցից, ուր գտնուում են մօտ 60 հայեր, Ալիեվը տարաւ իր բնակարանը, 2 հայ օրիորդներ: Միւս օրը, վաղ առաւօտեան, ես գնացի նրա բնակարանը. ուր խկապէս տեսայ 2 հայ օրիորդ-ները յատակի վրա նրա հետ քնած: Ես հարցրի նրան, թէ ինչու է նա բերել իր բնակարանը այդ օրիորդներին. Ալիեվը պատասխանեց, որ նրանց համար այնտեղ շատ նեղուածք է և վտանգաւոր, իսկ այստեղից ոչ ոք չի վտանգանալ նրանց տանել: Միւս օրը ես Ալիեվի հետ միասին գնացի գինամիտի պահեստատեղին: Մենք նկատեցինք, որ հայերը թողել են Ղազախլու գիւղը և տեղափոխուում ենք Չարդախլու գիւղը: Ալիեվը 2 պահապաններին հետ ցած իջաւ և սկսեց ծեծել թուրքերին, որպէս զի նրանք վազեն հայերի ետևից, բայց թուրքերը հայերին չհասան. այն ժամանակ թուրքերը սկսեցին կողոպտել հայերի դոյքը և աւերել Ղազախլու գիւղը. բոլորը

հողի հետ հաւասարացրին: Այն ժամանակ ես իսկոյն 2 պահապաններով գնացի Գանձակ և զեկուցի այդ բոլորը նահանգապետին, իսկ պահապաններ—Բելիկովը և Աստան—Աղաս-բէկովը իրանց կողմից գրաւօր կերպով զեկուցին գաւառապետ Աւալեանին պրիստաւ Ալիեվի մասին: Նահանգապետը առաջարկեց գաւառապետ Աւալեանին իսկոյն ինձ հետ գնալ և քննութիւն կատարել: Գաւառապետ Աւալեանին ինձ հետ ուղևորուեց Գետաբէկ, բայց դեռ Գալլեար կայարանին չը հասած, Աւալեանին առաջարկեց ինձ գնալ Թեֆլիս նրա իրերի ետևից: Ես բացատրեցի, որ կը գնամ, միայն ոչ հիմա, այլ քննութիւնից յետոյ. գաւառապետը ասաց ինձ, որ ես անձտապահ աստիճանաւոր եմ և նրա հետ ծառայել չեմ կարող և իրան չը հնազանդուելու պատճառով պաշտօնից կը հեռացնել: Այգպիսի խիստ հրամանի պատճառով ես ստիպուած էի նրա իրերի ետևից գնալ Թեֆլիս, որը և տարայ Գանձակ: Մօտ մի շաբաթից յետոյ գաւառապետը վերադարձաւ Գետաբէկից: Նա ինչ ասաց նահանգապետին, ինձ յայտնի չէ, միայն ինձ կանչեց գաւառապետը և նախ հարցրեց. «բերլը իմ իրերը»: Ես պատասխանեցի «այո»: «Յետոյ նա ասաց», որ ես իմ զննմանը չեմ համապատասխանում»: Եւ ես այդ օրուանից նշանակուած եմ նահանգական վարչութեան մէջ, ահա արդէն 5 ամիս է, առանց թոշակի:

Որ վարչութեանն էլ դիմում էի պաշտօն խնդրելով—ամեն տեղ իրանց մերժումը պատճառաբանում էին նրանով, որ ես իմ զննմանը չեմ համապատասխանում»:

Կօմսենտարիաները աւելորդ են:  
Տ-ըդ քաղաքամասի նախկին պրիստաւ Ալէքսանդր Իօսիֆովիչ Նեպիլոս:

Երկու փաստաթղթերից ևս պարզ երևում է, թէ ինչ հանգամանքում էին կատարում հայ թուրքական ընդհարումները: Անցնենք նորից Բաղային:

2.

Յարձակումն Բաղա գիւղի վերայ: ՏՅԵԻ հրդեհումն: Բնակիչների ստրատափահար փախուսք:

Չորեքշաբթի, 1905 թուի նոյեմբերի 23-ին վաղ առաւօտից թուրքերը հրդեհեցին շրջակայ բոլոր բնաները: Բազայից չկողոպտացան դիմադրել: Թուրքերն աստիճանաբար՝ չորս կողմից մօտենում էին գիւղին: Հրացանածիվներն իրանց ղեկըրումն

էին: Գրեգոր քահանայ տէր Աբրահամեանցը, վաղվաղում էր ղեր-  
քից ղերք, ամբացնում էր նրանց, խրախուսում ու քաջալե-  
րում էր պաշտպաններին և անում էր կարևոր կարգադրու-  
թիւններ: Կեանքը եռում էր: Գիւրջում գործում էր և մեւս  
քահանան-տէր ներսէս Տէր Յարութիւնեանցը:

Բնակիչները մէջ կային այնպիսի հաւատացեալներ, որոնք  
ըստ հին հայկական սովորութեան, հասարակաց ճգնաժամին,  
ապաւինում էին միայն ու միայն Աստուծուն: Այսպիսիները  
Ներսէս քահանային ղերքից բերին եկեղեցի, հսկում կատարե-  
ցին, ծնկաչոք աղօթք մատուցին և շատերը հաղորդուեցին:  
Սրանց համար վերջին օրն էր:

Յովհաննէս Շուշանեանցը, Ալլահեար բէգի թողած ձին  
հեծած արշաւում էր ղերքերը ու, Ալլահեար բէգի առած  
պատուէրին համաձայն, խոտիւ արդելում էր պաշտպաններին  
մարդ սպանել:

Ընդհանուր իրարանցում էր տիրում, չկար միաեռակ  
գործողութիւն, կարգապահութիւնը խիտա և որոշ չէր: չկար  
այնպիսի մի անձնաւորութիւն, որ իւր հմտութեամբ և հեղի-  
նակութեամբ միայնէր ջլատուած ուժերը, իրար համաձայնե-  
ցնէր տարբեր գործողութիւնները: Վերջապէս չկար մի անձն, որ  
կարողանար իւր ձեռքը ժողովել պաշտպանութեան գործը,  
չկար ծրագրած պաշտպանութիւն:

Թէպէտ թուրքերը շրջապատել էին ղերքը, բայց դեռ  
չէին վատահանում ներս խուժել: Սահայն երեկոյեան դեմ,  
Ձազեամի կողմից, դեռ ևս շատ հեռուից հրացանները դըն-  
դակներ թափուեցին ղերքի վրայ: Հեռուից իսկ հասկացուեց,  
որ հրացանները Մոսսինի կարգից են: Շատ հեռուից երևացին  
մի խումբ թուրքեր-հրացանաձիգներ, որոնց գնդակները հաս-  
նում էին ղերք, իսկ բաղացոց բերդան հրացանների գնդակ-  
ները չէին հասնում նրանց: Մոսսինի հրացաններով դիմում  
այդ խումբն օտար տեղերից եկած անձանթ մարդիկ էին  
երևում: Ձանբեղար կուսակցականներ: նրանք թուով մօտ  
50 հոգի էին: Գուցէ և նրանք վճռեցին Բաղայի ճակատադիրը:  
Ցեղացի թուրքերին նրանք սպառնալիքներ էին տալի, հայ-  
հոյում էին և ծեծում, որ ներս խուժեն ղերքի մէջ:

Հեռուից ղերք բռնելով՝ ջանբեղարները գնդակէ կարկուտ  
էին թափում հայոց ղերքերի վերայ, որոնց զոհ գնացին ամե-  
նից առաջ Պողոս Եաւրեթեանցը Հանգստարանի ղերքում,  
ապա Ղամբար Յարութիւնեանը և Գալուստ Գրեգորեանը բրտ-  
տե հօղի ղերքում: Գրեքի գլխի ղերքում պաշտպանում էին  
տէր Գրեգորի և Ղահրաման Աւետեանցի ղեկավարութեամբ:

Ս. առջինի ոտը ծռուեց և երկար ժամանակ կաղում էր, իսկ  
երկրորդը խէնչալի վէրք ստացաւ երեսում և ուշագնաց եղաւ,  
որին և համարեցին սպանուած, իսկ նա ղիշերը փախաւ:  
Ս. առջին զոհերը շրջեցին ժողովրդին, մի խումբ մարդիկ շրջա-  
պատեցին նոր սպանուածներին: Հրացանաձիգութիւնն չարաչար  
շարունակում էր: Շուշանեանի խորհուրդն այլ ևս չգործա-  
դրուեց: հայերն սկսեցին մարդիկ սպանել: Հանդուցեալ Պողոս  
Եաւրեթեանը մահից առաջ արդէն երեք թուրք էր սպանել:

Մութն իւր սև քօղը սփռում էր Բաղայի վերայ: մար-  
դիկ չգիտէին, թէ ի՞նչ է խոստանում նրանց այդ ղիշերը: Եւ,  
աւաղ, Վ. երև Ա. դերեւրի կողմից թուրքերն արագութեամբ  
ներս խուժեցին ղերքի ծայրը և առաջին նուազ հրեհեցին  
շինութիւնները: Սրանք մտամբ ծածկուած լինելով ուսուաց  
շինութիւնների պէս խոտով կամ ծղօտով՝ ղիւրութեամբ վառ-  
ւում էին և տարածում: Հարաւային քամին անգամ բաղա-  
ցոց թշնամի էր: Հրեղէն լեզուները երկարացան դէպի երկինք  
սարսափ ու լոյս սփռելով տարաբաղդ բնակիչները վերայ,  
որոնք այդ ժամանակ ընկճուեցին արդէն անողոր ճակատագրի  
առաջ:

Այդ չարագուշակ բոպէից վերջացաւ արդէն Բաղայի դս-  
յութիւնը: կարաւ մի հարուստ ղերք: ցրուեց նրա տնտեսու-  
թիւնը: մարդկային արիւնով ծածկուեց գետինը և սուգի ձայ-  
նով լցուեց մթնոլորտը: Երկու կողմից էլ մարդիկ գնդակահար  
թաւալում էին գետին: Ծնողները մոռացան զաւակներին, որ-  
դին մոռացաւ հօրը: Գլխակորոյս փախուստ սկսուեց այդիններ  
կողմը: Քոտներորդ դարում, կրկնուեց իններորդ դարի արա-  
բական արշաւանքը:

Բոլոր նշանաւոր տներն ակնայ մասնուեցին բոցավառ  
կրակին: Այրուեցին մի առ մի Մեսրոբ քահանայի երկյարկանի  
տունը, ուր արքունական դպրոցն է իւր կահ կարասներով:  
բռնեցին այդ քահանայի 90 տարեկան հօրը՝ Մովսէսին, պա-  
հանջեցին ցոյց տալ, թէ ո՞ւր են պահած կամ թաղած իողը,  
արծաթեղէնը, պղնձեղէնը և այլ իրեղէնները, որոնց տիրանա-  
լուց յետոյ խէնչալով մորթեցին ձերունուն, գլուխը շարտե-  
ցին դուրս փողոց, իսկ անշունչ ղիւղը ձգեցին այլուող տան  
կրակի մէջ: Հրեհեցին սպանուած Պողոս Եաւրեթեանի երկյարկանի  
տունը, Ղահրաման Խաչատուրեանի կողմնադրով ծածկած երկ-  
յարկանի տունը, Պողոս Ծերատեանցի երկյարկանի քարաշէն  
տունը, Մելք Ծերատեանցի և ուրիշ շատերի տները և այլ  
շինութիւնները:

Անասունները անտէր մնացել էին գոմբում կամ թափա-

ուում էին փոփոցում: յաղթողները քշում տանում էին, կողոպտում էին աները, ով ինչ կարող էր՝ վեցնում էր: Գանայք, աղջկունք մանկունք, ծեր տղամարդիկ երեք մեծ խմբի բաժանուելով փախան այդ լինների ձորը: Իսկ ազգիկ, ընդունակ մարդիկ դեռ ևս մնացին գիւղում, դեռ, ևս վրէժխնդիր էին լինում, կտորում էին թուրքերին, որի ձեռքին մի իր էին տեսնում և իմանում էին, որ թուրք է: դետին էին գլորում: Իրանք հայերն էլ միմեանց հետ թուրքերէն էին խօսում, չյայտնուելու նպատակով:

Թուրքերը դրացի լինելով՝ լաւ էին ճանաչում իւրաքանչիւր տուն, ուստի ազդեցիկները իրանց կողոպտուի համար վերցրին իւրաքանչիւրը միքանի աներ մահուան սպառնալիքով մօտ չէին թողնում այլ թուրքերի: Այսպէս՝ Չագեամի հասարակութեան վերայ հաստատած տանուտէրը վերցրել էր Մեսրոբ քահանայի, Յովհաննէս Դուշանեանցի, Ղահրաման Գաթոյեանցի, Աւէա Բարսեղեանցի, Պողոս Ծերատեանցի աները և դրա հրամանովն էր մտրթուել Մովսէս ծերունին իրմաշուեցել մի թուրքի ձեռքով:

Սրանով չի վերջանում գաղանութիւնը: Այդ օրը Բաղայում սպանուեց իրմաշուեցի Ղահրաման իւրբաշու եղբայրը, որի արեան վրէժն առնելու համար՝ հետեւեալ օրը խուժանի առաջնորդները գանել տուին աներում, մարագներում և ուրիշ խորշերում թաղնուած միքանի ծերունիներ ու պատանիներ և բոլորին շարքով կանգնեցրած Պողոս Ծերատեանցի բարձրագիր կալում ու «եա, հազրաթ Աբաս», ասելով թողրին բոլորի գլուխներն էլ:

Որպէս վերը յիշուեց, Բաղայի սարսափահար փախտականներն երեք խմբի բաժանուելով հաւաքուեցին այդիների ձորի գլուխը: Մութ գիշերին, երբ գիւղը լուսաւորուած էր հրդեհների բոցերով, թուրքերը յարձակուեցին այդ խմբերի վերայ, որոնք այլ ևս հայրը որդուն, մայրը մանկան, որդին մօրը, քոյրը եղբօրը չորոնեցին: խոնուեցին իրար և իւրաքանչիւրն աշխատում էր իւր գլուխը փրկել: ... Հասարակաց ինքնապաշտպանութեան հարցը վերջացաւ, կաղնակերպումը ցրուեց, զիւրքերը դէն ձգուեցին, ամեն ոք իւր անհատական փրկութեան մասին էր մտածում: Երեք խմբից մինը, որ եկեղեցու մօտ էր հաւաքուել նոյն գիշերը, նոյեմբերի 24-ի առաւօտը Մանգուուի մօտով Մամուլի թաղով հասել էր Չարդախլու: Երկրորդ խումբը Գիւղայով Ղըզ-ղալայ ամրոցի մօտից թափուեց Չագեամ գետի աւազանը, որ ուղղուի գէպի Շամշաղինու Ղուլալի գիւղը:

Գիտակ անձինք պատմում են, որ Բաղայի աւերման գործում ղեկավար և ներշնչող են հանդիսացել դրացի բէգերից ոմանք և գիւղացիներից մի քանի առաջաւորները:

Ինչպէս երևում է պատմութեան ընթացքից, յիշեալներից ոմանք մասնակցել են նաև չարդախլուի վերայ յարձակման մէջ, որովհետև հաստատ է, որ չարդախլուեցիք կռուի մէջ գերի են վերցնում վերոյիշեալներից Հաջի Ալուն, և զնդակահար անում:

Գամբելուտի դօքս զերբ պաշտպանող խմբի մէջ աշխատում էր և Գալիթ Ծերատեանցը: Գոռ կռուի մի ժամանակ սա, երբ տեսնում է, որ իւր ընկերներից ոմանք սպանուել են և ոմանք փախել, իւր փամբիուշտներն էլ հատել են և իւր կեանքին էլ վտանգ է սպառնում, վճռում է անձնատուր լինել թուրքերին՝ ձեռնալով մահաբաղանացած: Թուրքերն ընդունում են սիրով: Այս իրողութիւնը խիստ կասկած է ծնեցնում հայ հասարակութեան մէջ, որ հիմնուելով Ծերատեանցի թրքատէր, գողութեան ձգտող բնաւորութեան վերայ, ենթադրում է, թէ նա հարկադրուած չլինէր դաւաճանօրէն յայտնել թուրքերին գիւղի գաղանիքը, անպատրաստ դրութիւնը նրն: Գուցէ այդպէս էլ եղած լինի, սակայն միքանի օրից յետոյ Գալիթ Ծերատեանցը նորից վերադարձաւ իւր համագիւղացիներին մէջ, ցոյց տալով որ իւր կեանքն ազատելու համար է առ երես ընդունել մահաբաղանութիւնը և գնացել էր Չարդախլու: Սակայն Գալիթ Ծերատեանցի արարմունքի վերայ խիստ կերպով է նայել Չարդախլուի խմբապետը և սպանել է տուել:

Բաղայի ժողովուրդն ընդունում է և մի այլ դաւաճան-Գրիգոր Գանարեանցին, որ յետոյ սպանուեց ոչ թէ հայերի ձեռքով, այլ թուրքերի, երբ նա գիւղի աւերման չորրորդ օրը իւր Պողոս եղբօր և Յարութիւն Մկրտչեանի հետ գնացել էր Բաղա՝ գիւղի գրութիւնից տեղեկանալու: Աերահաս մութն արգելք դառնալով Չարդախլու վերադառնալու՝ երեքն էլ անցնում են Բաղա գետի միւս կողմն սպահով տեղ, կրակ են վառում անձրեւի պատճառով և թուրքերը կրակի լուսով մօտենում սպանում են Գրիգորին, իսկ միւս երկուսին փախցնում: Թէ որ աստիճան յանցաւոր են յիշեալ երկու անձնաւորութիւնները դաւաճանութեան մէջ՝ դա մնում է հասարակաց խղճմտանքին:

Չորեքշաբթի գիշերը, նոյեմբերի 23-ին ժողովրդի մեծ մասը թէև փախել թաղնուել էր գետի ձորում և քարայրերում, բայց կային մի քանի ծերեր, հիւանդներ, երեխայք, որ պատահմամբ կամ անից յետ էին մնացել և թաղնուել էին գիւղի շինութիւնների խորշերում, մարագների դարմանի տակ,

խոտերի մէջ, հորերի մէջ, մի խօսքով՝ ով ուր կարող էր կամ ում ինչպէս կյանքողուէր թաքնուել: Հետեւեալ օրը հինգշաբթի, ամսի 24-ին գիւղի մէջ հպարտութեամբ իշխող թուրք խուժանը կալանաւորում էր այդպիսիներին, որոնց կամ սպանում էր կամ գերի վերցնում ու քշում դէպի թուրք գիւղերը:

Խուժանը հինգշաբթի օրը գիւղով միայն չբաւականացաւ, վրէժխնդրութեան հոգևով լինաւ իջաւ Խաղնի ձորը, և յարձակուեց Քոզ փըր փընջան մեծ այրում պատնարուած 700—800 երկու սեռի և զանազան հասակի մարդկանց վերայ ու սկսեց կոտորածը: Թուրքերն անցան գետի ձախ ափն և այնտեղ դիւր գրաւելով՝ սկսեցին զնդակահարել այրը: Աջ ափում, Կապ կոչուած գոտարամառչելի ժայռում ամրացած երկտասարդ Պետրոս Երատեանցն էլ հակառակ կողմից կրակ թափեց խաժամուժ, արիւնարբու ամբոխի վերայ և իրար յետեւից 36 թուրք սպանեց: Վերջն՝ փամփուշտն սպառելով՝ ինքն էլ ընկաւ թշնամու զնդակից: Այդ սահմանում միայնակ չէր Պետրոս Երատեանցը, ուրիշ հայեր էլ մի այլ կէտից հրացաններ էին արձակում թուրքերի վերայ: Հայերն այդ տեղ զոհ տուին մինչև 12 մարդ, բայց իրանք էլ բազմաթիւ զոհ առան, որոնց թիւն անկարելի եղաւ իմանալ թուրքերին յատուկ գաղտնապահութեամբ:

Թշնամու զնդակներն այնքան բազմաթիւ էին, որ ժայռերին զիպչելով կտոր կտոր էին լինում և կողմնութեւ անբարգաւաճամբ դիպչում էին մարդկանց երեսին: Սրանից վնասուեցին Վարդան Սիմոնեանի և Մելիք Յարութիւնեանի մի մեծ աչքը: Այդտեղ զոհ գնաց քաջամարտիկ երկտասարդ Խաչատուր Պետրոսեան Ղուկասեանցը, և վերջ ստացան Գալուստ Եւաքեանցն և ուրիշները:

Վերև, բէգերի կարգում յիշած ոմն Զիաթխան բէգն, որ իւր խմբով այդ ձորում այդ օրը, հինգշաբթի հալածում էր փախստական հայերին, մի քանի ընկերով, դադա ճանապարհով անցնում է հայոց կողմը և թաքնուում է թիւերի մէջ Քոզ փըր փընջան այրի գլխին, ուր պատսպարուել էին բազմաթիւ հայեր և փորձում է այդտեղ վերելից զնդակներ ուղարկել այրի մէջ: Սակայն լաւ հրացանաձիգներից մէկը մի զնդակով այրի միջից այնպէս է խփում այդ Զիաթխանի ճացած այրի դուռը: Վերևում նրա ընկերներն են նրա զէնքն առնում փախչում, իսկ վարում հայերն են կողոպտում վերայից հազուստն ու լանջակապ փամփուշտները, գիակը թաղցնելով քարանձաւների մէջ: Մի քանի օրից յետոյ Գրեգոր քա-

հանայ տէր Արքայաճամեանցը դանում է գիւղը և ուսերի վերայ դուրս բերում քարանձաւից. բայց սրա մասին քիչ յետոյ:

է.

Փոքրիկ Անահիսը: Մանուկների կոտորածը: Ազգակիցների խմբովից կոտորածը Առաքելի ձեռքով: Մահացած բաղագիների քիւր:

Մութը հասնելուն պէս թուրք ամբոխը ցրուեց, անհետացաւ, որով միջոց եղաւ պաշարուած հայերին դուրս գալ այրից և Քեամանդարի գլխով գիշերային մթութեան մէջ փախչել նախ Ֆրէզէկէկայ ուս գիւղն և այնտեղից Չարգախլու, ուր ուրբաթ առաւօտ միանում են երեկուայ փրկուած խմբի հետ:

Գրանց հետ փախչում է և Յոհաննէս Շուշանեանն իւր հնգամեայ Անահիտ դստեր հետ: Սակայն մի ինչ որ հոգեկան ցնորքի աղբեցութեան տակ նա՝ շոկուում է և ընկնում գիշերը Բադա գիւղը, մանում է իւր տունը, ուր քնացել է մատաղ աղջկանը, պտտուել է գիւղը, տեսել է թուրքերի սայտաղ աղջկանը, պտտուել է գիւղը, տեսել է թուրքերի սայտաղ ծանրաբեռնուած աւարով, սպա մինչև առաւօտ հասել է Չարգախլու և այդ տեղ ուշքի դալով, նոր մտաբերել է Անահիտին, բայց արդէն ուշ էր և Բադա վերագառնալն վտանգաւոր . . .

Ուրբաթ առաւօտ՝ մի քանի թուրքեր Խըննալի գիւղից աւարի տարով Յոհաննէս Շուշանեանցի ցորենի ամբարը, գլուխնուած անցնելով Յոհաննէս Շուշանեանցի տանից լինելը պատահամբ լսելով Համիդ բէգ Շուշանեանցի տանից լինելը պատահամբ լսելով Համիդ բէգ Զիւլգադարովը աղջկան բերում պահում է իւր մօտ և երբ հայ խմբի հետ դալին է Բադալից և Տէր Ներսէս Տէր Յարութիւնեանցը, Համիդ բէգը ցոյց է տալի նրան փոքրիկ աղջկանը և խնդրում է ճանաչել, թէ ով է: Քահանան իսկոյն ճանաչում է, որ բէգերին քաջածանօթ Յոհաննէս Շուշանեանցի դուստրն է: Մանկան լացը հանդուստացնելու և երկխոսելու պահու համար յանձնում են նրան խմբի մէջ եղող Յոհաննէս Շուշանեանցի քրոջը, որ բոլոր ժամանակ իւր հետ պտտեցնում է մանկան մինչև Շամշադին, Ղադախ, Քարվանսարայ և այնտեղից Գանձակ, ուր Միւրախ բահանայ Տէր Աստուածատուրեանցի տանը Յոյ խնամուելուց յետոյ յանձնուում է իւր ծնողներին: Այս քահանայի ասելով մանկան անունն է Վարդանոյշ:

Այսպէս ուրեմն 1905 թուի նոյեմբերի 23 և 24 թուին,

չորեքշաբթի գիշերը և հինգշաբթի ցերեկ ու գիշեր փախստահան բաղադրանքից մի քանի հարիւր հոգի երկեսու անձինք, ամեն հասակի, պատասպարուեցին Խաղնի ձորի ժայռապատ այրերում քաղցած, ծարաւ և սարսափահար: Սարսափն այնքան էր ազդել հայ ամբոխի վերայ, որ շատերը կարծես հոգեպէս հիւանդ լինէին: Ապացոյցի համար ես կըբերեմ հետևեալ փաստերը:

Բայց, Աստուած լմ, ինչպէս սառնութեամբ դրել անցնեմ լսածներս, որպիսի խօսքերով նկարագրեմ դարհուրելի տեսարանները և քստմանելի իրողութիւնները:

Չորեքուր և քարանձաւներում թագնուած ամբոխը շունչը պահում էր, ձայնը կուլ էր տալի, որ չմտանուի հալածող անդուր թշնամուն: Փոքրիկ ծծկերները չէին հասկանում զրուրթիւնը, չէին կուլ տալիս իրանց ձայնը. այդ իտքերիկ արարածներին կարծես Աստուած մահուան ճակատադրի համար էր լոյս աշխարհ բերել այդ անիծեալ օրերում: Ո՞ր սաստը կամ խրատն ընդունակ էր այդ դարհուրելի բոպէին աղդել այդ անմեղ, տհաս, անդիտակ արարածների վերայ: Հէնց դրանից էլ նրանք իրանց լացով կարող էին յայտնել իրանց տեղն և ամբոխին մատնել թշնամու ձեռքը:

Աւտտի մեծերի, հասկացողների և հասարակաց կեանքն ազատելու համար հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել, և միջոցն էր լուեցնել անհասկացողներին, մանուկներին, ծծկերներին, բողբոլին անմեղ արարածներին՝ կեանքից զրկելով նրանց: Պաշարման անիծեալ բոպէին շատացան մանուկների թշնամիներն ոչ միայն ամբոխի մէջ, այլ և ծնողների շարքում: Ամբոխն անգթաբար պահանջում էր մահուամբ կտրել ծծկերները ձեռք և ծնողները կաաարում էին այդ պահանջը . . .

Մենք մէջ չենք բերում ծնողների և նրանց խօղխողուած և քարերի ու ժայռերի մէջ ձգած ու գահալէժ արած զաւակների անուէները:

Այդ մուկդնութեան բոպէներն եղել են անձնուէր, գթած հայ և թուրք անձինք, որպիսին է Ադամ Բաբայեանցի կինը:

Սարգիս Մակարեանցն անտալով իւր կնոջ՝ մանկան մօր աղեխարշ լացին, իւր 8 օրական Սիմոն որդուն չէ մորթում, այլ փաթաթում է շորերում տէրունական աղօթքը կարդում լսաչափնքում և փակում է ժայռի ծոցում: Հետևեալ առաւօտ բաղացի Ադամ Բաբայեանցի կինը, որ փախուստի բոպէին կորցրել էր իւր ամուսնուն և ձորում իւր ծծկեր մանկանը կրծքին սեղմած թափառում էր փրկութիւն գտնելու, յանկարծ դուրս է գալի Սարգիս Մակարեանի ձգած մանկան վերայ, մայրական գորովով լն՝ վերցնում է և այդ բեռը և երկու մանուկով յան-

կարծ դուրս է գալի Բաղա ու մտնում իւր տունը: Մի գթատիրա թուրք անսելով, որ այդ հերոս կինը պահպանել է ոչ միայն իւր այլ և ուրիշի զաւակը, ազատում է դրան միւս թուրքերի մահուան սպառնալիքից և իւր ձեռով գիշերը հասցնում է այդ կնոջն երկու երեխայով Ֆրէզէնկայ գիւղը: Ապա տեղական մի ուսուցիչ օգնութեամբ կինը յաջողութեամբ հասնում է Չարգախլու: Այստեղ հանդիպում են Մակարեանց ծնողները, լսում են իրանց զաւակի փրկութիւնը, և լալիս են և ուրախանում, բայց չեն վստահանում վերցնել նրան տիկին Բաբայեանցի: Հասարակութիւնը վճռում է, որ մանուկը պատկանում է նրա ազատարար տիկին Բաբայեանցին: Մակարեանց ծնողներն աղերսում են թոյլ տալ պահել, մեծացնել Սիմոնին և էլի յանձնել նրան իւր ազատարարին:

Գրեգոր քահանայ Տէր Աբրահամեանցը Չիաթխան բէգեղիակը որոնելու ժամանակ պատահմամբ գտել է Խաղնի ձորում մի քանի կիտակենդան կանանց և երեխանց շարքում նաև մի ամսական երեխայ, որին վերցնելով բերել յանձնել է նրա փախած ծնողներին:

Այս միայն յայտնիներն են, հապա որքան մանուկներ կորած՝ մահացած կիլինին, որոնք դեռ ևս յայտնաբերածուած չեն:

Ես կը յիշատակեմ մի ցնցող անցք էլ, որ ունի արտահարզ բնաւորութիւն:

Բաղայի նոյեմբերի 23-ի յարձակման ժամանակ մի առիւն փախել են դէպի Խաղնի ձորը հետևեալ ազգականները: Առաքել Սարգսեան Աւագեանց (Կլմանանց), որս մայր Մարիամը, Առաքելի ամուսին Չարահիլը, սրանց ամուսնացած դուստր Վարինկա, միւս զաւակ Աննա և Մարգարիտ աղջկունք և Յարութիւն, Գարեգին և Խլան աղայքը, Առաքելի հանդուցեալ եղբոր Առուստամի աղջիկը: Այլ և Սարբեգ Նիկողոսեանց, որս կինը և մի որդին, Աւետ և Մուխի Նիկողոսեանցների կանայք և սրանց հինգ զաւակները, Առաքել Նիկողոսեանց իւր մայր Ազիզը և կինը և այս Նիկողոսեանցների հօրեղբոր Գասպար Նիկողոսեանցի կին Ելբաղը, ընդամենը 24 հոգի մօտ ազգականներ: Խաղնի ձորում թագնուած ժամանակ հեռուից հրացանների ձայներ են լսում և ենթադրում են, որ թուրքերը գալու են և իրանց կտորելու, իսկ պաշտպանութեան համար ունին միայն մի հրացան, որ Առաքել Նիկողոսեանցի ձեռքումն է:

Այս Առաքելն ամբողջ գիշեր հրացանը ձեռքին գետի ափում շարունակ դադանի պատում էր և շուտ—շուտ խորհրդաւոր կերպով շշնջում էր իւր մօր և կնոջ ականջին: Մի շշուշ ընկաւ այդ խմբի մէջ, որ իբրև թէ Առաքել Նիկողոսեանցը

մտադրուած է բոլոր խումբն ոչնչացնելու, որպէս զի թուրքերի ձեռքը չընկնեն: Առաքելը կոշտ, կոպիտ, կռուարար, գող մարդ էր և խուճըն իրաւամբ այդ բոլորէն վախենում էր նրանից և մանաւանդ նրա մօրից՝ Ազիզից, որ կարծես խորհրդակից էր Առաքելին: Ա՛ւր զիմեյ, մւմ ապաւենեյ, մի կողմից թուրքն է սպանում, միւս կողմից կոշտ Առաքելն հրացանը: Աւետը և Մուխին փախել էին ուրիշ կողմի վերայ, Սարիբէգն էլ մի հեղ և ճաղիկից վնասուած աչքերով մարդ էր, որ մինչև անգամ կարծելով թէ իւր խորթ եղբայր Առաքելն իրան է ուղում սպանել, խնդրում էր իւր խորթ մօրը Ազիզին՝ որ գոնէ խնայէ իւր միակ մանուկ որդուն:

Չանցաւ մի քանի ժամ և անա Առաքել Նիկողոսեանցը գնտակահար է անում իւր վեհայ Կըլմանանց Առաքելին, ապա սրա կնոջն իւր քրոջ Չալահիբին, իւր խորթ եղբայր Սարիբէգին, սրա կնոջն ու որդուն և այլոց: Այդ սոսկալի տեսարանից զարհուրած՝ Աւետ Նիկողոսեանի կին Մարգարեան իւր Գրեգոր մանկանը գրգռած 5—6 արշին բարձրութեան ժայռից իրան ձգել է լճացած գետի մէջ յաւ համարելով խեղդուել, քան գնդակահար լինել: Ստիպոյն նախախնամութիւնը պահպանում է նրան և նա մազլցելով միւս ամիս ժայռը դուրս է գալի և փախչում իւր մանուկով և խառնուելով այլ խմբի հետ հասնում է Չարգախլու:

Ապա գաղանի կերպով փախչում է և ազատում Գասպար Նիկողոսեանի կին Ելբազը: Մուխի Նիկողոսեանի 5 տարեկան աղջիկն իւր մօր սպանուելուց յետոյ սարսափահար ընկնում է մարդասպանի մօր-Ազիզի գիրկն ու ազատուում է: Եւ այսպէս վերոյիշեալ 24 հոգի խմբից ազատուում են Առաքելի գնդակից միայն եօթ հոգի: Ուրեմն Առաքել Նիկողոսեանցն այդ զիշեր սպանել է տառն և եօթը հոգի իւր ազգականներից:

Այդ անագին բաղմութիւնն ոչնչացնելուց յետոյ Առաքելը հանգստութեամբ սկսում է կողոպտել սպանուածներին, վերցնում է նրանց վրայի երեցող իրերը և յանձնում է իւր կնոջը, հանում է իւր վեհայ Առաքելի վրայից հագուստն և հազնում է ինքը, իսկ իւր հարազատ քրոջ աղջկայ զլխի շալը կապում է իւր վիզը և ապա գիակները մի աեղ հասարած ինքն և իւրայնը հանգիտ կերպով մի այլ խմբի հետ դուրս են գալի Չարգախլու և ապա Բարսում, ուր մնում է բաւականին, բայց անցքի մասին ոչինչ չէ յայտնում: Իսկ հասարակաց կարծիքն ընդունում էր՝ որ 17 հոգի միատեղ սպանուել են թշնամի թուրքերի ձեռքով:

Նատ ժամանակ յետոյ գաղանիքը բացուում է երկու ա-

զատուած հարսների-Ելբազի և Մարգարեանի մեջոցով: Գաշնակ-  
ցականները լծուում են կեանքից զրկել Առաքել Նիկողոսեանցին  
այդ չտեսնուած արարքի համար, բայց նա ազատուում է վը-  
տանդից փախուստ տալով թուրքերի մէջ, ուր, ասում են,  
արգէն սպանուած է:

Հասարակութիւնը պաշել է այս անցքի վերայ և չգիտէ, թէ որպէս բացատրէ Առաքելի եղբրական արարքը, արդեօք կողոպուտի ցանկութեամբ թէ զարհուրելի անցքերից ազգուած խելագարութեամբ:

Իսպառ ոչնչացած այդ գերդաստանների շարքում հարկաւոր է գնել Գրեգոր Սարգսեանցի (Աննայեանցի) 5 հոգուց բաղկացած գերդաստանի ընթումն: Այս միամիտ մարդուն ձայն է տալի Կառիբ իւզբաշին, թէ Ալլահեար բէգը կանչուում է: Գրեգորը հաւատում է և հէնց գերդաստանով ձորից դուրս դալուն պէս ամբողջ գերդաստանով դո՛՛ է գնում Իրմաշլուեցի Մհար Հասան օղլու սրին: Միայն Գրեգորի կինը վիրաւոր մեռած ձեւանալով՝ ազատուում է:

Եւ այսպէս ուրբաթ օրը, Նոյեմբեր 25-ին այնէ Բաղայի— աւերման երրորդ օրը գիւղում այլևս ոչ մի հայ չկար: Ամբողջ գիւղը զրկուած իւր հարազատ ընակիչներից, մատնուել էր հրոտակների խմբերին, որոնք տէր էին դարձել հայերի զիզած հարստութեանը և առանց քաշուելու, առանց երկիւղի, թէ հայերի և թէ բարեխնամ կառավարութեան տեղական իշխանութիւնների կողմից, կրում տանում էին իբրև սեպհականութիւն հարուստ զիւղի ունեցածը: Նոր տէրերն ամենևին չէին շտապում, հանգստութեամբ էին գործ աեսնում և կրում էին ինչքը ընտրութեամբ, այսինքին նախ թեթև բաները, ապա բէ՛ ճարերը (ցորեն ևլն.) և վերջն արգէն շինութեան փայտեղէն մասը, դռներ, դերաններ, տախտակներ, և այլն: Եւ այս հանգիտ աւարը շարունակուեց երեք ամիս:

Երեք օրում, Նոյեմբերի 23, 24 և 25, այդինքն քանի օր որ շարունակուեց կռիւն և հայերի փախուստը, Բաղայում, Գոմբում և Պաղին ձորում ընդամենը, ինչպէս ցայց են տալիս ժողոված տեղեկութիւնները, մահացել են մի հարիւր տասն և վեց (116) երկուս և զանազան հասակի հոգիք: Այս կօրուստը կվերաբերի բաղմութիւ գերդաստանների, այսինքն կան գերդաստաններ, որո՞ք զրկուել են մի կամ երկու անդամից, կան որ մարդկային կրուստ չեն ունեցել: Բայց երեք գերդաստան բոլոր անդամներով իսպառ ոչնչացել են: Սրանք են վերը յիշատակուած Առաքել Աւագեանց (Կըլմանանց) կոտուած իւր աներձագ Առաքել Նիկողոսեանցի ձեռքով: Սարիբէկ

Նիկողոսեանց՝ կոտորած իւր խորթ (երկրորդ մօրեց) եղբայր նոյն Առաքել Նիկողոսեանցի ձեռքով և Գրիգոր Սարգսեան (Աննայեանց) կոտորած Կաղիբ իւղբաշու նենգութեամբ և Մհար Հատան օղլու ձեռքով:

Ը.

Բաղադրների փախուսք դեպի Չարդախլու եւ այլ գիւղեր, դիմումն Գանձակի գեներալ-նահանգապետ գեներալ-լէյտենանտ Ֆլէյշերին եւ Կովկասի Փոխարեայ Կոնս Վորոնցով-Կաշկովին:

Փախտաւոր ժողովրդի ամենախոշոր մասը ճանապարհ ընտրեց դէպի Չարդախլու և հետևապէս միւս հայ գիւղերով դէպի Գանձակ: Չարդախլուի հասարակութիւնն, որ նոյնպէս նեղ դրութեան մէջ էր, երկու անգամ արդէն ենթարկուել էր թշնամու յարձակման և երկու անգամն էլ հերոսաբար կարողացել էր անդրադարձնել թշնամուն մեծ կորուստ աւելով նորան, կարեկցաբար ընդունեց փախտաւոր հալածուածներին, առժամանակ պատուարեց նրանց իւր ընտանեացիներով և կարելոյն չափ սահմանափակեց նրանց քաղցն ու ծարաւը:

Կարեկից ժողովրդի պարագլուխներն էին Գէորգ քահանայ Մանասեանց, Մակար քահանայ Տէր-Ստեփանեանց, տանուտէր Պետրոս Բաբաջանեանց, Խաչատուր Գոսպարեան և այլք, որոնք իրանցից ոչխարներ էին մորթում և հասարակաց բացօդեայ սեղանի վերայ կերակրում համայն փախտաւորներին:

Վերջիններս մի առժամանակ մնալով Չարդախլուում, սրտով այրուում էին իրանց հայրենիքի վերայ, իրանց քաղքայուած օջախի վերայ, մանաւանդ իրանց մերձակօրների վերայ, որոնք սպանուել, մնացել էին դաշտերում և քարանձաւներում՝ իբրև թռչնոց և գաղանձների կերակուր: Բաղայի աւերումից 8—10 օր յետոյ մի քանի բաղայիներ մտադրուեցին վերադառնալ մնասին գիւղը, աեսնել նրա դրութիւնը, արտասուք թափել անցեալ փառքի վերայ և, եթէ հնարաւոր լինի, թողել իրանց հարազատների զիակները:

Եւ անձնական ապահովութեան համար նրանք նախապէս զիմեցին Սլուեանկա ռուս գիւղում գտնուող կաղակների օգնութեան, որոց գլխաւորն էր հայազգի Ալլահվերդովը: Յիսուն կաղակների հովանաւորութեան ներքոյ բաղայիք վաղ առաւօտ ժողովեցին հանգուցեալների նշխարները տանել ամբողջութեամբ: Եւ այդ ժամանակ գիւղի փողոցներում շինութեան փայտերով

բարձած կանգնած էին 45—50 սայլեր, որոնց թուրք տէրերը կաղակների անկիւնի վախել թագնուել էին: Այդ միջոցին յանկարծաճառ երեւոյց Բաղայում Ալլահեար բէգ Չիլդազադային սպիտակ շորերով, շրջապատուած թուրք ձիաւորներով: Սրաներկայութիւնից թագնուած թուրքերը սիրտ առան և դուրս եկան և կաղակների քիչ հեռանալուց օգտուելով սկսեցին հրացաններ արձակել հայերի վերայ: Լուռ հանդիսատես կաղակները բացատրեցին, որ իբաւունք չունին դէնքով լաւանուելու, որից ստիպուած՝ հայերը դադարի մէջ թողնելով Պօղոս Եաւրիեանցի զիակը և միւսների նշախները՝ փախան Չարդախլու:

Բաղայիք տեսնելով Չարդախլուի վտանգաւոր դրութիւնը մտադրուեցին հեռանալ դէպի Չարդի ու Գանձակ, բայց զիջանելով չարդախլուեցոց թախանձանքին, նորից մնացին, որպէսզի կռիւների ժամանակ օգնական լինեն: Իսկ չարդախլուեցիք որոշեցին զիմել Գանձակի գեներալ նահանգապետին և թուրքերի յարձակման դէմ ջորք խնդրեցին: Խնդրը յանձնուեց բաղայի Մետրոք քահանային, որ երկու հայ ուղեկիցներին հետ ծագեալ ընկաւ ճանապարհ: Այդ միջոցին Չարդի գիւղի հասարակութիւնը թուրքերի յարձակումից վախենալով լսմբովին տեղափոխուի էր Բարսում և Գառնակեր գիւղերը:

Երկուշաբթի, նոյեմբերի 28-ին, Մետրոք քահանայն ներկայացաւ Գանձակի յաջորդ Կորելն վարդապետին, որի միջնորդութեամբ և դէներալ նահանգապետ գեներալ Ֆլէյշերին: Գեներալը ապշած լսում էր քահանայի բերանացի զեկայումբ Բաղայի թարմ կորստեան և Չարդախլուի պաշարուած դառը վիճակի մասին, անգամ գժուարութեամբ էր հաւատում պատմուածին և զարմանում էր, որ մինչև այդ րոպէն ոչինչ չէ իմացել ոչ տեղական ոտականութիւնից և ոչ Ալլահեար բէգից, որ երկու օր առաջ իւր սօսն է եղել:

Գեներալ Ֆլէյշերը նոյն օրը կազարեց, որ մի զօրաբաժին մի թնդանօթով հապճեպ գնաց երկաթուղով Գալլար և այնտեղից Չարդախլու: Զօրաբաժինը ճանապարհ ընկաւ հետևեալ օրը, երեքշաբթի, նոյեմբերի 29-ին, որոնց հետ և Մետրոք քահանայն թուրքերից ապահով կարողացաւ հասնել նոյն օրը Քիֆլիզ:

Գեներալներին 1-ին, հինգշաբթի օրը Մետրոք քահանայն երկու հայ պարսնների առաջնորդութեամբ ներկայացաւ Ք. Ֆլիզի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթուրեանին, ոյն իւր կողմից ներկայացրեց քահանային իւր ուղեկիցներով հանդերձ Վեհափառ Հայրապետ Խրիմեանին, որն այդ միջոցում Քիֆլիզում էր: Վեհափառ Հայրապետ խիստ յուզուած ունկնդրեց Մետրոք քահանայի սրտաձմիկ պատմութեանը Բաղայի

ստսկումսերի մասին, ժողովրդի դառնադէտ վիճակի մասին և արտասուեց: Մետրոք քահանայի ցնցողական տեսնելով՝ Վեհափառը հրամայեց հագուստ կարել տալ նրա համար, կարևոր ծախսերն ապահովացնել, նուիրելով և իրանից 10 ուրբի:

Վեհափառ Հայրապետը պատուիրեց նոյնպէս, որ շուրափոյթ հոգան Բաղայի ժողովրդի համար ուղարկել հագուստ, անկողին և այլն, իսկ նպաստամատոյց ժողովը յարկացրեց 5000 ուրբի ալիւր դնելու:

Նոյն 1905 թուի Գեղեմեմբերի 3-ին Մետրոք քահանան առանձին խնդրաբով ներկայացաւ Փոխարքայի արքունիք, ուր Փոխարքայի տեղ ընդունեց նրա օգնական գեներալ Մալաման:

Խնդրագիրը կարդալուց յետոյ գեներալ Մալաման գանադան հարցեր առաջարկեց քահանային: Քահանան բանաւոր կերպով խնդրեց կարգադրութիւն անել ազատելու այն 800 հոգի գերիններին, որոնք տարուել էին Խըննայի գիւղն և թէ այդ գործը կարող է լուրս բերել միայն Ալլահեար բէգն, եթէ Քիֆլիզից նրան հրաման դնայ: Գեներալ Մալաման խոստացաւ անյապաղ կատարել վերջին խնդիրն, իսկ դրաւոր խնդիրն ուշադրութեան առնել:

Բաղեցոց նպաստ հասցնելու գործն այնքան էլ արագ չէր կատարուում, որովհետեւ այդ ժամանակամիջում երկաթուղիների դործադու էր և Մետրոք քահանան իւր նպաստներով հաղիւ կարողացաւ 1906 թուի յունուարի առաջին օրը դուրս գալ Քիֆլիզից Գանձակ յաջորդի մօտ, որը լիազօր էր նպաստները բաժանելու: Վարդապետն սկսեց բաժանել այն բաղաջիններին, որոնք այդ միջոցին հասել էին Գանձակ: Նպաստ բաժանելու լուրը հրապուրեց քաղցած բաղայիներից շատերին դէպի Գանձակ: Բայց նրանցից շատերը դեռ բաժանուած էին հայ գիւղերում, մանաւանդ Բանանց և Խաչկապ գիւղերում:

Մի խումբ բաղայիներ կարիքից ստիպուած ճանապարհ ընկան դէպի Գանձակ և Բրաջուր գիւղը հասնելով ընկերացան մի քանի սայլապանների, որոնք սայլերով խոտ էին տանում Գանձակ ծախելու: Հասնելով Քոփալ Հասանլու թրքաբնակ գիւղը՝ փախստական խումբը նոյնպէս և Բրաջուրցի սայլապաններն ենթարկուեցին յարձակման աւաղակաբարոյ թոփալ հասանլուեցոց կողմից, որի ժամանակ սպանուեց մի Բրաջուրցի սայլապան, հրդեհուեցին՝ սայլով խոտերն ու գերի դնացին իննը բաղայի—այն է երեք կին և վեց երեխայ աղջիկ ու աղայ: Բացի դրանից այդտեղ հրդեհուած սայլի խոտի վերայ կիսով չափ այրուեցին և այդ գնդակահար եղան ու Գանձակում թաղուեցին բաղայի Առուշանց այրի Չափահերն և որդի Յոհաննէսը:

Քոփալ Հասանլու գիւղի աւաղակաբարոյ վարմանց և հայերի վերայ յարձակմանց մասին իւր ժամանակ—(1905 վերջում և 1906 թուի սկզբում) շատ դուրեց Քիֆլիզի հայ լրագրներում և դատ պահանջուեց նրանց դէմ արժանապէս պատժելու համար:

Ինչպէս թօփալ-հասանլուեցիք գերիններն տարան Գանձակի Բաղմանլար կոչուած արուարձանը: Գեներալ Նահանգապետ գեներալ Ալֆրանի հրամանով, որին խնդրել էին տեղական հայերը, Գանձակ գետի կամրջի վերայ փոխանակեցին թուրք գերինների հետ: Փոքր յետոյ, նոյն այդ խաղաղասիրութեան միջնորդ կամրջի վերայ փոխանակեցին բանանցեցի Սարգսի աղջկանը և բաղայի Աւէա Բաղդոյեանի Բալախանում կնոջը, որին գերել էին թուրքերն Աննենֆելդ գերմանական գաղութում և տարել էին Ղափանլու թուրք գիւղն, որ դրած է, Կուր գետի աջ ափում, Ծամբոր գետի միացման տեղը: Բալախանումն իբնէ Չղային հիւանդ էր, օգնութիւն էր որոնում միշտ զանազան ուխտատեղիներում և այնքան էլ խելահաս չէր: Ղափանլուում նա արդէն ամուսնացել էր մի թուրքի վերայ: Երբ Բալախանումին բերին միջնորդ կամրջի վերայ փոխանակելու, նա նոր թուրք ամուսնուն նախադաս համարեց ճին հայ ամուսնուց, դուրսէ և վախեցաւ սպառնալիքներից ու հրաժարուեց փոխանակուելուց: Սրա մասին խօսեցին Քիֆլիզի հայ լրագրների թղթակիցները: Սակայն Բալախանումը շուտով մեռաւ իւր նոր հայրենիքում:

Գեներալ Ֆլէյշերի նոյեմբերի 29-ին ուղարկած զօրախումբն ազատեց Չարգախլուն թուրքերի յարձակումներից: Չարգախլուեցիք սկզբում սիրով ընդունելով բաղայիներին յետոյ բնականաբար ձանձրանալ սկսեցին նրանցից, թէև փախստականների մեծամասնութիւնն աստիճանաբար արդէն ցրուել էր շրջակայ հայ գիւղերում մինչև Գանձակ:

Այսպէս բացի Չարգախլուից, բաղայիք կային նաև Չաղիլ, Բարսում, Գառնակեր, Փիւք, Խաչկապ և Բանանց գիւղերում, ուր տեղական ժողովրդականք շատ կարեկցաբար էին վերաբերում և աշխատում էին ամուրել նրանց վիշաք: Այսպէս օրինակ Չաղիլում նշանաւոր էին Յոհաննէս քահանայ տէր Խաչատրեան, Աբգար Գրիգորեանց, դարբին Խաչատուրի որդի Առուստամ և այլք: Ամբողջ հասարակութեամբ կերակրում էին ոչ միայն իրանց հիւրերին, այլև մօտ լինելով ուղարկում էին բաղայոց համար Չարգախլու ալիւր, հաց, լոբի, կարտոֆէլ, և այլն: Բարսումում պարագլուխ էին Եփրեմ քահանայ Մելիք Առուստամեանց, Վասիլ բէգ Մելիք Առուստամեանց, Սարգիս

Աղաջանեանց գիւղական տանուտէրը և այլք: Գաւնակերում Յովսէփ քահանայ Բաշեանց և միւսները: Փերում-Յահաննէս քահանայ Խոջայեանց և Մովսէս քահանայ Մամիկոնեանց, գիւղական տանուտէր Նաւասարդը և միւսները: Այս գիւղում բացի կերակրելուց, տալիս էին և հագուստ, անկողին, սանամաններ և այլն: Խաչկապում-Գրիգոր քահանայ Շուղըքեանց, Անանիա քահանայ Շերակունի, Յահաննէս քահանայ տէր Ստեփանեանց, տանուտէր Պաւլի-Եպիսկոպոսեանց և այլք: Բանանցում-Պողոս և Անտոն քահանաները, տանուտէր Ղուկասը, Վաղդէն Տէր Աւետիքեանց, Յարութիւն Սիրուն-Նանեանց և այլք: Գանձակում ձրեայէս տուել էին իրանց տները Կարապետ Յաթաղեանը, Յովսէփ Քեատիմեանցը, պարոն Շամխարը. ընդհանուր վերահսկիչ էր երեցփոխ Սիմոն Բարաբեօխլեան:

Չի կարելի մոռացութեան տալ Արթաիս գիւղի ռուս-գուլթաբու երեք եղբայր Խուզակովների նուէրը թշուառ բազացիներին օգտին: Բացի այն, որ երեք հարիւր փութ ցորեն ծախելով 10 տոկոս զիջում արին իւրաքանչիւր փութում, երեք եղբայրները միասին նուիրեցին 200 փութ ցորեն և կարտոֆէլ:

Բազայի փախտականներն իրանց գոյութիւնը պահպանելու համար ցրուած էին զանազան հայ գիւղերում: Արպէս զե որչ լինի նրանց քանակը, յիշատակում եմ այստեղ այն ցուցակն, որ կաղմել է բազացի Մեսրոբ քահանան, երբ նա նպաստներ բաժանելու նպատակով շրջել է գիւղերը 1906 թուի յունուարին և փետրուարին:

Գիւղերն եւ խորաբ	գերդասան	արական	իգական	բոլոր
Չարգախլու . . . . .	47	153	130	283
Ջագիր . . . . .	2	5	6	11
Բարսում . . . . .	15	54	64	118
Գաւնակեր . . . . .	1	4	2	6
Փիք . . . . .	2	8	5	13
Խաչակապ . . . . .	33	109	106	215
Բանանց . . . . .	61	207	173	380
Գանձակ կայարանում . . .	27	73	67	140
Գանձակ (քաղաք) . . . . .	89	267	231	498
Ընդամենը	277	880	784	1664

Աւրեմն Գանձակի գաւառի հայ գիւղերում պատասպարուած էին 1906 թուի ձմեռը 1664 հոգի բազացիներ, որոնց թուում այդ ժամանակ կային կռուի մէջ վիրաւորուած 17 աւրական և 8 իգական, բոլորը 25 հոգի 19 գերդաստանից: Ժո-

ղովղղի միւս մասն, ինչպէս տեսանք վերեւում, գնացել էր այլ ուղղութեամբ, դէպի Շամշադինու գիւղերը Ղազախի գաւառի և նրանց մենք զեռ ևս թողել ենք Քեշիշքեանցում և Բագլիում:

Թ.

Հասնի դեպի Բաղիգ գիւղը եւ կողպուսի երթարկուիր: Կանգ Զիւլգադարով բեգերի մօտ: Հայերը մէջիպում. Գրիգոր Բահաւայի հետախուզուիրը. Ոմանց հայերի բնակավայրը Քեիօբեանցում:

Փախստական Բազացիները մի ստասար մասը սարսափի տակ իրան ձգեց, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներում Խաչնի ձորի անտառները: Այդտեղ ան սարսափից ձայն ծպտուն չէին հանում, որ չմասնուին գազանաբար հալածող թշնամու սրն ու գնդակին: Գլուխը կորցրած չգիտէին որ կողմն վերայ գնան և ուր թաղանուեն: Ժողովուրդը վայր է վերջ բաժանուել էր պատահական խմբերի: Ահա առաջին խումբերից մինը թեքուեց դէպի հարաւ և մթան մէջ ցլիւ գնում էր: ձանապարհը ժայռատ էր և անտառապատ, որից վերելեան է բարձրանում, ներքե ձորն է խորանում: Հասան այնտեղ, որ կոչուում է Սուլթան-Սաքիւ, Թաքեայ-դայա թըրքաբնակ գիւղի դէմ: Այս գիւղը և նրան կից Քէշ'բաթ գիւղը միասին կոչուում են Սագլըխու:

Այս գիւղերի բնակիչներից մի խումբը թուրքեր վաղբաջ ընդ առաւօտն ձանապարհ էր ընկել դէպի Բագա թաւանից մասն ու բաժին հանելու իրան: Սրանք չէին սպասում, որ որսն ինքն իրան է որսորդներին առաջ դուրս եկել: Բազացիք նոյնպէս չէին սպասում: Ձինուած թուրքերը գիւղերը շրջապատեցին փակըտտական բազացիներին և սկսեցին անողորմաբար թաւանել, խլում էին հայերից զէնքեր, փամփուշտներ, հագուստեղէն, սանամաններ, դրամ, մի խօքով ամէն բան, ինչ որ ընկնում էր նրանց ձեռքը:

Հայ խմբի մէջն էր և Բազայի կառավարութեան գիւղական գաղտնի աւագ-ուսուցիչը՝ Գանձակի Միլրտիչ քահանայի որդի երիտասարդ Գագիկ Տէր Աստուածատրեանը: Սա տանում էր ձեռքին իւր բարձր և պաշտօնական զգեստը (մոնդիլը): Ի դուր էր հաւատացնում Գագիկը, որ ինքը ուսուցիչ է և այդ կոչման մէջն էր որսնում իւր իրեղէնների պաշտպանութիւնը: «Մի և նոյն է, հայ եր» բացատրեցին թուրքերը և խլեցին Գագիկից մինչև անգամ հագնի կոշիկները և թողին նրան բոքիկ. իսկոյն մինը հագաւ և կոշիկները և համազգեստը:

Անտօն Տէր Վարդանեանը կողոպտողից խնդրեց նրա հին տրեխները, հագաւ ինքը և իւր չուստերը հագցրեց ուսուցիչ Գագիկին:

Այս կողոպուտի ժամանակ ահաբեկ ժողովրդի սարսափը այնքան խիստ էր, որ նրանցից չատերը իրանց ձգեցին ձորի, անտառի և քարերի մէջ և անհետացան մինչև հետևեալ օրը: Անձնական վրէժ ունենալով Խաչատուր Վարդարեանցի հետ՝ վերջինիս բռնեցին թուրքերը այդ տարաբաղդ միջոցին և կամենում էին սպանել նրան. բայց մի քանի հայերի խնդրանք և զլխաւորապէս իւր Վարդարեանցի թաղստեամբ խաւար անտառի մէջ՝ սպանութիւնը տեղի չունեցաւ: Սակայն այս միջնադէպի ազդեցութիւնից՝ Վարդարեանցի զրքանչ Թագուհի եղեանցը յանկարծակի անդամալոյծ եղաւ հէնց այդտեղ և այլ ևս չկարողացաւ շարժուել, որ և յետոյ մեռաւ Բերդ գիւղում (Շամշազինու գ.) Կողոպտեւուց յետոյ թուրքերը թոյլ տուին հայերին շարունակելու իրանց ճանապարհը:

Հայկական խումբը սարսափի ազդեցութիւնից չէր կարողանում հանդստանալ, երբ մտածում էր, որ մինչև Շամշազինու հայկական Ղուլալի առաջին գիւղը հասնելը պէտքէ անցնէր թուրք գիւղերի մօտով և ուրեմն ո՞վ գիտէ, թէ ի՞նչ փորձանքների պէտք է ենթարկուէր: Աւտի մտածեցին դիմել Ձիւլգագարով բէգերի օգնութեան, որոնք բնակուում էին 3-4 վերստ հեռաւորութեամբ, հէնց ճանապարհի վերայ: Վճռեցին մարդ ուղարկել բէգերի մօտ և կանխօրէն աղերսել նրանց հաճութիւնը: Վարդը գտնուեց: Խմբի մէջն էր Աղասոնց Վարտկրոսը, որ բոլոր լինելով՝ մօտ ծանօթ էր Ձիւլգագարով բէգերի հետ: Սա մի քանիսնների հետ յառաջ խաղաց մթութեան մէջ և հասաւ Բագլի գ գիւղը ուղղակի Աղիւ բէգ Ձիւլգագարովի մօտ:

Բագլի գ կոչուածը մի փոքրիկ գիւղ է Ձագամ գետի վերայ, հինաւուրց կամրջի մօտ, Բագայից դէպի հարաւ, 4-5 վերստ հեռաւորութեամբ: Խըննալու գիւղի մի մասը լինելով՝ կոչուում է Բագլի կ, ըստ որում նրան հիմնել են իրանց բնակութեան համար Ձիւլգագարով բէգերը և շրջապատել են գիւղը մի հասարակաց պարսպով, որի երկու կողմի լայն պարսպադռները փակուում են գիշերները:

Նշանաւոր կալուածատէր եղբարք Ձիւլգագարով բէգերը, Մեհրալի բէգ, Համիդ բէգ և Աղիւ բէգ իրանց ոչ սակաւաթիւ գերդաստաններով մշտապէս բնակուում են այդ Բագլի գ ու մ: Ալլահեար բէգ Ձիւլգագարով՝ թէև յիշեալների մեծ եղբայրը, բայց նա բնակութիւն է հաստատել սակաւ ինչ հեռու Բէշիշքեան գ կոչուած հայկական աւերակների վերայ:

Վերջապէս՝ նոյեմբերի 24, հինգշաբթի առաւօտեան հաւախանչին բոլոր Վարտկրոսը ներկայացաւ Աղիւ բէգին, յայտնեց փախստական հայերի դուրսիւնն ու գալուստը, որի համար Աբգիւլ-Բէգը հաճութիւն յայտնեց և հրամայեց իւր ծառաներին տեղաւորել հայերին առժամանակ գոմում: Հայերը լուիկ մնջիկ մօտեցան Բագլի գին, ուր թուրք գիշերապահները տեղեկութիւն չունենալով՝ բարձր հարցրին՝ թէ ո՞յք են մօտեցողները և պատասխան չստանալով մի հրացան թնդացրին օդի մէջ. բայց պատուէր ստանալով Աղիւ բէգից՝ լուեցին: Իսկ հայերի լուրսիւն պահելը դիտաւորեալ էր, որպէս զի վտանգաւոր հայ լինելը չյայտնուի:

Առաւօտեան լուսաբացին Աղիւ բէգը թաշկինակը աչքին, նայեց հեռուից թշուառ հայերի վերայ և ապա ամէն տեսակ վտանգից ապահով պահելու նպատակով, հրամայեց տանել հայերին մէչիդի ներսը:

Այս առաջին փախստական խումբն էր, որ այս ուղղութեամբ հասաւ Բագլի գ:

Հայերին մէչիդ հրաւիրելու նպատակն էր, ինչպէս բացատրեցին հիւրասիրողները ապահով պահել հայերին այն վրէժառութիւնից, որով համակուած են Բագայում սպանուած թուրքերի ազգականները:

Ծանօթ թուրքերը սկսեցին այցելել հայերին մէչիդում՝ բերելով նրանց համար հաց, պանիր, միս և այլն: Աւտելիք ուղարկեց և Աղիւ բէգը: Սակայն մարդասիրական վերաբերմունքը նսեմանում էր մի այլ տեսակի այցելութեամբ: Հէնց առաւօտուանից սկսեցին յաճախել զանազան ծանօթ և անծանօթ թուրքեր և մոլլաներ, որոնք առաջարկում էին փախստական հայերին ընդունել մահմեդականութիւն, քարոզելով որ հայութիւնն արդէն վերջացել է, այլ ևս ոչ մի հայ չէ մնալու երկրի երեսին, առաջարկում էին սափրիչ բերել: Քարոզիչները ամբողջ օրը գնում գալիս էին և կրկնում էին նոյն քարոզը: Զէին երևում մէչիդում միայն Ձիւլգագարով բէգերը: Հայերը խորին լուրսեամբ էին տանում քարոզները...

Անցաւ առաջին օրը, երեկոյեան դէմ հայերին դուրս բերին մէչիդից և բաժանեցին երկու մասի, մեծ մասը տարան գիշերելու Աղիւ բէգի բնակարանի ներքին յարկը, փոքր մասը նորից էլի գոմը: Բոլորը միասին մօտ 200 հայ էին: Երեկոյեան սաջի վերայ թխած հաց բաժանեցին ինչպէս Աղիւ բէգի կողմից, նոյնպէս և ծանօթ թուրքերի կողմից:

Աղիւ բէգի ծառաները զգուացնում էին փախստականներին պահանջելով նրանցից վառօդ, փամիուշտ և այլ իրե-

դէններ և մտնով էին սպառնում՝ եթէ մինը կամ միւսը կը յայտնէր բէգին: Այնուամենայնիւ Բրուտ Մարտիրոսը յայտնեց Ադիլ բէգին, որը խիստ յանդիմանեց ծառաներին, մանաւանդ երբ իմացու բէգը, որ Խաչատուր Եղեանցին մի թուրք պնդելիս է եղել, որ իւր ձեռքը մատը կտրել և մատանին հանի ու ապ թուրքին:

Հետեւեալ օրը, ուրբաթ, նոյեմբերի 25 հետզհետէ եկան նոր խմբեր և դիմեցին Մեհրալի և Համիդ բէգերի կարեկցութեանը: Սակայն պէտքէ նկատել, որ այս նոր խմբերը, որոնց մէջն էին և Բազայի երկու քահանայք՝ Տէր Ներսէս և Տէր Գրիգոր, նախ քան Բագլիգ հասնելը, նոյնպէս միւս խմբերի նման, մնացել էին շեւարած Խազնի ձորում, թէ մըր գնան և մըր դիմեն: Վերջին յոյսները գնելով կրկին Ձիւղադարով բէգերի վերայ, սրանք էլ, առաջին խմբի նման, դեպքան ուզար-կեցին բէգերի մօտ: Աճի երկիւղով վստահութիւն յայտնեցին գնալ վստահաւոր դիշերային ճանապարհ՝ Ղահրաման Գաթույեանց, Յարութին Գանիէլեանց, և երկու ուրիշները: Սրանք որոշեցին դիմել էլի Ձիւղադարով բէգերին, դիմաւորապէս Համիդ բէգին, որ թէև մի անուս, կոշտ ու կոպիտ մարդ էր, այնուամենայնիւ փախստական մի խումբ հայերի կարծիքով նա ազնիւ էր և վստահելի: Գեոպանները գնացին և չվերադարձան ամբողջ ցերեկ: Խազնի ձորում աճ ու դողով սպասող 700 հոգի հայ ժողովրդի տարտամ դրութիւնը անտանելի էր: Վերջապէս, դեպքանները, բացի Գաթույեանցից, որ մնացել էր Բազլիգում, ուշ երեկոյեան վերադարձան Խազնի ձորը՝ բերելով իրանց հետ Համիդ բէգի տուած երկու թուրք ու ղեցոյցներին:

Կանայք և երեխայք աննելով այդ անձանոթ ղինուած և ձիւորուած թուրք ուղեցոյցներին, լաց ու կոծ բարձրացրին անտառի մէջ, կարծելով թէ սպանելու համար են եկել: Աւղեցոյց թուրքերից մինը առաջից, միւսը ամբոխի յետևից, կամաց կամաց շարժուեցին խոնուած անտառում և արածուէլ էր մի վերստի Բագլիգ: Ժողովուրդը խոնուած անտառում էր մի վերստի վերայ և որոշ չէր թէ ո՞վ մըր հետ է գնում, իւրաքանչիւրը մտածում էր լսի իւր վերայ: Գրացի թուրքերի աճից, բէգերի կողմից կարգադրուած էր, որ ժողովրդի հոտները կատարուի քիշեր ժամանակ, ուղեցոյցներն էլ իրանց կողմից խորհուրդ էին տալիս յառաջ գնալ լուռ ու մունջ: Եօթ հարիւր հոգի լուկ ու մ'նջիկ...

Եւ այդ սոսկալի լուռութեան մէջ, խմբի յետև, ճանապարհի մթութեան մէջ լուռեց մի ծծիկեր մանկան լացի ձայն: Դա դէն ձգած մանուկ էր, որ իւր լացով կարող էր վտանգի են-

թարկել փախստականներին, ուստի թուրք ուղեցոյցը խորհուրդ տուեց վերցնել այդ մանկան: Հապա ո՞վ վերցնի, ամէնքն էլ ունէին իրանց ուսերի վերայ մի մի սեփական մեծ կամ փոքր երեխայ: Այնուամենայնիւ մի տղամարդ, թէև ունէր ուսին իւր սեփական երեխան, վերցրեց այդ թշուառ մի տարեկան արու մանկան և 2-3 ժամ տանելով ու չգանելով նրա ծնողներին, նորից դէն ձգեց տարաբաղդ մանկանը: Մի կին իւր կիսամեայ աղջիկ մանկան ձայնը կտրելու համար՝ դետնի վերայ պարկեցրեց մանկանը, երեսը դէպի գետին և մի քար վրան դնելով, թողեց ու շարունակեց իւր ճանապարհը...

Երկու վերստաչափ տարածութիւն էր մնացել, որ հասնէին Բագլիգ և աճա դուրս եկան բաղձութեան առաջ 4 ղինուած ձիւոր թուրք, բոլորովին անձանոթ, և հաւերի երամի տեղ ընդունելով այդ խառնաշփոթ բաղձութիւնը, սկսեցին կողոպտել, խլեցին հրացաններ, փամիլուշաներ և այլ տեսակ գէնքեր: Եօթը հարիւր մարդ հնադանդութեամբ անձնատուր եղան այդ 4 աւաղակին: Սարսափի աղղեցութիւնից հայերը ապուշ էին կտրել և կորցրել էին ինքնաձանաչութեան զգացմունքը:

Վերջապէս նիճարած, դալիւսցած հայերը հետզհետէ հասան Բագլիգ: Ձիւղադարով Մեհրալի և Համիդ բէգերը ընդունեցին հայերին թաշկինակները իրանց աչքերին քսելով: Տեղաւորներն գոմերում, մարագներում և այլ տեսակ շինութիւններում: Իսկ Ներսէս և Գրիգոր քահանաներին, Ղահրաման Գաթույեանցին, Ղահրաման Տէր Աբրահամեանցին Սարգիս Գրիգորեանին, այլ և ուսուցիչ Գագիկ Տէր Աստուածատուրեանցին Մեհրալի բէգը տեղաւորեցրեց իւր եղբոր—Համի բէգի բնակարանում, սեղանակից անելով նրանց:

Հետեւեալ օրը շաբաթ, նոյեմբ. 26 Մեհրալի բէգի և միւս բէգերի հրամանով մորթուեց մի երկու կով, որով կերակրեցին բոլոր փախստական հայերին: Համիդ բէգը յանձնարարեց ներսէս քահանային ցուցադարել բոլոր հայերին, իբրև այն նպատակով, որ իմանար թէ քանի հայեր են դիմել իւր օգնութեան: Ցուցակով դուրս եկաւ մօտ 800 հոգի:

Առանց յանձնարարութեան չմնաց և Գրիգոր քահանան: Մեհրալի բէգը սրան և Ղազար Աթոյեանցին ձի նստացնելով, երկու հաւատարիմ թուրք ընկերակցութեամբ ուղարկեց Խազնի ձորը՝ որոնելու, գտնելու և բերելու կորած, յետ մնացած, մոլորուած հայերին: Կնքն էլ գնաց նրանց յետևից, բաց չիջաւ ձորը: Միւս կողմից էլ հրաւերեց նոյն տեղը և Ալլահեար բէգին՝ իւր աւագ եղբորը:

Տէր Գրեգոր Տէր Աքրահամեանցը իջաւ ձորը, ձայն տուաւ այս և այն կողմի վերայ՝ անտառի մէջ, որ դուրս գան նրա մօտ թաղանթաճ հայերը և այդ միջոցին ընդառաջ դուրս եկան մէքանի թուրքեր, որոնք եկել էին որոնելու և գտնելու այդ ձորում սպանուած և թողած իրանց աղբակից Զիադխան բէգի մարմինը, որի մասին խօսք եղաւ նախընթաց գլուխներէց մէկում: Որոնոյ թուրքերը հայերի անից չէին վստահանում իջնել ձորի խորքերը, ուստի բռնեցին Տէր Գրեգորին և մահուան սպառնալիքով պահանջեցին գնալ իրանց հետ և գտնել ղիակը: Հնազանդուեց քահանան: Շատ որոնելուց յետոյ յաջողուեց գտնել: Զիադխան բէգի ղիակը տեսնելուն պէս՝ նրա աղբակիցները վրէժխնդրութեան ցատումով լցուած՝ սրերը հանած կամեցան կտոր կտոր անել քահանային բազացիների իտխարէն: Բայց քահանայի աղերսանքով և թուրքերից մէկի միջնորդութեամբ հազիւ յաջողուեց կեանք շնորհել քահանային: Թուրքերի ստիպմամբ քահանան իւր ուսերի վերայ դուրս բերաւ Զիադխանի ղիակը ձորից դաշտ . . . և ապա որոնելով գտաւ ձորում 7 հոգի կիսակենդան կանայք և երեխայք և սրանց թւում գտաւ մի ամսական դէն ձգած երեխայ, որ յետոյ յանձնուեց իւր ծնողացը և որ 1907 թուի սկզբին երկու տարեկան տղայ էր դարձել:

Գրեգոր քահանան իւր գտած կանանց և երեխանց դուրս բերեց այն վայրը, ուր սպասում էին Ալլահեար և Մեհրալի բէգերը: Մինչև այդ տեղ հասնելը քահանան գտաւ և մի տեղ ժողովեց ձորում և շատ մանուկ հայերի ղիակներ. ձանապարհին նա հանդիպեց շատ կանանց և աղջկանց, որոնց թաղստեան տեղից գտնելով գերի էին վարում թուրքերը: Ալլահեար բէգի միջամտութեամբ քահանան ազատեց գերութիւնից այդ կանանց և աղջկանց և մինչև 18 հոգի տարաւ Ալլահեար բէգի կարգադրութեամբ Քէշիշքեանդ գիւղը, ուր այդ բէգի մշտական բնակութիւնն է: Քահանան ստիպուած մնաց Քէշիշքեանդում այլ ևս երկար ամիսներ և չէր կարողանում վերադառնալ իւր գերգատտանի մօտ, որ ստիպուեց, առանց քահանայի, Բազլիզից գնալ փախստականների հետ դեպքելու օտարութեան և մուրացկանութեան մէջ Շամշադինու և Ղազախի հայ գիւղերում . . .

Քափառական բազացիների համար այսպիսով ստեղծուեց և մի նոր ժամանակաւոր բնակավայր՝ Քէշիշքեանդ գիւղում՝ Ալլահեար բէգի տնօրէնութեան ներքոյ: Այս պատահական բան չէր, այլ նպատակաւոր: Այդ բնակավայրը ստեղծեց ինքը Ալլահեար բէգ Զիւլգադարովը մի կողմից՝ հայերին պատասպարե-

լով թուրքերի յարձակումներից և միւս կողմից՝ իւր անձնական ապահովութեան համար, ըստ որում Զարգաթու գիւղի հայերը Բազայի աւերման վրէժը առնելու համար սպառնում էին յարձակուել և աւերել Քէշիշքեանդը՝ հասցնելով նրա բնակիչներին բազացիներին ներկայ վիճակին . . .

ժ.

Հայերի դուրսիւնը Բազլիզում, Զիւլգադարովների մտադրութիւնը հայերին բաժանելու: Զու դէպի Ղուլալի, Կադիմ Բադուլլահ օղլի եւ նրա կողպայելը հայերին. Բազացիների վիճակը Շամսադինու հայ գիւղերում. Զու դէպի վերին Աղգան գիւղը. Հայերի դուրսիւնը Քարվանսարա գիւղում եւ դարձը դէպի Բազա.

Գառնանք կրկին Բազլիզ գիւղը: Այստեղ հայերը, որ տեղաւորուած էին դանազան և ջոկ ջոկ շինութիւններում, չունէին միմեանց հետ փոխադարձ յարաբերութիւն, ըստ որում զրոյի անից փակուած էին մնում օր-ցերեկով անգամ: Զէին վստահանում դուրս գալ ու խմելու ջուր վերցնել առուակից, որ հոսում էր մի քանի քայլ հեռու: Կոտտանդեց Զաքարը մի անգամ փորձեց ջուր բերել առուից և ենթարկուեց կողոպուտի. նա զրկուեց հագի շորերից: Այս սրտամաշ դրութիւնը անտանելի էր նրանց համար և նրանք իւրաքանչիւր ժամ սպասում էին, որ բէգերը բարեհաճեն նախ թող տալ նրանց դուրս գալ դէպի Ղուլալի գիւղը և երկրորդ՝ ապահովել նրանց ձանապարհը վտանգից:

Իսկ բէգերը, ընդհակառակը, որոշ պատասխան չէին տալիս: Զգուշանում և զգուշացնում էին թուրքերի յարձակումներից: Գիշերները բէգերը պահապան էին կանդնում փակուած հայերի վերայ, մանաւանդ Մեհրալի բէգը և նրա երիտասարդ խանօղլան որդին: Վերջինիս մասին քանիցս պատմում էին, որ հրացանը ուղղելով թուրք խուժանի խմբապետների դէմ սպասում էր նրանց մահուամբ, եթէ նրանք կշարունակեն իրանց յարձակումները Բազլիզում՝ ապաստանած հայերի վերայ և եթէ ձեռք չեն քաշիլ իրանց պահանջներից, այն է, թէ հայերին կամ պէտք է ջնջենք կամ պէտք է կրօնափոխ անենք: Քանիցս պատմում էին, որ իւրեւ թէ Մեհրալի բէգը հեռացրել է այդ հրոսակներին մերթ սպառնալիքով, մերթ խնդիրներով:

Հայերը փակուած լինելով՝ կտրուած էին արտաքին աշխարհից: Տեղեկութիւնները և բէգերի ղիտաւորութիւնները հայերի մասին՝ վերջիններս ստանում էին բէգերի ծառանե-

ընց, այն էլ կցկատուր կերպով, աւելուածներով և պակասորդներով և ծածկաբար: Հայերն Բաղրի գալուց յետոյ ծառաները լուրեր էին տարածում, թէ բէգերը միաք չունին հայերն ուղարկել դէպի Շամշադին, այլ կամենում են բաժանել զանազան թուրք գիւղերի վերայ, որ հեշտութեամբ կարողանան սպանել նրանց, եթէ կրօնափոխ չլինին և կամ եթէ օտար հայերը յարձակուեն թուրք գիւղերի վերայ, որի մասին արդէն լուրեր էին պատուում:

Հայերի կատկածն աւելանում էր, երբ տեսնում էին նոր թուրք մարդիկ են երևում Բաղրի գոմ: Վերջապէս՝ հայերն այտեղ խմբուելու չորրորդ օրը եկաւ Ալլահիար բէգի որդի Մահմադ բէգը և Աղասնց բրտա Մարտիրոսին պատուիրեց խմբեց ջոկել 40—50 հոգի և ուղարկել Քեշիշքեանդ Ալլահիար բէգի հովանաւորութեան ներքոյ ապրելու: Ամեն մի շարժում և մինչև անդամ հասարակ խօսակցութիւն Բաղրի գոմ ապատանած բազայիններն միտումնաւոր էր երևում. շարժ առաւօտան մի թուրք կին բացեց ներսէս քահանայի և սրա ընկերների սենեակի դուռը, գլուխը կոխեց ներս և ծիծաղելով ու հեգնաբար հարցրեց նրանց առողջութիւնը և ապա յայտնեց, որ բէգը նոր կարգաց լրագրի մէջ, թէ Վանձակի մօտ հայերը մի թուրքի գիւղ են աւերել: Տեսնում էք, միթէ դուք, հայերդ, հանդիտա մտում էք, որ ձեզ խղճան և այտակոյն ճանապարհ դնեն. Ձէ, ձեզ փրկութիւն չկայ առանց կրօնափոխութեան...:

Բաղրի գի հայերին, իրանց թշուառ գրութեան մէջ լսել այսպիսի վհատեցուցիչ լուրեր և տեսնել ծածկաբար խորհրդածութիւնները, կարօտան սնդուկի դուռը բացուած էր թուում: Ամէնքը՝ լսելով այդ հիւսուած լուրերը, խիստ դայրանում էին:

Մանաւանդ խիստ վերաւորական թուեց բաղայիններին այն, որ բէգերի ծառաները որպէս թէ բէգերի կողմից, տուում էին թէ անդադար յարձակող խուժանին հանդատացնելու համար թող հայերը յայտնեն, որ Բաղայի աւերելու գործում մեզաւոր իրանք բաղայիններն են, որ իրանց վարմունքով գրգռեցին անմեղ թուրքերին և պատճառ դարձան իրանց տաքաբաղդութեան և սեփական գիւղի աւերման և այժմ իրանց մեղքերը քուելու համար հայերը թող ասեն թէ «մեղքը մերն է, յանցաւորը մենք ենք, այժմ ներեցէք մեր մեղքերը, մեզ բաշխեցէք առաջ Աստուծուն և ապա ձեզ (խուժանին) ու բէգերին»:

Այս և նման դէպքերը կաշկանդուած հայերի գրութիւնը աւելի ևս գառնացնում էին և տեսնելով, որ բէգերին գիտողները մի գրական պատասխան չեն ստանում, ներսէս Քահա-

նան հէնց այդ օրը անմիջապէս դիմեց Համիդ բէգին՝ յայտնելով հայ մողովրդի անսահման շնորհակալութիւնը և ներողութիւն խնդրելով տուած ներողութիւնների համար, հայցեց որ բէգը բարեհաճի ուղարկել նրանց Աուլալի:

Համիդ բէգը առաջարկեց քահանային, որ իւր հետ բերի բէգի մօտ և սուրիշ չորս հայ՝ խորհրդակցութեան համար: Երբ քահանան և հայերը ներկայացան Համիդ բէգին. սրա մօտ էին Մեհրալի և Սէօուն բէգերը: Համիդ բէգը ցոյց տալով իւր տան մօտ հաւաքուած թուրք բաղմութիւնը, յայտնեց հայերին, որ ինքը հաւաքել է այս թուրքերին, որպէս զի հայերին բաժանի իրանց մէջ, ուր հայերը ապահով կրնակուեն մինչև գարուն, մինչև Բաղայի վերակազմութիւնը:

Այդ անուպատելի կարգադրութիւնը սարսափեցրեց հայերին և քահանան աղերսեց, որ իրանց, փոխանակ բաժանելու թուրքերի վերայ, ուղարկեն Աուլալի: Համիդ բէգն այլայլուեց և գառնութեամբ պատասխանեց.

— Վաղը Աուլալին էլ գուցէ հասնի Բաղայի վիճակին, և դուք կամենում էք դնալ Աուլալի: Այստեղ մնալով դուք աւելի ապահով կլինիք:

— Ոչ աղերսում եմ, բէգ, լսւ է մեզ Աուլալիում կատորուել՝ քան այստեղ մնալ, պատասխանեց քահանան:

— Ձեզնից ոմանք արդէն ցանկութիւն են յայտնել մնալ այտեղ. իսկ չցանկացողը միայն դու ես, բարկացած պատասխանեց Համիդ բէգը:

— Ներեցէք, բէգ, մենք էլ համաձայն ենք Տէր Ներսէսի հետ. խնդրում ենք արձակել մեզ և հալալ տնել մեզ ձեր հացը, աւելացրին միւս չորս հայերը: Փորք մասձմունքից և լուրթիւնից յետոյ՝ Համիդ բէգը պատուիրեց, որ վաղը պատրաստուեն դուրս գալու Քահանան խնդրեց, որ առանց Համիդ բէգի հովանաւորութեան՝ հայերը չեն կարող ճանապարհ դուրս գալ: Բէգը պատասխանեց, որ ինքը ժամանակ չունի, այլ կուղեկցի Մեհրալի բէգը:

Նետուեալ օրը, կիրակի, 1905 թուի նոյեմբերի 27-ին, ըստ պատուէրի, դուրս եկան գոմերից լոյս աշխարհ այն հայերը, որոնք պատրաստութիւն յայտնեցին գնալ Աուլալի: Գրանք բազմաթիւ էին: Մնացին Բաղրի գոմ Քեշիշքեանդ գնալու մօտ 60 հոգի:

Աուլալի գնացող հայերը գուրս եկան և խմբուեցին մի սեզ և երբ տեսան շարքով կանգնած Մեհրալի բէգի մօտ 20 զինուած և ձիաւորուած թուրքերին, կանայք և երեխայք սկսեցին ահից լալ: Գրանց շարքում բաղայի ճանաչեցին շա-

տերին, որոնք մասնակցել էին Բաղայի աւերմանը: Զանազան տներն ծանօթ թուրքերը բերում էին հայերի համար հաց, պանիր կամ այլ ուտելիք: Զիւարթ սւղեկները դուրս անցաւ Մեհրալի բէգը, նոյնպէս զինուած:

Կարաւանը շարժուեց դանդաղ քայլերով դէպի Ղուլալի: Հայերը գնում էին ցան ու ցիւր, ճանապարհի տարածութեան վերայ սիւռուած, և նրանց յետեւից բաւականին հեռու, իւր ձիաւորներով՝ Մեհրալի բէգը: Եղանակը արև և ցուրտ, ճանապարհները չոր: Հէնց նոր հասել էին Սղբուլաղ և Զիրզախան թրքաբնակ միմեանց կից գիւղերին, հայերը յանկարծ նկատեցին Բագլիզի կողմից արագընթաց եկող 4 զինուած ձիաւորներ, որոնք ուշ չդարձնելով Մեհրալի բէգի և նրա թիկնապահներին վերայ՝ շտապեցին առաջ դէպի հայկական կարաւանը: Հայերը զարմացմամբ նայում էին այդ եկուորները կողմը և նախազգուծ էին մի չարիք: Եկուորները նախ իջել էին Բագլիզում, հարցրել էին հայերի մասին և նորից ձի հեծնելով գնացել էին նրանց յետեւից:

Գեռ և ու հեռուից չորսն էլ երգելով արշաւում էին դէպի հայերը: Անցնելով հայերի առաջ, իջան ձիերից և կանգնեցրին կարաւանի շարժումը: Հայերը սեղմուեցին իրար. խմբապետը փամփուշտը դրեց հրացանի մէջ, բռնեց նրան պատրաստի, ապա խրոխտաբար դուրս կանչեց ամբողջ միջից ներսէս քահանային և յայտնեց նրան իւր խիտ դատաւիճուքը: «Աստ ըոլոր այս հայերին, շարունակեց կատաղաբար խմբապետը, որ ինչքան փող ունեն և արծաթեղէն ու ոսկեղէն զարդեր, արծաթէ գօտիկներ և այլն ըոլորը, ըոլորը պէտք է ձգեն այս դիւստածակոցի վերայ. թող մէկ մէկ մօտենան ձգեն և հեռու կանգնեն: Յետոյ ես պէտք է մի առ մի խուզարկեմ և եթէ մէկի մօտ գտնեմ մի իրեղէն, մի դրամ, երգում եմ հազարթ Աբասի գերեզմանով, որ ըոլորիդ էլ կուպանեմ, կկոտորեմ: Գէհ, գնմ, յայտնիր.» ասաց աւաղակապետը:

Քահանան խնդրեց, աղերսեց թշուառ հայ ժողովրդին որ խնայեն իրանց կեանքը, ձգեն ամէն բան և ոչինչ չթողնեն: Հայ կնոջ գլխից մի շալ փռեցին դաշտի վերայ, կողոպտիչներն երկուսը կանգնեցին շալի աջ ու ձախ և ապա հայ կանայք, աղջկունք, տղամարդիկ մէկ մէկ մօտենում էին և զարդ ու զարդարանքները պոկում գցում էին շալի վերայ, այլ և դրամ, արծաթէ գօտիկներ և այլն:

Երբ հերթը հասաւ Ղահրաման Գաթոյեանցին, որ մի հարուստ վաճառական էր և որի հիւրասիրութիւնը քանիցս անգամ վայելած էր գաղան խմբապետը, մօտեցաւ երկու հինգ

ուրբլիանոց թղթադրամը ձեռքին ու խնդրեց, որ մէկը իրան բաշխի, աւաղակապետը սաստիկ բարկացաւ, հայհոյեց և ասաց, ոսկիներ բեր և ոչ թուղթ փող. և երբ ոսկիներ չերեացին՝ ենթարկեցին Ղահրամանին խուզարկութեան և ոչինչ չգտնելով՝ նորից հայհոյեց: Վայնասունը, լացն ու կոծը ընկել էր հայ կանանց մէջ: Արդարացաւ Համիդ բէգի նախագուշակութիւնը:

Այդ տեսարանին լուռ և անտարբեր վկայ, հեռու կանգնած Մեհրալի բէգը իւր օգնութեան և միջնորդութեան զիմոզ հայերին պատասխանում էր, որ ինքն էլ վախենում է արևնաբերու կողոպտիչներից և խորհուրդ էր տալիս ամէն բան զոհել, որ գոնէ արեւնհեղութիւն չպատահի: Ոմանք հայերից՝ այդ կողոպուտի ժամանակ, կարողանում էին ծածկաբար պահ տալ թէ իւր կնոջ արծաթէ գօտին պահ է տուել Մեհրալի բէգին և անսահման հաւատալով այդ բէգի հաւատարմութեանը, վրստահ էր, որ 10 տարուց յետոյ անգամ յետ կըստանայ բէգից իւր կնոջ գօտին:

Բոլոր կողոպտած իրեղէնները առած, աւաղակապետը նորից վերադարձաւ Բագլիզ, որ հեռու էր միայն 3 վերստ և այն տեղից իւր Կոյլասար գիւղը:

Զիրզախանի մօտ այս կողոպուտի կատարուելը ամենեւին հաճելի չէր Զիրզախանի թուրքերին և նրանցից ծելուծնի Մահմադ Թաղին յանդիմանութիւն արաւ Մեհրալի բէգին, որ սա չկարողացաւ կողոպուտի դէմն առնել, որով միւս հայերը կթշնամանան ջերգախանոց հետ:

Այս տեղից Մեհրալի բէգը իւր թիկնապահներով վերադարձաւ Բագլիզ, իսկ հայերին մինչև մօտակայ Զինարլի ուղեկցեցին Զիրզախանցիք: Հայերը այստեղ էլ չմնացին անփորձ, Զիրզախանի և Զինարլուի միջովայրի անտառուտում անյայտ թուրքեր յափշտակեցին Յարութիւն Դանիէլեանցի դիւստարը և Ղահրաման Դաթոյեանցի հագուստը: Վերջինս մնաց միայն մի շապկով և վարտիքով, և ամաչում էր մտնել հայ գիւղը: Բայց որովհետև Զինարլուի հայերը անից փախել էին 3 վերստ հեռու Ղուլալի գիւղը և առաջին գիւղում պատահեցին խոտ կրող սայլապաններ, ուստի այս վերջինները Ղուլալուց բերին Դաթոյեանցի համար հագուստ: Մի քանի օր առաջ տասնեակ հազարներն տէրը՝ այսօր հագուստ չունէր մերկութիւնը ծածկելու:

Ուժասպառ, ընչազուրկ, սարսափահար հայ լիակատականները Չինարի հայ գիւղում զգացին, որ թէպէտ մերկ և քաղցած, բայց ազատ կարող են շունչ առնել: Հինգ օր անլուայ երեսները լուացին Չինարուի սառնորակ աղբիւրի ջրով, ապա դառնալով մօտակայ պատմական «Սորանաշառ» աւերակ վանքի կողմը, խաչակնքեցին երեսները, աղօթեցին ու քիչ հանգստացան, որպէս զի շարունակեն ճանապարհը մինչև Ղուլալի:

Յրուեցին տանջուած բազայիները Շամշաղինու հայ գիւղերի վերայ և մի կերպով կարողացան պահել իրանց գոյութիւնը: Որոնք ունէին այս և այն գիւղում աղբականներ, բարեկամներ, ծանօթներ, նրանք գնացին վերջիններիս մօտ, իսկ մեծամասնութիւնը երկու շաբաթ մնալով Ղուլալի բաւական նեղութիւն տուին տեղացի հայերին, որ առանց այն էլ սակաւ ուտելիք ունէին: Ապա անկարող լինելով շարունակ կերակրել և բնակարան ապու բոլոր հիւրերին էլ. գիւղի առաջաւորները—այն է Գուրգէն քահանայ Ղաղարեանց, տանուէր Սաեփան Կարապետեանց, Պետրոս տէր Պետրոսեանց, Սարգիս Յակոբեան և այլք խորհուրդ կազմեցին և մասնակցելու հրաւրեցին երկերկու ներկայացուցել Շամշաղինու բոլոր հայ գիւղերից, այն է Կարմիր աղբիւրից, Մովսէսից, Թովուղից, Հասուժից և Նաւուրից, ուր որոշուեց բաժանել և պատասպարել բազայիներին:

Սահայն պէտք է նկատի ունենալ, որ Շամշաղինը իւր գթառատութեամբ հանդերձ չէր կարող երկար ժամանակ օգնել բազայիներին, ըստ որում այդ միջոցին ինքը ճգնաժամի մէջ էր և լսարուած ուժերով հերոսաբար զննադրուած էր Ղաղախի վայրենի թուրք խուժանի անմիտ յարձակումներին:

Բազայիներից շատերը մեծ նեղութեան մէջ էին, հազիւ կարողանում էին բնակութեան համար ձարել մի դոմ, մի մարդ, մի մութ սենեակ, մի աճաքին գերգաստանի համար հազիւ մի վերմակ: Ժամանակը ձմերային էր և ցուրտ, երկիրը լեռնոտ և ձիւնով ծածկուած, ուստի և բազայիներից մի մեծ խումբ պատրաստուեց անցնել Ղաղախի գիւղերը, և այն տեղից, եթէ կարելի է, Թիֆլիզ: Հաւաքուեցին Նաւուր գիւղը, որ դրած է Շամշաղինու վերջին սահմանում: Այդ տեղից Քարւանսարայ գիւղը և Կիլիջանի խճուղին հասնելու համար հարկաւոր էր նախ և առաջ գնալ Վերին Աղզան գիւղը:

1905 թուի դեկտեմբերի 29, հինգշաբթի օրն իրան պատկերակներով վերջին օրը Բազայոց առաջին խումբը երկու ուղեցոյցի օգնութեամբ առաւօտ դուրս եկաւ Նաւուրից և իջաւ Հասան-Սու գետի ձորը: Մարունները կուշտ խմեցին այդ

լեռնային վճիտ ջրից, խմացրին և երեխանց, որ մինչև Վերին Աղզան այլ ևս ջուր չուղեն, ըստ որում ճանապարհի առաջուր լեռները իրանց աղբիւրներով արգէն իսկ ձիւնի տակ էին: Կարաւանը կազմում էին 50—60 հոգի երկսեռ:

Չորից և անտառից դուրս եկան ամայի լեռների բարձրութիւնները, որոնք քարանք և ամառը գրախախ նման, իսկ այժմ՝ ձիւնով խորապէս ծածկուած են: Շամշաղինու թուրքերը և հայերը Ղաղախի հայերի հետ իրանց ապրանքներով և բազմաթիւ սլաքներով ամբարնոց են դուրս գալի այդտեղ իբրև արօտատեղիներ: Տղամարդիկ շալակել էին երեխանց և բռնել կանանց ձեռքիս ու սագերի նման գնում էին միմեանց յեանից խոր ձիւնի պատճառով:

Գուրս եկան Խաչ—Բուլախ անունով հայկական աւերակ դիւղատեղը՝ իւր առատ ջրերով և շրջակայ ընդարձակ արօտատեղերով: Հաւանեցին տեղը և մտադրուեցին խնդրել կառավարութիւնից նոր Բաղա հիմնել այդ տեղ: Բայց Խաչ—Բուլաղը նշանակուած էր ուղեւ գաղթականներին համար: Գժուարութեամբ անցան ալեծածան բլուրները, վերջապէս հասան Առգաղի (Մեղուատար) բարձունքը, որ կախուած է Վերին Աղզանի գլխին:

Ահա խոր ձորի մէջ հոտում է օձապտոյտ Աղսաւ դեղը և նրա արիւրով ոլոր մուր գնում է Կիլիջանի գեղեցկատես խճուղին: Գետի ափին դրած է Քարւանսար գեղը: Առգաղից սկսում է դաւ ի վայրը դէպի Վերին Աղզան: ճանապարհ չկայ, տեղ ժայռեր են, տեղ անառ է, տեղ ձոր և բոլորը ձիւնով ծածկուած: Կարաւանը ոչ թէ գնում էր, այլ սողում և ով ընկնում էր, այլ ևս չէր կարողանում կանգնել սաքի վերայ մինչև մի յենարանի հասնելը:

Նայն օրը երեկոյեան դէմ՝ վերջապէս հասան Վերին Աղզան, մի կերպ բաժանուեցին տներին վերայ, տեղաւորուեցին դամբում, խորշերում և այլն: Յերեկով գնում էին Քարւանսարայ գիւղը մի որ և է տեղեկութիւն իմանալու, ըստ որում այդ գիւղն ունի լիստաստուն, հեռազրատուն, դատարան, պաշտօնարաններ: ստացում են լրագրեր, յարաբերութիւն ունեն Թիֆլիզի հետ «Աղտաֆա» կայարանի միջոցով: Մի լսօքով Քարւանսարան համարում էր մի կենդրոն:

Բազայիք 15 օրից աւելի մնացին Վերին Աղզանում: Շամշաղինուց էլի նոր խմբեր էին գալի: Սրանք երբեմն մուրացկանութեան էին գնում հայ գիւղերը: Գործ էին օրոնում և չէին գտնում: Քարւանսարայում թթու կաղամբի ջուր անգամ խնայում էին բազայի աղբատ կանանց: Առհասարակ սոսկալի էր

այդտեղ բազմաթիւները զրուեցինք\*։ Քարուհի բացուելուն պէս մի փոքր մշակութեան գործ դասն Բարևանսարայում, օրական 20, 25 և 30 կոպէկով։

Թիֆլիզի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովը շատ լաւ գիտէր այս տեղի բազմաթիւները զրուեցինք և ուղարկում էր Բարևանսարայի տեղական յանձնաժողովի անունով ցորեն և դրամ։ Հասաւ դարունը։ Կենդրոնական յանձնաժողովը կարգադրեց, որ բազմաթիւները թողնեն Ղաղախ և կամաց կամաց հաւաքուեն, դնան Բազա նորից տիրանալու և շէնսաներու։ Բայց բազմաթիւ նպաստները ստանում էին, իսկ գնալ Բազա խիստ դժուարանում էին։ Ղաղախի բոլոր հայ գիւղերում ցրուած էին բազմաթիւ և մնացին մինչև 1907 թուի դարունը։

Թիֆլիզի նպաստամատոյց յանձնաժողովը 1907 թուի փետրուարին սպառնալիք կարգաց Ղաղախի բազմաթիւներին, որ այդ փետրուարի 20-ից յետոյ դադարեցնելու է նպաստները։ Իսկ բազմաթիւները հեռագրով խնդրում էին Թիֆլիզի թեմակալ արքեպիսկոպոս Սաթուկեանին շարունակել նպաստները։\*\*

Նպաստամատոյց յանձնաժողով յարգելով բազմաթիւներին խնդրը, փոխեց իւր սպառնալիքը և իւր շրջիկ ներկայացուցիչ Ս. Տէր Պողոսեանցի ձեռքով, 1907 թուի մարտին ցուցակագրեց Բարևանսարայում եղած բազմաթիւներին (210 հոգի) նորից բաժանեց մի հազար ուղարկ՝ այն խիստ պայմանով, որ մինչև սոյն մարտի 15-ը ամէնքն էլ գնան Բազա։ Այս սպառնալիքն էլ չազդեց բազմաթիւ, մանաւանդ նրանց, որոնք միջոց ունէին օրական 20—50 կոպէկ աշխատելու։

Բայց Բարևանսարայի տեղական յանձնաժողովը, որ գործադրում էր Թիֆլիզի նպաստամատոյց յանձնաժողովի կարգադրութիւնները, աւելի կտրուկ միջոց գտաւ բազմաթիւներին հայրենիք ուղարկելու։ Նա նախ յորդորում էր և վերադարձի համաձայնութիւն առնում ցանկացողներին և ճանապարհածախքը փոխանակ վերադարձողներին ձեռքը տալու, ինքն էր վարձում ֆուրգոններ, գնացողներին նստեցնում և ճանապարհ դնում։ Այսպիսով տեղական յանձնաժողովը մինչև 1907 թուի մարտի վերջը կարողացել էր Բազա վերադարձնել 500—600 հոգի\*\*\*։

\* Արշալոյս № 22. փետր. 12. 1906 թ.

\*\* Մշակ 1907 թ. № 58 փետր. 20.

\*\*\* Մշակ 1907 թ. № 70 ապրիլի 10.

Յիշենք այստեղ, որ մենք թողել ենք Բազա գում և Բէշիշքեանդում բազմաթիւներին մի մի խումբ, որոնց վիճակը մասին հարկաւոր է տեղեկանալ. ուստի կրկին վերադառնանք Բազա գում։

ԺԱ.

Ստալոյ լուրեր. Գագիկ ուսուցչի դարձը. Հայերի չուն դէպի վերին Այսիու գիւղը. Նոր յարձակումն Չարդախլուի վերայ. Բէգերի գազնի խորհրդակցութիւնը Կարաբեգովի մօտ եւ նրա սրահումները։ Սարգիս Արաբաջեանի դեսպանութիւնը. Ժանդարմների պեսի կարգադրութիւնը եւ հայերի ճանապարհորդութիւնը դէպի Չագեամ կայարանը եւ դէպի Թիֆլիզ եւ դարձ։

Շարեշար արկածների օրեր էին այդ ժամանակ, սուտ ու զորք լուրեր էին տարածւում ամէն կողմի վերայ, միջնորդաբար էր նրանցով։ Առում էին, որ Ալլահեար բէգ Չիւլգազարովը և նրա ազգակիցները սպառնալից և նախազգուշական նամակներ ստանալով Չարդախլուի հայերին, սպասում էին, թէ մի գուցէ վրէժխնդրութեան յարձակումներ լինեն նրանց վերայ հայերի կողմից։ Բէգերն զգում էին և հաւատում, որ Բազայի աւերումը կարող է անհետեանք չմնալ։ Մէկը լուր բերեց, որ ինքը Ֆընդուլուի ռուս մալականներից լսել է, որ զբացի Բաշքեանդ գիւղի հայերը կազմել են մի զօրախումբ 700—800 զինուած հոգուց բաղկացած, գալու են Բազա գում և Բէշիշքեանդի վերայ և պէտք է այնպէս աւերեն, որ աւերակներն անգամ չբերան։ Այնպիսի ժամանակ էր, որ այսպիսի լուրերին հաւատ ընծայողներ շատ կային։

Բէգերը և միւս թուրք հարուստները որոշել էին Բազայի հայերին պահելով իրանց մօտ, պաշտպանութեան պատնէշ կազմել իրանց համար։ Այդպէս էին բացատրում հայերը այն բէգերի մարդասիրութիւնը, որոնք հաւաքուել էին Բազա գում հայերին բաժանելու և պահելու իրանց մօտ։ Այս նպատակով էին եկել Կոյսասարցի Սէօուն բէգ Չիւլգազարովը, Ալլահեար բէգը որդի Մամադ բէգ Չիւլգազարովը և ուրիշները։ Այդ նպատակով էլ իբրև թէ Համիդ բէգը չէր թողնում հայերին գնալ Ղուլալի և այլն։

Թէ այսպէս և թէ այնպէս, Ղուլալի գնացող հայերից յետոյ մնացել էին դեռ մօտ 50 հոգի, որ Մամադ բէգի հրահրով պէտք է գնային Բէշիշքեանդ և միանային այն հայերին, որոնք Գրեզոր քահանայի հետ արդէն այնտեղ էին։ Հէնց այդ առաւօտ, կեւրակէ, նոյեմբերի 27 Բազա գում եկաւ 7 թիկնա-

պահանջներով շրջապատուած Վերին Այփուլուեցի, յայտնի Բէօուզ աղան Կարաբէդովը և դիմելով իւր վաղեմի ծանօթ ծերունի Անտօն Նուշանեանցին՝ պատուիրեց, որ սա իւրայիններով պատարասուի իւր հետ Այփուլ գնալու և աղայի մօտ բնակուելու: Ուրեմն, բացի Քեշիշքեանդը հայերի համար նորից մի բնակավայր ստեղծուեց: Այգպէս էլ եղաւ: Անտօն ընարեց ՅԼ հոգի երկու սեռից և պատրաստուեցին երեկոյեան գնալ Վերին Այփուլ, իսկ միւս բաժինը Քեշիշքեանդ:

Սակայն սրանով Բագլիգը չզրկուեց հայերից: Բագլիգի բաժինը էլ ի մնաց: Ինչպէս վերը տեսանք. բէգի կայսրանում առանձին մեծարուած էին Ղահրաման Տէր Աբրահամեանցը, ուսուցիչ Բագլի Տէր Սասուաճարեանցը և մի երկու ուրիշները և սրանք փախուած իրանց բնակավայրում, չէին խառնուում միւս հայերի շարքմանը և մտադիր էին գնալ Փանձակ: Բագլի ուսուցչին մինչև անգամ ժամանակակից պայտէս յանձնուած էր Մեհրալի բէգի երեսանց կրթութիւնը: Բագլի գալուց 20 օր յետոյ Բագլի ուսուցիչը վերջապէս կարողացաւ մի նամակ հասցնել Փանձակ իւր հօրը, Մկրտիչ քահանային, որ մինչև այդ ժամանակ տոշորուած էր անյայտութեան մէջ կուրած որդու ճակատագրի համար: Նամակի հիման վերայ ժողովրդական դարոյնների վերատեսչի միջնորդութեամբ Փենեբալ Նահանգապետ գնեքալ Ֆլէյշըրը իսկոյն Բագլի ուղարկեց թիկնապահներով հանգերձ Փանձակի գաւառապետին, որ և յաջողութեամբ տարաւ Փանձակ Բագլին և իւր ընկերներին:

Պառնանք կրկին Բէօուզ աղայի խմբին: Երեկոյ է, շաբաթուօմ սկսուեց գէպի Վերին Այփուլ, որ հետի է 15 վերտաշափ: Բէօուզ աղան հրամայեց իւր թիկնապահ թուրքերին, որ անդոր երեկանց վերցնեն իրանց գաւառը: Առաջից գնում էին Բէօուզ աղան և թիկնապահների մի մասը, իսկ յետևից միւս թիկնապահները, որոգէս զի մէջ տեղ գնացող հայերից ոչ ոք յետ չմնայ և չկորչի մթութեան մէջ: Հայերը զրոյց էին անում շատ կամաց, որ օտար թուրքերը չլսեն և յարձակում չգործեն, իսկ թիկնապահները լսօտում էին իրար հետ բարձր և այլ նիւթերի վերայ:

Հասնելով իւր բնակավայրը՝ Բէօուզ աղան հրամայեց ծառաներին մարբել իւր տան գետնափոր ներքնատունը, սփռել ալաջուղի թաղիքը՝ իրան պարիսկու և լուսաւորել ներքնատունը մի հատ սև նաւթի ճրագով: Ընթրիքին առեց մի փոքր հաց: Քնելու համար հիւրերը չունէին լիւրջի ծածկոց, իսկ գլուխների տակ դրել էին մի մի քար: Առաւօտը Բէօուզ աղայի հրամանով երկու հայ կին ստացան ալիւր և սաջի մե-

րոյ հաց թխեցին հայերի համար: Երբեմն Բէօուզ աղան ինքը մտնում էր ներքնատուն, սիրտ ու յոյս էր տալիս հայերին, երբեմն էլ իւր մօտ էր ընդունում իւր վաղեմի ծանօթ Անտօն Նուշանեանցին: Ապա ցամաք հային աւելացաւ և պանիր:

Այփուլ գիւղացիներից մօտ հարիւր հոգի, ոտից մինչև գլուխ ղնուած, Գեկտեմբերի 2-ին, ուրբաթ գնացին Չարդախու գիւղի վերայ կուլ: Նրանց պարագլուխներն էին Հաջի-Մուսա, Հաջի-Ալին, Ղարա Իսայ և մի քանի նշանաւոր կարգացողներ: Եղանակն ամպոտ էր, մօտիկ վայրերն անգամ չէին երևում: Նոյն օրը՝ երեկոյեան դէմ կուլ գնացողները վերադարձան խիստ կոտրած սրտով: Չարդախուի վերայ յարձակումն եղել է շատ անցաջող թուրքերի համար, ըստ որում թուրքերի անելով ամպով ծածկուած տարածութիւնը և հայերի գիրքերը լու չէին երևում, ուստի յարձակողները յանկարծ ընկել են դիւրքերի շրջանը, շրջապատուել են հայերից և մեծ կորուստ են ունեցել, աւելի քան 20 հոգի սպանուած: 14 ղիակ միայն կարողանում են ձիանց պոչերին կապել և քարշ տալ մինչև Այփուլ: Հաջի Մուսան, զբօշակակիր մօլլան, Հաջի-Ալին, Ղարա-Իսան և ուրիշ նշանաւորներ կորել են, չեն վերադարձել, չգիտեն նրանց տեղը: Չարդախուից սպանուել է միայն մի երիտասարդ-Շամիր Մարկոսեանցը:

Այս կուլի հետևեալ օրը, շաբաթ, Գեկտեմբերի 3-ին, յայտնի չէ թէ հրաւերով՝ թէ ինքնաբերաբար ժողովուրդներն Բէօուզ աղայի մօտ Ալահեար բէգ և Համիդ բէգ Ձիւլգազարովները, Շամբուրեցի Հիւսէին բէգը, Կոյլասարցի Կազիր տանուէրը, Բահրամ բէգ Կարաբէդովը և ուրիշ շատ բէգեր և առաջաւոր մարդիկ, թուով աւելի քան 15 հոգի և խորհրդի կանգնեցին ամբողջ օր և ամբողջ գիշեր Բէօուզ աղայի տան գահլիճում:

Խորհուրդը և վիճաբանութիւնը պատուում էր Չարդախուի անյաջողութեան շուրջը: Ալահեար բէգը այն միտքն է յայտնում, թէ ժամանակ է վերջ գնել կուլներին: Բէգերն այս խորհրդին զանազան մարդիկ զանազան մեկնութիւն էին տալիս: Ոմանք ասում էին, որ խորհուրդը կազմուել է նոր յարձակումներ կազմակերպելու, և թուրքերից բռնի փող հաւաքելով՝ զէնքեր բերելու, ոմանք ասում էին, որ այդ ժողովում վճռուել է վերջ տալ յարձակումներին: Բայց երևում է, որ հաւանականը յարձակումներին վերջ տալն է եղել:

Փաղանի խորհրդի հետևեալ օրը, կիւրակի առաւօտ, հայերին դուրս բերին բաց օդի մէջ, կանգնեցրին շարքով՝ որ Ալահեար

բէզը տեսնի: Այդպէս էր հազորդել հայերին երիտասարդ Ձար-  
 րայի բէզը-Բէօուզ աղայի որդին: Հայերը կանգնեցին այն  
 պատշգամբի դէմ, ուր խմբուել էին գաղանի խորհրդի անդամ-  
 ները: Հայ երեսայքը լալիս էին: Հայ կանայք՝ ճանաչելով  
 Ալլահեար բէզին՝ թուրք լեզուով դիմեցին նրան կէս յանդի-  
 մանական ձևով, թէ ինչն նա իրանց չպաշտպանեց և այս օրին  
 հասցրեց: Ալլահեար բէզը պատասխանեց՝ թէ «Սաբաբի  
 տունը Աստուած քանդի, ես այստեղ չեի, գնացել էի Գան-  
 ձաի նահանգապետի պատուէրով»:

Ալլահեար բէզը ըստ սովորութեան յոյս տուաւ հայերին  
 և Բէօուզ աղային պատուիրեց, որ հայերին լաւ պահեն և դո-  
 մից տանեն մի այլ բնակութիւն: Ապա ժողովը ցրուեց:

Գեկտեմբերի 5-ն էր, երկուշաբթի օր: Բէօուզ աղան գո-  
 մից կանչել տուեց վերեւ՝ իւր բնակարանը՝ բազացի Սարգիս  
 Արաբաջեանցին, որ խօսոյն գնաց: Գահլիճուժ, Բէօուզ աղայի  
 առաջ շրջան էին կազմել Այսիւրուեցի շատ թուրքեր: Պարա-  
 գլուխն էր Կարիւր տանուտէրը: Բոլորը լուռ էին և նայում էին  
 Արաբաջեանցի վերայ, իսկ սա դեռ ևս ոչինչ չգիտէր:

«Սարգիս, դիմեց նրան Բէօուզ աղան—ձեռքին բռնած մի  
 նամակ—երեք օր առաջ Ձարդախլուի կռուում \* անյայտ կորել  
 են Հաջի Մուսայի և Կարա Իսան և մինչև օրս չեն երևում:  
 Նրանց որդիքը և ազգականները ահա հաւաքուել են այստեղ  
 և խնդրում են իմ միջնորդութիւնը: Ես կամենում եմ ու-  
 ղարկել քեզ Ձարդախլու և անձամբ տանել այս նամակը և  
 տալ տանուտէրի հօրը, ճերտենի Պօղոս Բաբաջանեանցին, իմ  
 կողմից էլ բարև: Սոյն նամակով ես խնդրում եմ Բաբաջա-  
 նեանցին և դու էլ բերանացի կատես իմ կողմից, որ եթէ Հաջի  
 Մուսայի և Կարա Իսան կենդանի են թող արձակեն, իսկ եթէ  
 մեռած են, թող տան նրանց դիակները: Գու, շարունակեց  
 Բէօուզ աղան, պէտք է գնաս և վերադառնաս այս թուրքերի  
 և Հաջի Մուսայի որդի Իսայի հետ: Բո կեանքիդ երաշխաւորը  
 ես եմ, բոլորովին ապահով եղիւր, որ այս մարդիկ և Իսան ան-  
 վտանգ քեզ կտանեն և կբերեն. քեզնից աւելի յարմար մարդ  
 ես չեմ կարող գտնել: Այսօր կգնաս և վաղը կվերադառնաս»:

Մինչև այդ ընդհանրապէս լուռ Սարգիսը պատասխանեց աղային  
 թէ՛ եթէ դու ուղարկում ես, ես կգնամ: Թուրքերը ուրա-  
 խացան և կրկնեցին միահամուռ, որ կեանքի մասին լինի ապահով:

\* Ծանօթ. Վերջին յարձակումը Ձարդախլուի վերայ եղել է 1906  
 թուի Յունուարի 18- տես Մշակ № 32-1906 թ. Մարտի 9. Կ. քաճ.  
 Մ. յօդուածը Ձարդախլուից:

Սարգիսին տարան անյայտացած Հաջի Մուսայի տունը,  
 որ 3—4 վերստ հեռու էր Բէօուզ աղայի բնակարանից: Հաջի  
 Մուսայի տանը Սարգիսը խիստ կասկածեց, թէ մի գուցէ վրէժ-  
 խնդրութեամբ սպանեն իրան իբրև հայի՝ բայց երբ հիւրասի-  
 րեցին հացով ու մածոնով, այն ժամանակ կասկածը փարատ-  
 ուեց: Սարգիսը 7 ձիաւորով ընկաւ ճանապարհ դէպի Ձար-  
 դախլու: Ապա հասան Մեջլուժար թուրք օբայի գոմերը,  
 որտեղից սկսուում է Ձարդախլուի հողաբաժնի սահմանը, 14  
 վերստ տարածութեամբ մինչև Ձարդախլու գիւղը:

Կանգ առան այդտեղ: Ժամանակը կէս օրից դէպի երե-  
 կոյ էր. թուրքերը մնացին այդտեղ, իսկ Սարգիսին ցոյց տուին  
 Ձարդախլու տանող ճանապարհը և պատուիրեցին նրան, որ վաղը  
 մինչև կէս օր կսպասեն նրան այստեղ և վերադարձին, հեռուից,  
 իբրև ազգանշան պէտք է ծածանի օդում իւր կարմիր թաշ-  
 կինակը և սրանք կարձակեն մի հրացան, որ չը լինի թէ Սար-  
 գիսը ընկնի այլ թուրքերի ձեռքը: Այս պայմանանշաններըց յե-  
 ջամուղըն հասաւ Ձարդախլու:

Նամակը յանձնուեց ըստ պատկանելոյն: Նա գրուած էր  
 ռուսերէն. կարգաց և բացատրեց տեղական քահանան հասա-  
 բակութեան մէջ, որ հաւաքուել էր օրուայ չար ու բարիի վե-  
 րայ խորհելու: Այդտեղ էր և բազացի Գրիգոր քահանայ Տէր  
 Արաճամեանցը, որ գետպանութեամբ եկել էր Ալլահեար բէզ  
 Ձիւլգադարովի կողմից:

Առաւօտը պատրաստեցին Բէօուզ աղայ Կարաբէգովի  
 անուանը մի նամակ, որի բովանդակութիւնը մօտաւորապէս  
 այս էր. «Ձեր ուղած մարդիկ մեզնում չկան, դուցէ մնացած  
 լինին կռուի դաշտում. նախքան ընդհարումները մեզնում  
 կային 43 թուրք ծառաներ, որոնց մենք իւր ժամանակին ան-  
 վտաս դարձրինք իրանց բնակավայրերը, իսկ եթէ Ձեր ուղած  
 մարդիկ լինէին մեզ մօտ, մենք ուրախութեամբ կարձակէինք  
 նրանց, ինչպէս դուք ապահով պահուած էք այժմ մեր հայերին:  
 Հաշտութեան մասին, որ առաջարկում էք, մենք ընդունում  
 ենք շնորհակալութեամբ. եթէ դուք չյարձակուէք մեզ վերայ,  
 մենք էլ չենք յարձակուել ձեր վերայ և կլինի հաշտութիւն:  
 Բայց եթէ Գուք, Բէօուզ աղա, գաւազանի ուժով թուրքերին  
 ստիպէք կռիւ մղել մեր դէմ, հաշտութիւն չի կայանալ և մենք  
 միշտ պատրաստ ենք կռուելու. ձեր ամեն մի նամակաբեր  
 թող վտահարութեամբ դայ մեզ մօտ և ապահով լինի իւր կեանքի  
 մասին, մենք ապահով կընդունենք և ապահով կըարձնենք: Ըն-  
 դունեցէք մեր հաւատարմը:» Նամակը գրած էր ռուսերէն:

Նամակը յանձնեցին Արաբաշեանցին և հեռաւոր տեղից եկած մի հասարակ զինուոր մասնաւորապէս խորհուրդ տուեց Սարգսին, որ աշխատեն հեռանալ Բէօուզ աղայի մօտից, որովհետեւ մի խումբ զինակիւններ իրան հետ մտադիր են յանկարծակի հիմնայատակ անել Բէօուզ աղայի տուն ու տեղը, ի վրէժ Բաղայի աւերմանը: Սակայն հայերի Այիլուից շուտ կամ ուշ հեռանալու հարցը կախուած չէր հայերից իրանցից:

Երկու ուղեցոյցներ ընկերակցութեամբ յետ դարձրին Սարգսին, որ սահմանին մօտեցած, բարձրացաւ դաշտի մի բլուրի վերայ և ծածանեց օդի մէջ կարմիր թաշկինակ փայտի ծայրին, որին հետեւեց հրացանի թնդիւնը: Իսան հրացանի կիսից բռնած, դաշտի մէջ, նշանակեալ տեղը վազուց արդէն կատաղաբար յետ ու յառաջ էր պտուտում և անդադար սպասում Սարգսի մօտենալուն: Սարգսը հասաւ. Իսան ընկաւ նրա վրէն և արագ հարցրեց «Բաշընդա դէօննում, Հաջի-Մուսադան ըիր խաբար» (դիւտովդ պտտուեմ, հաջի Մուսայից մի լուր): Սարգսը բացատրեց բերանացի, ինչ որ լսել էր, իսկ նամակի մէջն էլ ինքը չգիտէ, կասի Բէօուզ աղան: Իսան կատաղաբար այլայլուեց և նկատելով այդ Ղ ուղեկիցներէից մինը ոմն քերբալայ՝ Սարգսից վտանգը հեռացնելու նպատակով աւելացրեց թէ «մեր մարդիկը կենդանի են և այդ հային իբրև օտարի՝ չեն յայտնել, ինչ ալլահ, մեր մարդիկը կազատուեն»: Այսպէս յուսողրեց քերբալայը և ընկան ճանապարհ: Բէօուզ աղան շնորհակալ եղաւ, կարգաց նամակը և բացատրեց ը վանդակութիւնը:

Այդ օրը հայերին ներքնատանից բերին բէգի կացարանի մօտ մի առանձին սենեակ, ուր բէգի կանայք և հայ կանայք այցելում էին իրար: Հայերը երբեմն ստանում էին և միտ: Այիլուի թուրքերը ատելութեամբ էին նայում Բէօուզ ա հայ հիւրերի վերայ: Այիլուի բնակիչներից մէկը մի հայ կին իւր երեխանցով իբրև ծանօթի տարել էր իւր տունը պահելու, բայց իւր հաւատակիցները ոմանց սպառնալիքներից ստիպուած երկու օր յետոյ նորից բերեց հայերի մօտ, Բէօուզ աղայի տունը:

Իւր տան բնակիչ հայերին Բէօուզ աղան ցոյց տուեց մի ծծկեր մանուկ, որին, ինչպէս ինքն էր պատմում, բերել էր Բաղայից, նրա աւերման երկրորդ օրը, ուր գնացել էր նա իւր երկու որդու հետ Բաղան տեսնելու: Մեկը Ծերատեանցի տանը, երկու սպանուած կանանց դիակները արանքում այդ մանուկը լալիս է եղել: Բէգի տանը այդ մանուկը կերակրում էր կաթի պտուկով: Ծնողները յայտնի չէին, որ բէգը վերագարձնէր մանկանը, բայց կարծիքով նրա հայրը Ղահրաման Յո-

հաննիսեանցն էր, որ այդ միջոցին Շամշադինումն էր և այնտեղից գնացել էր Քարվանսարայ գիւղը: Բէօուզ աղայի մօտից հայերի գնալուց յետոյ այդ մանուկը արդէն մեռել էր:

Հայերը մնացին Այիլուում էլի մի քանի օր և այդ ժամանակ Բէօուզ աղայի մօտ ձի առնելու եկել էր մի զինուորական ռուս, պօլիցիական ձիաւորների ուղեկցութեամբ: Նա տեսնելով հայերի նեղ դրութիւնը և առհասարակ դրանց ներկայ վիճակը՝ հարց առաջարկեց Սարգսի Արաբաշեանին, թէ ի՞նչ են մտադիր անելու այդ հայերը: Սարգսը պատասխանեց, որ այժմ իրանք նման են վանդակի մէջի թռչունին, որ հնար չունենալով դուրս թռչելու, գլուխը շարունակ դարկում է վանդակի պատերին: Մենք էլ հնար ունենայինք՝ կը գնայինք այստեղից, ըստ որում բացի այն որ անձամբ նեղութիւն ենք տալի բէգին, վախենում ենք, որ մեր պատճառով մեզ ատող թուրքերը վնաս տան մեզ պատասպարողին:

Յայտնուեց, որ զինուորական հիւրը Գանձակի ժանդարմների պետն է և պատուիրեց, որ պատրաստուեն վաղը իւր հետ, Բէօուզ աղայի ուղեկցութեամբ գնան Ջագեամ կայարանը: Բայց, որպէս զի սպանուած թուրքերի ազգակիցները հայերին տեսնելով չթշնամանան Բէօուզ աղային, յետոյ այս կարգադրութիւնը փոխուեց: Ժանդարմների պետը խոստացաւ օգնել և ինքը գնաց Գանձակ:

Հետեւեալ օրը գերմանական Անենֆելդ գաղութից եկան 35 կազակ մի ուրեաղնիկով, ժողովեցին հայերին գէպի երկաթուղին: Հայ երեխայքը ցրտից ու քարերից պաշտպանուելու համար փաթաթում էին իրանց օտերը հին՝ դէն ձգած շորի կտորներով, թաղիքով և ին: Բէօուզ աղայի բացակայութեամբ հայերը անհուն շնորհակալութիւն մատուցին աղայի կնոջը, ինդրեցին հալալ անել կերած հացը ու ընկան ճանապարհ: Ամենից առաջ գնում էր մի կազակ, նրա յետեւից երեքը իրար կողքի, մնացեալները շրջան կազմելով ներս առան հայերին: Կանայք և երեխայք այդ րոպէին սկսեցին հեկեկալ և լալ, վախենում էին ճանապարհի վտանգից: Շարժուեցին դէպի Ջագեամ կայարանը 4 վերտո հեռու: Հասնելով մի թուրքի օբա 3—4 տնից, ուրեաղնի՛ը հրամայեց կազակներին հրացանները պատրաստեն, բայց ոչինչ վտանգ չեղաւ: Արեւադնիկը կազակ ուղարկեց թուրք պրիստաւին և ճանապարհի վերայ ստրաժնիկներ կանգնեցրին: Գանձակին կազակները երեխանցը հաց էին բաժանում իրանց պաշարից:

Կայարանի պահապան զինուորների սպան կայարանի դահ-

լինում տեղաւորեց հայերին և 6 հրացանաւոր զինուոր նշանակեց նրանց վերայ: Բարե սպան չայով, հացով և մսեղէն կերակուրով կերակրեց և թուրք խանութներում նուէր ժողովեց ու յանձնեց հայերին 28 ուրլի, որից 2 ու ծախսուած էր չայի շաքարի վերայ: Թուրք խանութպանները հաց կամ շաքար էին նուիրում, իսկ ուրս բանուորները ոտնամաններ էին բաժանում երեխանցը: Հետեւեալ օրը պատահեց այն քերթալայը, որ ուղեկցել էր Արաբաշեանին դէպի Չարդախլու. նա մորթեց մի ոչխար և կերակրեց հայերին: Հայերը Բէհուզ աղայի տանը մնացին ուղիղ 21 օր:

Այդ ժամանակ երկաթուղու յայտնի գործադուլն էր և միայն մի գնացք էր շարժուում կայարանապահ զինուորներին հաց մատակարարելու: Եւ ահա հէնց այդ գնացքով 6 զինուորի հսկողութեամբ հայերին հասցրին Աղստաֆա և այս տեղից մի այլ սպայի հսկողութեամբ նոյն գնացքով հասցրին Թիֆլիզ երեկոյեան 9 ժամին:

Թիֆլիզի կայարանը գործադուլի պատճառով լիքն էր զինուորներով: Ռուս սպան հայերին խուզարկեց զէնքի կողմից. Հայերն էլ սպաների դուրսը շարժելու համար յայտնում էին բաղայն լինելը: Ուզում էին հայերին դուրս քշել կայարանից, բայց աղերսանքով մնացին դիշերը և նրանց պահում էին հայ զինուորները:

Աւաւօտը պատահեց մի բաղայնի, եկաւ և Մեորոք քահանան, որ եկւոր հայերին չայով տաքացնելուց յետոյ առաջնորդեցին դէպի Սօլուլի՝ Ղորղանեանի տունը, ուր ճաշարանն էր և ուր արդէն կային դանազան վայրերից հաւաքուած փախստական հայեր աւելի քան 300 հոգի:

1906 թուի յունուարի 3-ին բացուեց երկաթուղին և յունուարի 15-ին այս բաղայնից ցրուեցին, ոմանք Հաւաքար կըռզէնցոց մօտ, ոմանք Շամշազին և ոմանք Գանձակ և այս տեղերից կրկին Բաղա:

**ԺԲ.**

Հափիմեանի եւ Բասուսուսեանի սպանութիւնը. Ալլահեար բեգը եւ Գրիգոր Բահանաւ. Վերջինիս համակը. Ալլահեար բեգի նամակը. Բաղայնի վնասների հաշուեցուցակը: Տխուր նամակ:

Վերը յիշատակուեց, որ Բաղայնի փախստական հայերի մի մասն համար ստեղծուեց էլի մի ընակալայր Բէշլիշեանդ գիւղում Ալլահեար բեգ Չիւլիզազարովի հովանաւորութեան տակ:

Այդտեղ հաւաքուեցին մինչև 60 հոգի երկսեռ հայեր: Նրանց պարտադրուելն էր Գրիգոր քահանայ Տէր Աբրահամեանցը, որի գերդաստանը տարագրութեան էր գնացել Շամշազինու և Ղազախի հայ գիւղերը: Բէշլիշեանդի հայերի մեծամասնութիւնը այն երկսեռ հայերն էին, որոնք գերի էին բռնուած մերձաւոր թուրք գիւղերում (Իրմաշլու, Կըննալու և այլն) և որոնց Գրիգոր քահանայի միջնորդութեամբ ազատել և ժողովել էր Ալլահեար բեգ Չիւլիզազարովը:

Չնայելով այդպիսի հոգոր պաշտպանին, որպիսին Ալլահեար բեգն էր, վերջինիս հովանաւորութեան ներքոյ եղած հայերը այնքան էլ ապահով չէին: Նրանցից Պետրոս Հաքիմեանց և Յոհաննէս Բաշտումեանց Ագըլանց Պետրոսի և Պլոմեկիանց Իվանի հետ քաղցած լինելով գնել էին ջրագացից մի քանի ջուռ այլուր և նրանից հաց թխելու համար ծածուկ մտել էին ծանօթ թուրքի տուն: Գիշեր ժամանակ բազլիկեցի երկու թուրք բռնութեամբ և նենդութեամբ ձերբակալում են հայերին և տանելով Չազեամ գետի ափը, սպանում են Հաքիմեանին և Բաստումեանցին, իսկ միւս երկուսը մի հրաշքով ազատուում են: Այս վրէժաւու թիւնը տեղի է ունեցել այն պատճառով, որ այդ սպանողների մե ազգակից սպանուել է Բաղայնի աւարի ժամանակ յայտնի չէ հայի գնտակից թէ թուրքի:

Այս բանը շատ զայրացրեց Չարդախլուի հայերին և աւելի ևս գրգռեց նրանց Ալլահեար բեգի գէմ, որ յանձն էր տուել պատսպարել բաղայնի թշուառ հայերին, բայց չէր ապահովել նրանց կեանքը: Թուրքերի յարձակումները ու սպանութիւնները հայերը համարում էին հետեանք ազգեցիկ մարդկանց թելադրութեան. լրագրերի \* թղթակիցները դովելով այդ առաջաւորները մի քանիսին և պախարակելով միւսներին՝ աւելի հաստատում էին հայերի կասկածը:

Չարդախլուի պաշտպան, լաւ կազմակերպուած ազգիկ խումբը չէր ուզում ներել Ալլահեար բեգին, որ հրաւերուելով Բաղա (դ. Գ.), միամտացրել էր բաղայնիներին, խոտացել էր իւր հովանաւորութեան տակ առնելով՝ անվտանգ պահել, բայց չէր կարողացել կատարել իւր խոտումը. նրա այս վարմանց համար և, «ասամն ընդ ասաման» սկզբունքով առաջնորդուելով՝ հայկական խումբը յաջող ըստ է էր որոնում պատժելու այդ և միւս բեգերին. և չէր թաղցնում իւր զիտաւորութիւնը. ուստի Ալլահեար բեգը ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն կայացնել

\* Արշալոյս, 1906 թ. № 2. Յունուարի 4-ը:

\*\* Նոր—Գար 1906 թ. № 1, Յունուարի 6-ը:

չարգախուրեցոց հետ և այդ նպատակի համար բէգը հաճութեամբ գերիներ էր փրկում, ժողովում էր նրանց իւր շուրջը, թողել էր տալիս Բաղայում ցրուած հայ սպանուածներին և Գրիգոր քահանային, իբրև կարևոր մարդու, պահում էր իւր մօտ և դեսպանութեամբ ուղարկում էր չարգախուրեցոց մօտ:

Չարգախուրեցիք չէին ցանկանում, որ փրկուած հայերը մնան Քեշիշքեանդում կամ միւս բէգերի մօտ և վայելեն նրանց մարդասիրութիւնն ու հովանաւորութիւնը: Թող դնան հայ գիւղերը, թող չարքաշ կեանք վարեն, միայն թէ չմնան բարեբար բէգերի մօտ: Եւ այն հայերը, որոնք շարունակում էին մնալ բէգերի մօտ, որոնց թւում և Տէր Գրիգորն ու նրա եղբայր Ղահրամանը և շատերը, կասկածելի էին համարում չարգախուրեցոց աչքում:

Երբ Գրիգոր քահանան դեսպանութեամբ եկաւ չարգախուրեցոց մօտ, նրանից պահանջեցին, որ վերագառնայ Ալլահեար բէգի մօտ և գուրս բերի Քեշիշքեանդից հայերին: Արդարև Ալլահեար բէգը չընդգծեց, արձակեց 56 հայերից 27-ին դէպի Ղուլլալի, 23-ին դէպի Չարգախուր, իսկ մինին միայն պատանդ պահեց իւր մօտ, այդ Գրիգոր քահանան էր: Վերջինս, իբրև բէգի դեսպան, պատմեց Չարգախուրում հասարակաց խորհրդի առաջ գործերի դրութիւնը և խնդրեց ներկայացուցիչներ ուղարկել Ալլահեար բէգի մօտ, փոխադարձ հաշտութիւն կայացնելու: Ընտրուեցին և գնացին Քեշիշքեանդ պ. Մանասեանցը և տանուաէր Պետրոս Բաբաջանեանցը. ուղեկցեց և Տէր Գրիգորը:

Սյդտեղ թէև առերես հաշտութիւն կայացաւ, բայց ոչ չարգախուրեցիք հանեցին իրանց սրտից սխը, և ոչ Ալլահեար բէգը փարատուեց սրտի ահից: Գրիգոր քահանան չափից գուրս աշխատում էր փոխադարձ հաշտութեան օգտին, որպէս զի իւր անձն ազատի և դնայ իւր գերդաստանի մօտ: Բայց Ալլահեար բէգը յամառութեամբ պահում էր նրան: Ուղարկեց քահանային Բաղայի աւերակները, որ ցրել զխակները ժողովի և քրիստոնէական ծիսով թաղի: Սյդ էլ կատարեց քահանան, բայց էլի չկարողացաւ ազատութիւն գտնել: Քանիցս քահանան աղերսանքով, մինչև անգամ արտատուքն աչքերին զիմեց բէգի գթութեանը, խնդրեց ազատութիւն, բայց բէգը մնաց անզրդուելի: «Մինչև անգամ լաց ու սուգ էի անում, որ ազատի (բէգը), շեղաւ», գրում է հեղինակին քահանան իւր նամակի մէջ 1907 թուի յունիսի 18-ին:

Սնտանելի էր քահանայի դրութիւնը: Մի կողմից գերդաստանի անյայտութիւնը տարագրութեան մէջ, միւս կողմից իւր կաշկանդուած կացութիւնը բէգի մօտ, երբորդ կողմից այն

յամառ կասկածը, որ ունէին նրա վերայ Չարգախուրի և այլ տեղի հայերը: Իսկ Ալլահեար բէգը մեծայոյս էր, որ քահանայի միջնորդութեամբ ինքն իրան կարող է արդարացնել Քանձակի ու Թիֆլիզի հասարակութիւնների առաջ, որոնց արգէն լրագրութիւնից յայտնի էր նրա կատարած քաղաքականութիւնը:

Սյս ուղղութեամբ Ալլահեար բէգը վերջին փորձը արաւ: Նա դերդաստանով հանդերձ առժամանակ տեղափոխուելով Թիֆլիզ՝ տարաւ իւր հետ և Գրիգոր քահանային, որ սա տեսակցի տեղական հայ և ռուս խմբագրութիւնների հետ և անձամբ վկայի բէգի աղնութիւնը, մարդասիրութիւնը և գթասրտութիւնը: Սահայն քահանան չլստահացաւ այդ անել: Միայն «Նոր-Գարն» մէջ 1906 թուականի յունուարի 26-ին № 1 նա հրատարակեց Բաղայի աւերման մասին նամակը, որի մէջ գովասանք չէր խնայել Զիւլգադարով բէգերի և առանձնապէս Ալլահեար բէգի մասին:

Նա ի միջի այլոց գրում է.

«... Բէգը (Ալլահեար) գնում է Չարգախուր կայսրան, հաւաքում է բոլոր շրջակայ բնակչութեան միջի խշտաններին և բէգերին, խնդրում է չլռուել հայերի հետ և մանաւանդ Բաղա գիւղի վերայ չյարձակուել. բոլորն էլ երդում են, խոտանալով որ Բաղա գիւղի վերայ չեն գնալ: Միայն խնդրում են, որ բէգը գնայ Քանձակ հայերին և մուսուլմաններին հաշտեցնելու. Զիւլգադարովը հաւատալով իւր կրօնակիցների երգմանը, գնում է Քանձակ: ... Միւս օրը, ամսի (նոյեմբեր 5 թ.) 23 էլի շրջապատեցին (Բաղա) և մի քանի զրօշակ ձեռքներին՝ սկսեցին հրացանածղութիւն. ... Սյդ գիշերը (նոյեմբ. 23) հազիւ կարողացայ 500 հորի ազատել և փախցնել դէպի Համիզ բէգ, Մեհրալի բէգ և Ադիլ բէգ Զիւլգադարովների տուն: Սյտեղ մեղ սիրով ընդունեցին. տեսնելով թշուառներին՝ դրութիւնը, նրանք էլ էին արտատուք թափում մեզ հետ: Յիշեալ Զիւլգադարովները մորթեցին երկու պարարտ կով և կերակրեցին բազմաթիւ ժողովուրդին:

«... Միւս կողմից գուրս եկաւ Ալլահեար բէգ Զիւլգադարովը մի քանի վերաւոր կանանց հետ՝ զրկած մի 15 օրական մանուկ, որի մայրը չկար: Բարեսիրտ բէգերը սրանց դրութիւնը տեսնելով՝ լաց էին լինում կանանց հետ: Մի քանի վերաւոր կանանց և մանկանը տարաւ Ալլահեար բէգը, իսկ 200 հոգուն տարաւ Համիզ բէգը: Մի քանի օր նրանց լաւ կերակրելուց յետոյ՝ ուղարկեցին Շամշաղինի վիճակի Ղուլլալի գիւղը... Ալլահեար բէգ Զիւլգադարովը իւր տարած մանկանը յանձնեց իւր կնոջը և պատուիրեց լաւ պահել, մինչև մօրը

գանի: Բարեխիղճ խանութը սկսեց կոյի կաթով պահել մինչև 16 օր: Պէտք էր ատենել, թե բէգի աղջիկներն ինչպէս էին մանկանը գրկած համբուրում, մանկանն անուանեցին Կարապետ: Վերաւոր կանանց վերքերն ինքը խանութն էր լուսնում և իւր աղջիկները դեղ էին դնում և փաթաթում: Երեք շաբաթ պահելուց յետոյ նոր շորեր հագցրին և ուղարկեցին Չարգախու գիւղը\*:

Այն, ինչ որ Գրիգոր քահանան յիշատակում է իւր նամակի այս կտորները մէջ, արդէն վերը բացատրուած է պատմութեան ընթացքում: Տեղեկութիւնները հաւաքուած են ընտրովին հիւրիչ աղբիւրներից և ընթերցողին կմնայ համեմատել այս աղբիւրները Գրիգոր քահանայի ատճենների հետ:

Այս նիւթի վերաբերութեամբ մենք ունենք և այլ բացատրութիւններ: Գրանք իւր, Ալլահեար բէգի խօսքերն են, որ ապագրուած են նրա նշանաւոր նամակի մէջ Тифлисский Листок-ը ուղևորէն թերթում հրատարակուած և սրի թարգմանութիւնն աճա այս է.

«Պարոն խմբագիր.

Новое Обозрѣніе թերթից արտապուած էր Тифл. Листок-ի 1906 թուի № 18-ում, թէ ամսի 21-ին հայերից մի պատգամաւորութիւն է ներկայացել Փոխարքայի գլխուորական մասի օգնական գէներալ-լէյտենանտ Մալամային և նրան ներկայացրել է Ղազարի գաւառի Գարվանսարայ գիւղից, յունուարի 20-ին ստացած մի հեռագիր: Հեռագրի մէջ ասուած է, որ Իննուաւուրց մի քանի թուրք գերի են հայերի մօտ, իսկ կալուածատէր Ալլահեար բէգ Չիլիգաղարովի մօտ գերի են քահանայ աէր Աբրահամեանցը և ազրոնոմ\*\* Գանիէլեանցը, գիւղացի մտաւորի Հասան Զիլիգաղարովի մօտ գերի են Աւետիս Ասնեանցը իւր գերդաստանով 5 հոգուց և Գրիգոր Աբրահամեանցը նոյնպէս իւր գերդաստանով: Պատգամաւորները խնդրել են միջոցներ գործ դնել ազատել գերիներին, այլ և փոխանակել գերիներին:

Ինչպէս եմ այս իմ նամակը ապագրէք մօտաւոր համարում գործը լուսաբանելու նպատակով:

«Բագա դի զն աւերելուց յետոյ Չիլիգաղարով եղբայրների տանը հաւաքուեցին աւելի քան 1200 բազայի փախստականներ, որոնց մէջն էին քահանայք Տէր Աբրահամեանցը, Տէր Յարութիւնեանցը, Ասուրցի Աստուածատուրեանցը, Ղահրաման աէր Աբրահամեանցը, Սարգիս Գրիգորեանցը և Ղահրա-

\* Նոր-Պար 1906 թ. յունուարի 6, № 4.  
\*\* Ղահրաման եւ ոչ Ազրոնոմ (գիւղատնտես), Ծանօթ. հեղինակի Տես նաեւ Մշակ № 13 յունուարի 22—1906 թ. հետադիր:

ման Գանիէլեանց: Մի քանի օրից յետոյ, երբ մենք ուղարկում էինք հայ փախստականներին Ղուլալի հայ գիւղը, քահանայ աէր Յարութիւնեանցը գնաց փախստականներին հետ, իսկ յիշեալներից միւսները չկամեցան դնալ այնտեղ: Աւսուրցի Աստուածատուրեանցը, Ղահրաման Տէր Աբրահամեանցը և Սարգիս Գրիգորեանցը ցանկացան դնալ Գանձակ, որովհետեւ առաջինի ծնողներն այնտեղ են, իսկ միւս երկուքը ունեն այնտեղ առատակամ գործեր: Արովհետեւ ժամանակն անհանգիստ էր և նրանց ուղարկելը վտանգաւոր, ուստի առաջուց նամակ ուղարկեցինք Գանձակ նրանց ծնողներին, որ անհանգիստ չլինեն: Գրանից յետոյ երկաթուղու գործադուլն եղաւ, օրից սակայն ունեց բաւական ժամանակ մնացին մեզ մօտ և ապա յաջող ժամանակ նրանք ուղարկուեցին Գանձակ յուսույի պահպանութեան տակ: Իսկ քահանայ աէր Աբրահամեանցը իւր գերդաստանն ուղարկելով Ղուլալի, ինքը մնաց իմ տանն այն նպատակով, որ թաղի Բաղայի սպանուածների մարմինները, որոնք և գանի այն հայ փախստականներին, որոնք թաղուեւել էին անտառի խորքերում, այլև գնաց Չարգախու, որ բնակում էին հայ-թրքական ընդհարումների զլխաւոր սարքողները, հեղինակաւոր կերպով նրանց քարոզելու համար, որ գոնէ ապագայում նոր ընդհարումներ չյառաջացնեն, որ երկու կողմի համար էլ կորստաւոր է:

«Այս նպատակի համար Տէր Աբրահամեանցը երեք անգամ գնաց Չարգախու, բայց տարաբաղաբար նրա աշխատանքը կարաւ իջուր: Նրա հովուական խօսքը չուսնեցաւ կարևոր ներգործութիւն և հարկաւոր ազդեցութիւն: Սրանից յետոյ թուրքերի և հայերի յարաբերութիւնը Ղազարի գաւառում խիստ լարուեց, ուստի նա չհարողացաւ դնալ Ղուլալի և մնաց ինձ մօտ մինչև յունուարի 25-ը. այժմ նա Թիֆլիզում է և խոտացաւ մտնել խմբագրատուն և մանրամասը բացատրել, թէ ես նրան ինչպէս գերի եմ պահել: Իսկ Ղահրաման (և ոչ Ազրանոմ, որպէս ապագրուած էր լրագրում) Գանիէլեանցը բնակում էր ինձ մօտ ոչ միայնակ, այլ 7 հոգի գերդաստանով: Ես նրանց ուղարկեցի Չարգախու, որտեղից նրանք մի քանի օրից յետոյ նորից վերագարձան ինձ մօտ, բերելով իրանց հետ և 8 հոգի բազայի համադրելուցները: Թէ ինչն նրանք վերագարձան ինձ մօտ և թէ ինչպէս էին վարուել նրանց հետ չարգախուեցի եղբայրակիցները, թող ասեն իրանք, թէ և նրանց վերագառնալն ինձ մօտ ինքն ըստ ինքեան ապացոյց է: Գանիէլեանցի հետ եկած 8 մարդկանց, նրանց խնդրելով, ես ուղարկեցի Ղուլալի: Իսկ Գանիէլեանցն էւր գերդաստանով բնակում

է ինձ մօտ մինչև այժմ: Մաշադի Հասան Չուլգադարով անունով մարդ չկայ ամբողջ Անդրկովկասում, ուրեմն չէին կարող լինել նրա մօտ գերի հայեր, ինչպէս հաղորդուած է Тиф. Листокъ № 18 թերթում:

«Վերոյիշեալ տողերից երևում է, որ ինձ մօտ ոչ եղել են և ոչ էլ կան գերի հայեր և որքան ճշմարիտ են այս հաղորդածներս և թէ եղբարք Զիւլգադարովները մեր աստիճանի վերաբերմունք ունէին դէպի փախտական բազայի հայերը, ես դիմում եմ այս նամակի մէջ յիշուած հայերի խղճմանքին և արժանապատուութեանը և խնդրում եմ նրանց պատասխանել այս հարցերին ապագութեամբ: Եւ որպէս զի յիշեալ անձնաւորութիւնները միջոց և կարողութիւն ունենան տալ անհրաժեշտ պատասխան, խնդրում եմ անդրկովկասեան լրագրների, մանաւանդ հայ լրագրների խմբագրութիւններից արտասպել սոյն այս նամակս:

«Բոլոր ասածներէնս լրագրիչ ընթերցողները և Тифлисский Листокъ-ի խմբագրութիւնը հեշտ կարող են համոզուել, որ ոչ ինձ մօտ և ոչ իմ եղբայրների մօտ գերի չեն եղել ոչ քահանաներ, ոչ գիւղատնտեսներ, այլ սրա մէջ յիշուած անձնաւորութիւնները և նրանց գերդաստանները գտել էին և ոմանք նրանցից մինչև այժմ էլ դանում են ապաստարան և կարելոյն չափ պաշտպանութիւն իմ յարկի տակ:

«Ժամանակ է վերջ տալ արիւնալից կռիւններն: Կին ամուսիններին, մայրերին, երեխանց բաւական է դառն արատաւութեամբ: Նրանց արդարացի արտունջը անփոխարինելի կորուստների պատճառով աղաղակում են հասարակութեանը դնել իւր հեղինակաւոր արգելքը Կովկասի երկու ազգութիւնների արիւնոտ կռիւր այլ ևս շարունակելու: Փոխաբայի մայրաքաղաքի հասարակաց կարծիքը պարտաւոր է իւր վրայ առնել արիւնհեղութիւնը դադարեցնելու սկզբնաւորութիւնը: Արիւնահեղ ընդհարումները յառաջ բերող պատճառները բացատրելու համար դումարած հայերի ու մուսուլմանների լիազօրների համաձայնիւր յարմար առիթ է դրա համար: Անհրաժեշտ է մայրաքաղաքի հասարակութեան միացումը նրա կարծիքի և ցանկութիւնների արտայայտելի—մամուլի հետ և իշխանաւոր յայտնել երկու ազգութիւնների լիազօրներին, թէ ժամանակ է կանգ առնել արիւն թափելու, ջնջելու ամենաընտիր մարդկանց, կործանելու մի շարք սերունդներով ձեռք բերած կարողութիւնը: Հասել է ժամանակը ձեռք դարկել ուրիշ գործերի, զեմտովային, ընտրողական, որ նոյնպէս շատ կարեւոր է, եթէ չառնեք՝ թէ ամենազլխաւորն է բժշկելու այն ծանր վէրերը, որ հասցրուած

են ամբողջ փոխաբայութեանը քաղաքական և ցեղական խառնակութիւններով»:

«Ալլահեար բէգ Զիւլգադարով»:

Եթէ ընթերցողն ուշի ուշով հետեւել է նկարագրութեանս ընտան ընթացքին, եթէ մտաբերում է այն յարաբերութիւնը, որ ունեցել է Ալլահեար բէգը Բաղայի աւերումից առաջ, աւերման ժամանակ և յետոյ, նա կտեսնէ, թէ ինչ տարբերութիւն կայ բէգի նամակի բովանդակութեան և իսկական փաստերի համեմատութեան մէջ: Երկասիրութեանս հեղինակը չէ ցանկանում համեմատական քննութեան ենթարկել Պ. Զիւլգադարովի նամակի բովանդակութիւնը, որովհետեւ նա աշխատել է լինել անկողմնապահ, աքնել է դուրս բերել միայն փաստեր և ապա կարելոյն չափ լուսաբանել սեղական բէգերի գրական և բացասական յարաբերութիւնները թուրք—հայկական ընդհարումների ժամանակ Բաղայի սահմանում:

Ալլահեար բէգի վերը բերած նամակի կողքին աւելորդ չէ դնել նոյն այդ բէգի և նրա եղբոր Մեհրալի բէգի ձառք, որ պարունները Ղաղախի գաւառապետ Առնոյի ընտանաւորում, 1905 թուի սեպտեմբերի 11-ին ճաշկերութեան և կենացների ժամանակ, Ղաղախի աւերումից առաջ, արտատանել են, թէ «իրանցում ամեն ինչ խաղաղ է և եթէ իրանք չցանկանան, չի կարող թուրքերի կողմից ընդհարում առաջանալ»\*:

Իսկ յետոյ, ընդհարումները արդէն տեղի ունեցան: Եզրահացութիւն . . .

Սորանով վերջացնում եմ Բաղա գիւղի աւերման պատմութիւնը և նրա ժողովրդի ցրել գալը: Հետեւել տարին, այն է 1906 թուականի դարնանը հալածուած, ամէն բանից զրկուած ժողովրդի մեծ մասը սակաւ առ սակաւ սկսեց վերագառնալ աւերուած հայրենիքը՝ կրկին նորոգելու այն. ժողովրդի մի փոքր մասը միայն մնաց ցանուցիւր հայ գիւղերում:

Կովկասի բարձր իշխանութեան կարգադրութեամբ հաշտարար միջնորդ Իվան Պետրովը 1906 թուին Ապրիլի 10—25-ը Բաղայի աւերակներում սկսեց ցուցակադրել բոլոր գիւղի կրած վնասի քանակութիւնը, որ ինչպէս յիշատակուած է Ա. գլխում, կազմում է երկու միլիոն երկու հարիւր երեք հարիւրը: Ցուցակագրութիւնը կազմելու համար Պ. Պետրովը գանազան հայ գիւղերից հաւաքել էր մօտ 150 բաղայի հայեր և

\* Արշալոյս № 44—1905 թիւ. սեպտ. 46. Նամ. 2. քահ. Ապրեսանցի:

*M P*

բազմաթիւ թուրքեր Իրմաշուէց, Խըննալից, Վերին և Ներքին Այվուլից, Թաթալուլից և Կոյլասարից:

Բաղայի աւերումից յետոյ այս առաջին անգամն էր, որ երկու զբացի թարմ ոսոխները հանդիպեցին իրար սոյն այս թուրքերի ձեռքով քարուքանդ արած, աւերակ դարձրած գիւղում: Ծանօթ թուրքերը չքմեղ ձեանալով մօտենում էին հայերին և արդարանում ատելով «Մարդիմազարն էօլը Ալլահ երթըսըն» (վատ մարդկանց տունը Աստուած քանդի):

Իւրաքանչիւր երեկոյ թուրքերը վերագառնում էին իրանց գիւղերը, իսկ հայերը մնում էին իրանց աւերակներում: Ոչինչ չունէին ուտելու: Քանձակից ստացուած մի կտոր պլեւրից հայերը խմոր էին շողախում պաղ ջրով (եռացնելու աման չկար) և երկաթէ տանիքից մնացած թիթեղի վերայ և կամ կտարած կաւէ ամանի յատակում թխում:

Որովհետև հայերը Բաղայի շնջումից յետոյ առաջին անգամն էին եկել այստեղ, ուստի ձորերում և խորշերում ցանուցիւր եղած սպանուածների և մեռածների մարմինները ժողովեցին ամփոփելու: Գիտիներից, փափուկ մասերը թաւուներէ և դազանների կերակուր դառնալով, միայն կմախքն էր մնացել: Մեծ դժուարութեամբ էին ճանաչում հանգուցեալներին: Որ և է շորի կտոր, գուլբա կամ ոտնաման նշան էր լինում ճանաչելու: Ճանաչուածներին թաղում էին առանձին, իսկ չճանաչուածներին թաղեցին միասին մի շերմի մէջ: Թաղման ակուր հանդէսը կատարուեց 1906 թուի Ապրիլի 14-ին:

Գերեզմանատան մէջ նկատելի էին շատ գերեզմաններ բացած և կրկին ծածկած. յարձակման սպասելու օրերում ոմանք բազացիք աշխատում էին թաղցնել գետնի տակ իրեղէններ: Սրանց թուում Սիմոն Ազրիեանցը իւր խանութի ապրանքը կապոցներով իբրև հանգուցեալ թաղել էր գերեզմանատանում, ապա երբ ծածուկ հանել է, թուրքերը նկատել են և ձեռքիցը խլել: Սրանից յետոյ արդէն սկսել են ըօրենի դառնալ և գերեզմանները քանդել: Միայն դիակներ գանելով՝ նորից ծածկել են:

### Վ Ե Ր Ջ Ա Ռ Ա Ն

Մինչև այս կէտը խօսուեց Բաղա գիւղի միմիայն աւերման և բնակչութեան ցրիւ գալու մասին, բայց երկբայել չէ կարելի, որ հալածուած ժողովուրդը նորից կհաւաքուի իւր հին գիւղը, նորից կաքնի, կձգնի, կլարի իւր սպառուած ուժերը և տարիներ ընթացքում նորից կշէնացնի իւր հայրենիքն ու

ճննդավայրը: Սակայն հարկաւոր չէ գոհանալ, մխիթարուել միայն սրանով:

Առաջին անգամը չէ, որ Բաղան ենթարկւում է աւերման և աղէտի: Եթէ Բաղան գոյութիւն ունէր տասներեքերորդ դարում, նա իւր հարեան Շամբօրի հետ միանուազ պէտք է ենթարկուած լինէր աւերման թաթարների ասպատակութեան ժամանակ\*: Նրանից յետոյ էլ պէտք է աւերուէր Կովկասեան լեռնական հրոսակների ձեռքով, նոյնպէս և Աղամամազ խանի ժամանակ:

Աւանդութիւնից և անգամ ժամանակակից ականատեսների ընթանացի վկայութիւններից յայտնի է, որ 1826 թուի դարնանք, Ռուս—Պարսկական պատերազմի սկզբում թշուառ Բաղան էլի ենթարկուել է Երևանի Սարգար՝ Յիւսէին խանի սարքազների ասպատակութեան: Աւերուել է գիւղը, բնակիչներին շատերը սպանուել են, շատերը ցրուել են, կանայք, աղջկուներ և երեխայք գերի են տարուել: Բաղացի Բեղաս մականուանեալ Յակոբ քահանան, երկաթէ շղթան վիզը ձգած (գերի գնացողի նշան) մի ամբողջ տարի մուրացկանութեամբ ժողոված գումարով հազիւ կարողացել է ազատել գերութիւնից իւր կնոջը և երկու դուստրներին:

1826 թուի աւերումը և սպասելի էր և բնական, որովհետև գիւղը մօտիկ էր պատերազմի դաշտին և տեղական թուրք տարրը ուղեցոյց և առաջնորդ էր սարքազներին:

Գրանից 80 տարի յետոյ, 1905 թուին Բաղան նորից ենթարկուեց աւերման, այն էլ ոչ թէ օտարհպատակ սարքազների ձեռքով, պատերազմի միջոցին, այլ զբացի աւաններից: Ինչպէս 80 տարի յետոյ, նոյնպէս և 80 տարի առաջ գիւղի հարստութիւնը կողոպտուեց, մարդիկ սպանուեցին, իգական սեռը ու մանուկները գերի գնացին: Աղէտները Բաղային խրատական չեղան: 80 տարի առաջ և յետոյ ինքնաճանաչութիւնից զուրկ ժողովուրդը մնաց նոյնը. նա 26 թուին զէնքի փոխարէն հսկումն էր կատարում եկեղեցում Բեղատ տէր Յակոբի ձեռքով: Նոյն հսկումը կատարուեց և 1905 թուականին:

Չունեցաւ այդ ժողովուրդը այնպիսի ինքնաճանաչութիւն և հասարակաց կազմակերպութիւն, որ անակնկալ վտանգի ժամանակ կարողանար ինքն իրան պաշտպանել կամ եթէ մեռնելու էր, թող մեռնէր զէնքը ձեռքին... Ինքնապաշտպանութեան գործում 26 թուի Բաղացիները ապաւինել էին միայն Աստուծուն, իսկ 1905 թուի Բաղացիները ապաւինել էին և Աստուծուն

\* Կիրակոս վարդապետ Գանձակեցի. Վենետիկ 1865. զԼ. ԻԱ. էջ 128»

և Ալլահեար բէգ Չիւլգազարովին . . երկու անգամն էլ կորստեան մասնուեցին:

Բաղային զրացի Չարդախլու գիւղի հայերը 1905 թուի յարձակումները ժամանակ պաշտում էին Աստուծուն, դիտէին և Ալլահեար բէգի տեղը, բայց նրանց ապաւէնն էր «սահման քաջաց՝ զէն իւրեանց» և կորստեան չմասնուեցին:

1800 թուականին չէր կարելի գուշակել Բաղայի 26 թուի աւերումն, ինչպէս վերջին թուականին անկարելի էր գուշակել 1905 թուի աղէտը: Հետևաբար չէ կարելի գուշակել և ապագայի արհաւիրքը: Սակայն մի հասարակութիւն, իբրև մի ամբողջութիւն և կազմուած մարդկային էակներէց և ոչ անբան անասուններէց, պարտաւոր է իւր գոյութիւնը, գոյքը և պատիւը պահել և պաշտպանել իւր սեփական միջոցներով և իւր հաւաքական հասարակական ոյժերով, որի համար էլ հարկաւոր է կրթել՝ նախապատրաստել սերունդներ՝ գործելու այդ ուղղութեամբ:

Բայց որովհետև երկարագոյն միջոցներում սերունդները կարողանում են մոռանալ մըրկալից անցեալը, ուստի սոյն աշխատութիւնս իւր բովանդակութեամբ Բաղայի ժողովրդի համար թող լինի յուշարար:





Հայաստանի Ազգային գրադարան



NL0425550

16828

